19 հունիսի, 2017թ. *Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի (ՀԱՊԽ) գրասենյակ*

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

ՄՖԿ Ներդրումները Լիդիան Ինթերնեշնլ, Արմենիա ընկերության մեջ

(Նախագծեր թիվ 25924 և թիվ 27657)

Բողոքներ 01 և 02

ՀԱՊԽ-ի Հետաքննությունը ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական կատարողականության շուրջը՝ կապված Լիդիան Ինթերնեշնլ Արմենիա (Ամուլսար Գոլդ Փրոջեքտ) նախագծի մեջ նրա կատարած ներդրումների հետ

Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի գրասենյակը՝
Համաշխարհային բանկի խմբի անդամներ՝

Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ-ի) և

Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ-ի) համար

ՀԱՊԽ-ի մասին

ՀԱՊԽ-ի առաքելությունն է՝ ծառայել որպես արդարացի, վստահելի և արդյունավետ, անկախ ռեսուրսային մեխանիզմ, որի նպատակն է բարելավել ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի բնապահպանական և սոցիալական հաշվետվողականությունը:

ՀԱՊԽ գործառույթը (Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի գրասենյակը) անկախ պաշտոն է, որն անմիջականորեն զեկուցում է Համաշխարհային բանկի խմբի Նախագահին: ՀԱՊԽ-ը վերաքննում է Համաշխարհային բանկի խմբի երկու մասնավոր ճյուղերի՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ), նախաձեռնած արդյունաբերական շինարարական նախագծերից ազդակիր համայնքների բողոքները:

ՀԱՊԽ-ը իր համապատասխանության ապահովման գործառույթով հետաքննում է ՄՖԿ/ԲՆԵԳ-ի բնապահպանական և սոցիալական կատարողականությունը, մասնավորապես, խնդրահարույց կամ դյուրազգաց նախագծերի առնչությամբ, որպեսզի երաշխավորի ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ներգրավման համար քաղաքականությունների, չափորոշիչների, ուղեցույցների, ընթացակարգերի, և պայմանների համապատասխանությունը՝ նպատակ ունենալով բարելավել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի բնապահպանական և սոցիալական կատարողականությունը:

ՀԱՊԽ-ի մասին ավելի ընդարձակ տեղեկույթի համար կարող եք այցելել.

www.cao-ombudsman.org.

Բովանդակություն

Հապավումները և համառոտագրությունները 6

Համառոտ ամփոփագիր 7

ՀԱՊԽ-ի Համապատասխանության գործընթացի ամփոփումը 12

I. Լիդիան Ինթերնեշնլ ընկերության մեջ ՄՖԿ-ի ներդրումների նախապատմությունը 13

A. ՄՖԿ-ի Ներդրումները Լիդիան Ինթերնեշնլ ընկերության մեջ..... 13

B. ՄՖԿ-ի Վաղ Բաժնետիրական կապիտալի բիզնեսը 14

II. ՀԱՊԽ-ի Համապատասխանության Հետաքննության նախապատմությունը.....16

A. Բողոքները 16

B. ՀԱՊԽ Համապատասխանության գմահատումները 17

C. Համապատասխանության հետաքննության մեթոդաբանությունը 18

D. ՄՖԿ-ի կիրառելի քաղաքականությունները, կատարողականության չափորոշիչները և ընթացակարգերը 19

III. Բողոքներում բարձրացված հարցերը.....21

A. ՄՖԿ Քաղաքականությունները և գործընթացները 21

B. Բնապահպանական հարցերը և ԲՍԱԳ-ի գործընթացում վերլուծության որակը..... 21

C. Սոցիալական հարցերը, ԲՍԱԳ-ի և խոհրդակցության գործընթացների որակը..... 22

IV. Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծի նկարագրությունը 23

V. ՀԱՊԽ-ի դիտարկումները Գնդեվազ համայնքի մասին.....27

VI. ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական գնահատումը և Լիդիան Ինթերնեշնլ/Ամուլսար նախագծի վերահսկումը 30

A. ՄՖԿ-ի կողմից նախագծի Բնապահպանական և սոցիալական վերաքննությունը 31

B. Նախագծի բնապահպանական և սոցիալական վերահսկումը ՄՖԿ-ի կողմից..... 36

VII. Բողոքներում բարձրացված բնապահպանական և սոցիալական հարցերի վերլուծությունը 42

A. Բողոքներում բարձրացված բնապահպանական հարցերի վերլուծությունը 42

1. Ամուլսարում հնարավոր ապագա բնապահպանական ազդեցությունների գնահատումը 42

2. Կենսաբազմազանությունը և Հայաստանի “Կարմիր գրքում” գրանցված բուսական և կենդանական տեսակների ներկայությունը..... 56

B. Սոցիալական հարցերի վերլուծությունը 62

1. Հողի օտարումը և կենսապահովման միջոցների վերականգնումը..... 63
2. Ազդեցությունները Ջերմուկի տուրիզմի վրա 69
3. Գնդեվազ գյուղի վրա ազդեցությունների գնահատման համապատասխանությունը 75
4. Խորհրդակցության և մասնակցության գործընթացները, Մտահոգ շահագրգիռ կողմերի համար հանրային լսումների մատչելիությունը և Բողոքների գրանցման և հասցեագրման մակարդակը 85

VII. Եզրակացությունը և դիտարկումները 92

Հավելված A. ՄՖԿ-ի ներդրումները Լիդիան Ինթերնեշնլ Լթդ. ընկերության մեջ.....96

Հավելված B. ՀԱՊԽ-ի Հետաքննության տեխնիկատնտեսական լիազորությունները 97

Հավելված C. Նախագծի ժամանակացույցը 99

Հավելված D. ՀԱՊԽ-ի բացահայտումների ամփոփումը 102

Հապավումները և համառոտագրությունները

Հապավումը	Բացատրությունը
ՄՏԶ	Մշտադիտարկման տարեկան զեկուցագիր
ՕԴՈՐԱՏԾ	Օդի որակի, աղմուկի և տատանումների ծրագիր
ԼՀՕ	Լայն հանրային օժանդակություն
ՇՏՀՈՒ	Շահութաբերության տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն
ԿԿԾ	Կենսաբազմազանության կառավարման ծրագիր
ԴԱՊ	Դատարկ ապարների պոչամբար
ՀԱՊԽ	Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի գրասենյակ (ՄՖԿ և ԲՆԵԳ)
ՀԶԾ	Համայնքային զարգացման ծրագիր
ՀԱԱԱԾ	Համայնքի առողջապահության, անվտանգության և ապահովության ծրագիր
ՀԿՀ	Համայնքի հետ կապի հանձնաժողով
ՀԿՊ	Համայնքի հետ կապի պատասխանատու
Բ&Ս	Բնապահպանական և սոցիալական
ԲԱԳ	Բնապահպանական ազդեցության գնահատում (ազգային մակարդակի վրա)
ԲՄԾ	Բնապահպանական մշտադիտարկման ծրագիր
ԲՍԳԾ	Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ
ԲՍՎԱ	Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում
ԲՍՎԸ	Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգեր
ԼՄԱԳ	Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպ
ՀՕՀՈՒ	Հողի օտարման և հատուցման ուղեցույց
ԿՏՀ	Կույտային տարալվացման հարթակ
ԱԱԲՀ	Առողջապահություն, անվտանգություն, բնապահպանություն և համայնք
ԱԲՍԽ	Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՀՄԿՄՎԾ	Հողի մատչելիության և կենսապահովման միջոցների վերականգնման ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԽՀԾ	Հանրային խորհրդակցության և հրապարակման ծրագիր
ԿՀ	Կատարողականության չափորոշիչները
ՇԿՆԾ	Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը
ԱՆԱ	Առաջարկված ներդրումի ամփոփումը
ՏՏԼ	Տեխնիկատնտեսական լիազորությունները
ԱԷԲ	Արժեքավոր էկոհամակարգի բաղադրիչները

Համառոտ ամփոփագիր

Նախապատմությունը

Այս զեկուցագիրը ամփոփում է ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննության վերլուծությունը և բացահայտումները՝ Լիդիան Ինթերնեշնլ Լթդ. (այսուհետ "ընկերություն") ընկերության և Հայաստանի մայրաքաղաք Երևանից 170 կմ դեպի հարավ գտնվող նրա Ամուլսար Գոլդ Փրոջեքտ, ոսկու հանքահանության նախագծի մեջ՝ ՄՖԿ-ի արած ներդրումների շուրջը:

ՄՖԿ-ն առաջին անգամ ներդրում արեց ընկերության մեջ 2007թ. Կոսովոյում, Հայաստանում և Թուրքիայում՝ Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսների հողային տիրույթներում երկրախուզական գործողությունները և տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները ֆինանսավորելու նպատակով: Այդ նախնական ներդրումին հաջորդեցին տասնմեկ լրացուցիչ ներդրումներ՝ 2008-ից մինչև 2015թթ. ժամանակահատվածում: ՄՖԿ-ն ընդհանուր առմամբ 2007թ.-ից ի վեր արել է $16.4 միլիոն դոլարի ներդրում և բաժնետիրական կապիտալ է ունեցել ընկերությունում մինչև 2017թ. մայիս ամիսը: 2017թ. մայիսին ՄՖԿ-ն վաճառեց իր բոլոր բաժինները և այժմ այլևս ընկերության մեջ ներդրում չունի: 2015թ. դեկտեմբերին ընկերությունը հայտարարեց, որ իր Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծի համար համաձայնության է եկել երկու հիմնական վարկատուների հետ՝ $325 միլիոն դոլարի շինարարական փաթեթի ներդրումային ծրագրի շուրջ: Ամուլսարի շինարարության ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը մոտավորապես կազմում է $395 միլիոն դոլար:

Այս զեկուցագիրն ավարտելու պահին Ամուլսարի հանքի շինարարությունը արդեն սկսվել էր: ՀԱՊԽ-ի հետաքննության գործընթացը, սակայն, վերաբերում է 2007թ.-ից 2016թ ժամանակահատվածում, շինարարության սկսվելուց ոչ շատ առաջ, ՄՖԿ-ի կատարած ներդրումներին:

ՄՖԿ-ի ներդրումը Լիդիան ընկերության մեջ համարվում է վաղ բաժնետիրական կապիտալի ներդրում, քանի որ ՄՖԿ-ն ընկերության բաժնետիրական կապիտալը գնել էր մինչև ընկերության կողմից Ամուլսարի արտոնագրված տարածքում առկա ռեսուրսի բացահայտումը: Հանքային արդյունաբերության նախագծերի զարգացման վաղ փուլերում ՄՖԿ-ի մասնակցության հայտարարված նպատակի մեջ մտնում է ընկերությունների բնապահպանական և սոցիալական (Բ&Ս) կատարողականության վրա բարերար կամ դրական ազդեցություն թողնելու նպատակը, հատկապես, երբ ընկերություններն աշխատում են այնպիսի երկրներում, որտեղ Բ&Ս ազդեցությունների կառավարումը բարդ է կանոնակարգման տեսակետից: ՄՖԿ-ը շեշտադրում է այս ենթատեքստում, որպես երկարաժամկետ գործընկեր, իր ներկրած արժեքը:

Համապատասխանության հետաքննությունը նախաձեռնվեց ի պատասխան երկու բողոքների, որոնք ներկայացվել էին 2014թ. ապրիլ և հուլիս ամիսներին հանքի շրջակայքում բնակվող համայնքների անդամների կողմից, տեղական և ազգային ՀԿ-ների օժանդակությամբ: Բողոքները բարձրացրեցին բնապահպանական և սոցիալական մտահոգությունների մի մեծ տեսականի, ներառյալ այնպիսի մտահոգություններ, որոնք վերաբերում են նախագծի ապագա բնապահպանական ազդեցություններին, ինչպես օրինակ ջրի, փոշու և սեյսմիկության հետ

կապված ռիսկերին, ճառագայթման ռիսկերին, կենսաբազմազանությանը սպառնացող ռիսկերին, ինչպես նաև սոցիալական ազդեցությունների հետ առնչվող ռիսկերին՝ օրինակ հողի օտարման գործընթացի համապատասխանությունը, մոտակայքում գտնվող, Ջերմուկ քաղաքի տուրիստական արդյունաբերության վրա հնարավոր ազդեցությունները, սոցիալական ազդեցությունները Գնդեվազ գյուղի համայնքի վրա (ներառյալ առողջապահությունը, կենսապահովման միջոցները, համայնքի բարօրությունը), և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության և նրանց մասնակցության ապահովման կապակցությամբ ծագած մտահոգությունները, ինչպես նաև այն պնդումների կապակցությամբ, որ ՄՖԿ-ն չի ապահովել հաճախորդի համապատասխանությունը ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական պահանջների հետ:

ՀԱՊԽ-ի վերլուծության և բացահայտումների ամփոփումը

ՀԱՊԽ-ը գնահատել է ՄՖԿ-ի կատարողականությունը համայնքի մի շարք մտահոգությունների կապակցությամբ, որոնք վերաբերում են Ամուլսար հանքի հնարավոր Բ&Ս ազդեցություններին: ՀԱՊԽ-ը գտնում է, որ այդ մտահոգությունների մեծ մասը եղել են ՄՖԿ-ի համապատասխան վերահսկողության ենթակայությունում: ՀԱՊԽ-ը ընդունում է, որ ՄՖԿ-ի օժանդակությունը հաճախորդին՝ այնպիսի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ) պատրաստելու գործում, որը հասցեագրում է հանքի ռիսկերն ու հնարավոր ազդեցությունները, ընդհանուր առմամբ, բավարարում է ՄՖԿ-ի Սոցիալ տնտեսական կայունության շրջանակին և արտացոլում է Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպը: Սա նշանակալի ձեռքբերում է մի ներդրումի համար, որն արվել է բարդ երկրային ենթատեքստում աշխատող մի ոչ խոշոր հանքային ընկերության մեջ:

Միևնույն ժամանակ զեկուցագիրը նույնականացնում է ՄՖԿ-ի կողմից նախագծի գնահատման և վերահսկման մեջ տեղ գտած թերությունները՝ կապված բողոքների մեջ արծարծված մի շարք հարցերի հետ: ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից նախագծի Բ&Ս նախաներդրումային վերաքննությունը համարժեք կամ համադրելի չի եղել ռիսկերի հետ: Մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է, որ եղել է Բ&Ս ռիսկերի նախնական ծավալային ամփոփման պակաս և Բ&Ս ռիսկերը հասցեագրելու մեջ հաճախորդի պատրաստակամության և կարողության գերագնահատում՝ կապված երկրախուզական փուլում նախագծի գործունեության հետ: Հաշվի առնելով նախագծի բարդության աստիճանը, հաճախորդի կարողությունների մեջ ճանաչված բացերը, և նրա կողմից Բ&Ս պատմական տվյալների գրանցման բացակայությունը, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի ներգրավման պահին կարիք կար մի ավելի մանրամասն և կառուցվածքային Բ&Ս Գործողությունների ծրագիր կազմելու մեջ:

ՄՖԿ-ի նախաներդրումային վերաքննության թերությունները խնդիրների վերածվեցին վերահսկողության առաջին տարիների ընթացքում: ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ արդյունավետորեն չի իրականացրել հաճախորդի կողմից նրա հետ համաձայնեցված Բ&Ս ազդեցության մեղմացման միջոցառումների իրականացման վերահսկումը 2007թ.-ից 2013թթ. ժամանակահատվածում: Մասնավորապես, Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ (ԲՍԿՀ) մշակելու պահանջը երկրախուզական գործողությունների համար ժամանակին չէր ավարտվել: Ուստի արդյունքում ՄՖԿ-ն երաշխիք չուներ առ այն, որ ընկերության երկրախուզական գործողություններն իրականացվել էին Բ&Ս պահանջների հետ համապատասխանությամբ: Նմանապես ՄՖԿ-ն այդ ժամանակահատվածի ընթացքում

երաշխիք չուներ նաև առ այն, որ հաճախորդի ընթացիկ Բ&Ս գնահատման աշխատանքն իրականացվել էր ՄՖԿ-ի չափորոշիչներով:

2013թ.-ից ի վեր, սակայն, ՀԱՊԽ-ը նշում է, որ նկատվել է ՄՖԿ-ի կողմից նախագծի վերահսկման նշանակալի առաջընթաց: Արդյունքը հաճախորդի Բ&Ս կատարողականության նշանակալի բարելավումն էր, մասնավորապես, երկրախուզական փուլի ԲՍԿՀ և միջազգային չափորոշիչներով ԲՍԱԳ մշակելու միջոցով:

Զեկուցագրի մեջ դիտարկվում են բողոքատուների կողմից բարձրացված մի շարք հատկորոշ բնապահպանական և սոցիալական հարցեր: Բնապահպանական տեսակետից այդ հարցերի մեջ են մտնում.

- Գրունտային և մակերևութային ջրերի աղտոտման ռիսկերը
- Սեյսմիկ ռիսկերը
- Ճառագայթման ռիսկերը
- Աղտոտված փոշու տարածման ռիսկերը
- Հազվագյուտ և վտանգված բուսական և կենդանական տեսակների վրա ազդեցության ռիսկերը

Այս հարցերից յուրաքանչյուրի կապակցությամբ ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից ԲՍԱԳ-ի վերաքննության գործընթացը համարժեք է եղել ռիսկին:

Ինչ վերաբերում է, սակայն, կենսաբազմազանության վրա ազդեցություններին, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը երկրաբանական հետախուզության վաղ աշխատանքների փուլում բավարար չի եղել: Այս ենթատեքստում, ՄՖԿ դիտարկել է 2013թ., որ հաճախորդի երկրախուզական գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել խիստ վտանգված մի բուսատեսակի, *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր,* կենսագործունեության համար ծայրահեղ կարևոր բնակության միջավայրի վրա: Սակայն, 2013-ից հետո եղած ժամանակահատվածում ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան դրույթների մշակմանը, որոնք կոչված են նվազագույնի հասցնելու, մեղմացնելու և հակակշռելու նախագծի պոտենցիալ ազդեցությունները կենսաբազմազանության վրա, ինչպես պահանջվում է ՄՖԿ-ի *Բնապահպանական և սոցիալական կայունության Կատարողականության Չափորոշիչներով,* ներառյալ նաև *Potentilla porphyrantha մատնունի ծիրանավոր* բուսատեսակի առնչությամբ:

Զեկուցագրի մեջ հասցեագրված հատկորոշ սոցիալական մտահոգությունների մեջ մտնում էին.

- Հողի օտարման և կենսապահովման միջոցների վերականգնման հարցերը
- Հարևանությամբ գտնվող Ջերմուկ հանգստավայրի բրենդի վրա նախագծի պոտենցիալ ազդեցությունները
- Գնդեվազ գյուղի վրա նախագծի թողած ազդեցությունները
- Խորհրդակցության և մասնակցության գործընթացները, մտահոգ շահագրգիռ կողմերի համար հանրային լսումների մատչելիությունը, և բողոքների պաշտոնական գրանցման և հարցերի հասցեագրման լուսաբանումը:

Ինչ վերաբերում է հողի օտարմանը, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան ուղղորդում է ապահովել հաճախորդին՝ կապված հողի օտարման ծրագրի հետ, որն

առաջնահերթությունը տվել է բանակցված գնումներին: ՀԱՊԽ նաև գտնում է, որ ՄՖԿ-ի իրականացրած վերահսկողությունը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ է տվել Կատարողականության չափորոշիչների պահանջները բավարարելու համար՝ կապված կենսապահովման միջոցների վերականգնման պլանավորման հետ, ինչը պահանջվում է այն դեպքերում, երբ նախագծերը ֆիզիկական կամ տնտեսական տեղահանման պատճառ են դառնում:

Առողջարան քաղաք Ջերմուկի կապակցությամբ, ՀԱՊԽ-ը նշում է, որ հանրությունը ներկայացրել է լավ փաստաթղթագրված մտահոգություններ՝ տուրիզմի վրա նախագծի հնարավոր բացասական ազդեցությունների մասին: Մինչդեռ Ջերմուկն իսկզբանե չէր դիտարկվում նախագծի ազդեցության պոտենցիալ տարածքում, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն նախաձեռնել է համապատասխան միջոցներ, որպեսզի երաշխավորի, որ դա այդպես լինի, երբ հաճախորդը պատրաստում էր իր միջազգային ԲՍԱԳ-ը: Դեռ ավելին, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ համոզվել է, որ նախագծի հետ կապված բնապահպանական ազդեցությունների ռիսկերը Ջերմուկի վրա ցածր են եղել:

Ինչպես նշված է եղել նախագծի ԲՍԱԳ-ի մեջ, Ջերմուկի հեղինակությունը, որպես առողջարան քաղաքի, կապված է լավ առողջության կամ ինքնազգացումի, մաքուր օդի և հանգստության պատկերացումների հետ: Նախագծի ազդեցությունները — օրինակ, պայթյուններից, բնապատկերի տեսանելի խանգարումներից, և այն ավելի ընդհանուր ընկալումից, որը բխում է քաղաքին հանքի մոտիկության փաստից — չեն գնահատվել՝ որպես զբոսաշրջային կենտրոն Ջերմուկի հեղինակության դիտարկման տեսակետից: Այս զեկուցագիրը գրելու օրերին, նախաձեռնվեց, որպես տուրիստական ուղղություն, Ջերմուկի բրենդի վրա ազդեցությունների գնահատումը՝ կապված աշխատուժի ներհոսքի հետ, բայց ոչ ավելի ընդհանուր ազդեցությունների գնահատման առումով, որոնք կապված են հանքին քաղաքի մոտիկ լինելու հանգամանքի հետ: Արդյունքում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի առ այն, որ Ջերմուկի բրենդի և, որպես տուրիստական կենտրոն, քաղաքի վրա պոտենցիալ ազդեցությունները գնահատվել և մեղմացվել են թիվ 1 Կատարողական չափորոշիչի (ԿՉ1) պահանջներով:

ՀԱՊԽ նաև թերություններ է գտնում Գնդեվազ գյուղի բնակչության վրա նախագծի ազդեցությունները վերահսկելու ՄՖԿ-ի մոտեցման մեջ: Գնդեվազն այն գյուղն է, որը նշանակալի ազդեցություն է կրում նախագծից, որովհետև գտնվում է նախագծի ենթակառուցվածքների տարածքում, հանքի հետ անմիջական հարևանությամբ:

ՀԱՊԽ-ը բացեր է գտնում ԲՍԱԳ գործընթացի նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկողության մեջ՝ կապված Գնդեվազի համար նախագծի պոտենցիալ ռիսկերի և ազդեցությունների հետ և համայնքի ընդհանուր բարօրության վրա և հատկապես բնակչության խոցելի խմբերի վրա հանքի զարգացման հեռանկարային ազդեցության հետ: Այս ռիսկերը վերաբերում են սոցիալական միասնականությանը, սոցիալ-տնտեսական անհավասարությանը, և հրահրված աղքատության պոտենցիալ ազդեցություններին, քանի որ ըստ կանխատեսումների գյուղին սպասվում է աշխատուժի ներհոսք, հողի և կենսապահովման միջոցների կորուստ, սղաճ և սոցիալական փոփոխություններ՝ հրահրված հանքի աշխատողների և նոր տնտեսական շահառուների ներկայությամբ: ԲՍԱԳ-ը և կառավարման պլաններն առանձին ընդգրկել կամ հասցեագրել են այս ազդեցություններից շատերը, և ճանաչվել են ՀԱՊԽ-ի կողմից որպես այդ առումով լավ միջազգային չափորոշիչներին բավարարող: Ի լրումն, ՀԱՊԽ ճանաչում է նաև

համայնքի վրա պոտենցիալ դրական ազդեցությունները, ինչպես օրինակ ապրանքների և ծառայությունների տեղական շուկայի ընդլայնումը և ներդրումների աճը համայնքային նախագծերի մեջ: Այդուհանդերձ, ՀԱՊԽ գտնում է, որ 2013թ.-ից հետո նախագծի կառուցվածքի մեջ արված փոփոխությունները հանգեցրին Գնդեվազի բնակչության համար պոտենցիալ անցանկալի ազդեցությունների ավելացմանը: Այս փոփոխությունները պահանջում էին գնահատել քաղաքի և նրա բնակչության համար նախագծի տարբեր բաղադրիչների հետ կապված հնարավոր ռիսկերը և ազդեցությունները — նախաձեռնելով համապատասխան խորհրդակցություններ, մեղմացման և մշտադիտարկման միջոցներ — ի լրումն նրանց, որոնք արդեն կան ընթացիկ ԲՍԱԳ-ի մեջ: Այս զեկուցագրում նաև նշվում է, ՄՖԿ-ի ուղղորդման մեջ առկա բացերի մասին, որոնք վերաբերում են այն հարցին, թե ինչպես պետք է ապահովել որևէ նախագծի սոցիալական ազդեցությունների ամբողջական և ինտեգրված գնահատման նախաձեռնումը:

Խորհրդակցության և շահագրգիռ կողմերի մասնակցության առնչությամբ ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի նախաներդրումային վերաքննությունը համարժեք չի եղել ռիսկի հետ: ՄՖԿ Բ&Ս Գործողությունների ծրագրի մեջ բավարար պահանջներ չեն ընդգրկել (վերջնաժամկետներ, համապատասխան փորձագիտական կարծիքի կարիք, փաստաթղթագրություն, և հաշվետվողականություն), որպեսզի երաշխավորվի, հաճախորդի Հանրային խորհրդակցության և հրապարակման ծրագրի (ՀԽՀԾ) հարիր իրականացումը՝ Կատարողականության չափորոշիչ թիվ 1-ի հետ համապատասխանությամբ: ՀԱՊԽ նաև նշում է ՄՖԿ-ի նախնական բացահայտումը, որ այն պնդումը, թե նախագիծը վայելել է լայն հանրային օժանդակություն (ԼՀՕ) չի փաստարկվել ո'չ սոցիալական վերլուծությամբ, ո'չ փորձագիտական կարծիքով: Սակայն, ՀԱՊԽ նշում է, որ ՄՖԿ-ն իր վերահսկման ընթացքում ճանաչել է հաճախորդի կատարողականության բացերը և աշխատել է հաճախորդի հետ համապատասխանության հասնելու ուղղությամբ: ՀԱՊԽ գտնում է, որ նախագծի վերահսկման ամբողջ ընթացքում ՄՖԿ-ի մասնակցությունը ապահովել է հաճախորդի համապատասխանությունը Բ&Ս պահանջներին, կապված խոհրդակցության և շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովման գործընթացների և անհամաձայնությունների հարթեցման մեխանիզմի հետ:

Եզրակացությունը

Այս զեկուցագրում զետեղված բացահայտումների լույսի ներքո, ՀԱՊԽ չի փակի այս հետաքննությունը մշտադիտարկման գործառույթի համար, և մշտադիտարկման զեկուցագիր կհրապարակի ոչ ուշ քան այս հետաքննության հրապարակումից մեկ տարի անց:

Ստորև շարադրված են նախագծի-մակարդակով այն բացահայտումները, որոնք բաց կմնան մշտադիտարկման համար.

- ՀԱՊԽ-ի անհամապատասխանության բացահայտումը՝ կապված, որպես տուրիստական կենտրոն, Ջերմուկ քաղաքի վրա ազդեցության գնահատման հետ, և
- ՀԱՊԽ-ի անհամապատասխանության բացահայտումը՝ կապված Գնդեվազ գյուղի բնակչության վրա նախագծի ազդեցությունների հետ:

ՀԱՊԽ-ը կշարունակի մշտադիտարկել իրավիճակը մինչև ՄՖԿ-ի կողմից նախաձեռնված գործողությունները չերաշխավորեն ՀԱՊԽ-ին առ այն, որ ՄՖԿ-ն արձագանքում է անհամապատասխանության բոլոր բացահայտումներին:

ՀԱՊԽ-ի Համապատասխանության գործընթացի ամփոփումը

ՀԱՊԽ-ի մոտեցումը իր համապատասխանության մանդատին ձևակերպված է նրա *Աշխատանքային ուղեցույցների* մեջ (մարտ, 2013թ.):

Երբ ՀԱՊԽ-ը ստանում է որևէ հիմնավոր բողոք, այն առաջին հերթին ենթարկվում է վերլուծական գնահատման՝ ՀԱՊԽ-ի արձագանքի բնույթը պարզաբանելու նպատակով: Եթե գործարկվում է ՀԱՊԽ-ի համապատասխանության գործառույթը, ապա ՀԱՊԽ-ը իրականացնում է նախագծի մեջ ՄՖԿ-ի/ԲՆԵԳ-ի ներգրավման արժեքային գնահատումը, և որոշում է, արդյոք բավարար հիմքեր կան հետաքննություն նախաձեռնելու համար: ՀԱՊԽ-ի համապատասխանության գործառույթը կարող է գործարկվել նաև Համաշխարհային բանկի խմբի Նախագահի, ՀԱՊԽ-ի Փոխնախագահի, կամ ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ավագ ղեկավարության կողմից:

ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննությունները կիզակետվում են ՄՖԿ/ԲՆԵԳ-ի վրա և այն հարցի պատասխանի վրա, թե ՄՖԿ/ԲՆԵԳ-ը ինչպես է/են ինքը/իրենք իրենց երաշխավորում որևէ նախագծի Բ&Ս կատարողականության չափորոշիչները բավարարելու մեջ: ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննության նպատակն է երաշխավորել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի մասնակցության համար պահանջվող քաղաքականությունների, չափորոշիչների, ուղեցույցների, ընթացակարգերի և պայմանների համապատասխանությունը, և դրանով իսկ բարելավել հաստատության Բնապահպանական և սոցիալական (Բ&Ս) կատարողականության մակարդակը:

ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննության ենթատեքստում, դիտարկվում է.

- արդյոք որևէ նախագծի փաստացի Բ&Ս արդյունքները համատեղելի են կամ հակասում են ՄՖԿ/ԲՆԵԳ-ի քաղաքականության դրույթներով ցանկալի ազդեցությանը:
- արդյոք ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ձախողումը Բ&Ս հարցերը հասցեագրելու մեջ իր գնահատման կամ վերահսկման գործողությունների շրջանակում հանգեցրել է այնպիսի արդյունքների, որոնք հակասում են նրա քաղաքականության դրույթներով ցանկալի արդյունքներին.

Շատ դեպքերում որևէ նախագծի կատարողականությունը գնահատելիս և հարիր պահանջները բավարարելու համար միջոցներ կիրառելիս, անհրաժեշտ է լինում վերաքննել ՄՖԿ-ի հաճախորդի գործողությունները և տեղում վավերացնել արդյունքները:

ՀԱՊԽ-ը ոչ մի իրավասություն չունի իրավական գործընթացների առնչությամբ: ՀԱՊԽ-ը ո՛չ բողոքարկման դատարան է, ո՛չ իրավական կիրարկման մեխանիզմ, ո՛չ էլ ՀԱՊԽ-ը կարող է փոխարինել միջազգային դատական համակարգերին կամ ընդունող երկրների ազգային դատական համակարգերին:

Որևէ համապատասխանության հետաքննություն ավարտելուց հետո ՄՖԿ/ԲՆԵԳ-ին տրվում է 20 աշխատանքային օր հանրային դիմում պատրաստելու համար: Դրանից հետո Համապատասխանության հետաքննության զեկուցագիրը ՄՖԿ/ԲՆԵԳ-ի արձագանքի հետ միասին ուղարկվում է Համաշխարհային Բանկի Խմբի Նախագահին, վավերացման համար, ինչից հետո այն հրապարակվում է ՀԱՊԽ-ի վեբկայքում (www.cao-ombudsman.org).

Այն դեպքերում, երբ ՄՖԿ/ԲՆԵԳ-ը գնահատվում է որպես համապատասխանության պահանջները չբավարարող, ՀԱՊԽ-ը շարունակում է բաց պահել հետաքննությունը և

մշտադիտարկել իրավիճակը մինչև ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից համապատասխան գործողությունների նախաձեռնումը, որոնք կոչված են երաշխավորելու ՀԱՊԽ-ին առ այն, որ ՄՖԿ/ԲՆԵԳ-ը արձագանքում է անհամապատասխանությանը: Միայն դրանից հետո է ՀԱՊԽ-ը փակում համապատասխանության հետաքննությունը:

I. Լիդիան Ինթերնեշնլ ընկերության մեջ ՄՖԿ-ի ներդրումների նախապատմությունը

A. ՄՖԿ-ի Ներդրումները Լիդիան Ինթերնեշնլ ընկերության մեջ

Լիդիան Ինթերնեշնլ Լիմիթիդ (այսուհետ "ընկերությունը" կամ "հաճախորդը") երկրաբանական հետախուզության աշխատանքներ իրականացնող ընկերություն է, որը ներկայումս անցումային փուլում է հանքային ընկերություն դառնալու ճանապարհին, գրանցված է Միացյալ Թագավորությունում և Տորոնտոյի Արժեթղթերի Բորսայում (TSX): Ընկերությունը ներկայումս աշխատում է Հայաստանում իր Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծի վրա ("նախագիծ"): Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագիծը կառավարում է Լիդիան Արմենիա փակ բաժնետիրական ընկերությունը, որը Լիդիան Ինթերնեշնլ (Գեոթիմ ՓԲԸ մինչև 2016թ. օգոստոս ամիսը, նույնպես հիշատակվում է որպես "ընկերություն", կամ "հաճախորդ") ընկերության 100-տոկոս սեփականատիրությամբ հայաստանյան մասնաճյուղն է: ՄՖԿ առաջին ներդրումը ընկերության մեջ արեց 2007թ.՝ Կոսովոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային տարածքներում ռեսուրսների երկրախուզական գործողությունները և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները ֆինանսավորելու նպատակով: Այս նախնական ներդրումից հետո եղան տասնմեկ լրացուցիչ ներդրումներ կամ երաշխիքային ֆինանսական գործողություններ 2008-ից մինչև 2015թթ. ընթացքում (Տես՝ Հավելված A):

Այս հետաքննության զեկուցագիրը գրելու ժամանակ Ամուլսար հանքի շինարարությունն արդեն սկսված էր: ՀԱՊԽ-ի հետաքննության գործընթացը, սակայն, վերաբերում է ՄՖԿ-ի ներդրումներին 2007թ.-ից մինչև 2016թթ. ժամանակահատվածում, մինչև շինարարության սկսվելը: Շահութաբերության տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը (ՇՏՀՈՒ) և ազգային Բնապահպանական ազդեցության գնահատումը (ԲԱԳ) ավարտվեցին 2014թ. հուլիսին, և հանքարդյունաբերական արտոնագիրը տրվեց ընկերությանը 2014թ. նոյեմբերին: Միջազգային Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ) հրապարակվեց 2015թ. մայիսին և նորացվեց 2016թ. հունիսին, որպեսզի արտացոլվեն տեխնիկատնտեսական ծախսերի նախահաշվարկի մեջ կատարված փոփոխությունները:[1] Նախագծի շինարարական աշխատանքները սկսվեցին 2016թ. հոկտեմբերին:

2015թ. դեկտեմբերին ընկերությունը հայտարարեց, որ համաձայնության է եկել Orion Mine Finance (Orion) և Resource Capital Funds (RCF) ընկերությունների հետ՝ $325 միլիոն շինարարական փաթեթի ֆինանսավորման մասին: Ամուլսարի շինարարության համար պահանջվող ընդհանուր ֆինանսավորումը մոտավոր հաշվարկով կազմում է $395 միլիոն

[1] Ամուլսար Գոլդ Փրոջեքտ, ԲՍԱԳ, 2016թ. մայիս. http://goo.gl/gsbEjl.

դոլար, որը բաղկացած է $370 միլիոն դոլար գումարի չափով նախնական կապիտալ ծախսերից և դրան գումարած մոտավոր հաշվարկով $25 միլիոն դոլար՝ շինարարության ժամանակ ֆինանսավորման և այլ ծախսերի համար:[2]

ՄՖԿ 2007թ.-ից ի վեր կատարել է $16.4 միլիոն դոլարի ներդրում և բաժնետիրական կապիտալ է ունեցել ընկերությունում մինչև 2017թ. մայիս ամիսը: 2017թ. մայիսին ՄՖԿ վաճառել է իր բոլոր բաժնետոմսերը և ներկայումս այլևս ընկերության մեջ ներդրող չի հանդիսանում: Ներկայումս Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկը (EBRD) ընկերության բաժնետերերից է և ունի 6.5 տոկոս բաժնետիրական կապիտալ:[3]

B. ՄՖԿ-ի Վաղ Բաժնետիրական կապիտալի բիզնեսը

ՄՖԿ-ի ներդրումը Լիդիան ընկերության մեջ համարվում է վաղ բաժնետիրական կապիտալի ներդրում, քանի որ ՄՖԿ-ն ընկերության բաժնետիրական կապիտալ ձեռք է բերել մինչև ընկերության կողմից Ամուլսարում ռեսուրս բացահայտելը: Այս հատվածում ամփոփվում են հանքարդյունաբերության մեջ վաղ բաժնետիրական կապիտալ ներդնելու ՄՖԿ-ի մոտեցման կողմերը, քանի որ դա կապ ունի ընթացիկ բողոքի հետ, ներառյալ ներդրման ծավալները և հայտարարագրված նպատակը:

ՄՖԿ-ի հանքարդյունաբերական խումբը բաժնետիրական կապիտալ և վարկային ֆինանսավորում է տալիս հանքարդյունաբերական ընկերություններին: Ներդրումային ռազմավարության մեջ մտնում է հավատարմությունը ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական (Բ&Ս) քաղաքականություններին, չափորոշիչներին, և ընթացակարգերին նախագծերի հետ կապված ռիսկերը և ծախսերը կառավարելու գործում: ՄՖԿ-ի հանքարդյունաբերության ռազմավարությունը կիզակետվում է գործի/բիզնեսի երկու ուղղությունների վրա.

- *Խոշոր ծավալային նախագծեր իրականացնող հանքարդյունաբերական ձեռնարկությունները*: Այս ձեռնարկությունները ՄՖԿ-ից օժանդակություն են ակնկալում իրենց կառավարման, քաղաքական և Բ&Ս ռիսկերը մեղմացնելու և կառավարելու գործում:
- *Ոչ խոշոր ձեռնարկությունները, որոնք իրականացնում են հանքարդյունաբերական կամ երկրախուզական գործողություններ, և արել են պոտենցիալ նշանակալի բացահայտումներ/հայտնագործություններ*: ՄՖԿ-ն օժանդակում է այն ձեռնարկություններին, որոնք սովորաբար ոչ մեծ ներքին տեխնիկական հզորություն ունեն Բ&Ս կառավարելու համար՝ առաջարկելով այդ ձեռնարկություններին Բ&Ս խորհրդատվություն և նախապատրաստելով նրանց փոխառված ֆինանսավորում ձեռք բերելու գործընթացին, երբ ձեռնարկությունը հասնում է շինարարության փուլին:

Հանքարդյունաբերական յուրաքանչյուր նախագիծ անցնում է մի քանի փուլերով, ներառյալ երկրաբանական հետախուզության աշխատանքները, նախա-տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության համար ուսումնասիրությունները, տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծությունը, շինարարությունը, շահագործումը/հանքահանությունը, և ի

[2] Լիդիան Ինթերնեշնլի վեբկայքը. Դեկտեմբերի 1, 2015թ. http://goo.gl/kOwyVn.
[3] Տես՝ https://goo.gl/kv87yc

վերջո փակումը և վերականգնումը: Նախագիծն անցնում է փուլից փուլ միայն այն բանից հետո, երբ բավարարում է ընթացիկ փուլի որոշակի չափանիշներին և բավարար խոստումնալից փաստարկներ է ցույց տալիս լրացուցիչ աշխատանքները և ներդրումները շարունակելու համար: Երկրաբանական հետախուզության աշխատանքների, նախա-տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության համար արվող ուսումնասիրությունների և տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության փուլերի ժամանակ զարգացվում/մշակվում է տնտեսական, տեխնիկական, սոցիալական և բնապահպանական տեղեկույթը, որը սովորաբար անցնում է մի շարք խմբագրումներով՝ նախագծի կենսունակության վրա ազդելու ունակ փոփոխվող ռիսկային պրոֆիլների հետ հարմարվելու նպատակով:

ՄՖԿ-ի հայտարարված նպատակը նախագծի զարգացման վաղ փուլերում մասնակցելու կապակցությամբ միտված է դրական տեխնիկական ազդեցություն թողնելու, ինչպես նաև Բ&Ս ուղղորդում ապահովելու նպատակին, հատկապես այն երկրներում, որտեղ արդյունաբերական ծավալի հանքահանումը դեռ հիմնավորապես չի կանոնակարգվում և վերահսկվում Բ&Ս կատարողականության տեսակետից:

Բազմաթիվ ոչ խոշոր ընկերություններ չեն հասնում հանքի շինարարության փուլին: Սովորաբար նրանք վաճառում են իրենց շահաբաժինները կամ համատեղ ձեռնարկություն են ստեղծում ավելի կայացած կամ փորձառու հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ: ՄՖԿ հայտարարում է, որ ինքը ներդրում կատարում է ոչ խոշոր ընկերությունների մեջ, եթե վերջիններս հանքային պաշարներ են հայտնաբերել, և եթե մեծ հավանականություն կա հանքի շինարարության համար — և ուստի հանքային պաշարը կդառնա առևտրային տեսակետից շահավետ կամ խոստումնալից: ՄՖԿ-ի տրամաբանությունը՝ նախագծերի զարգացման վաղ փուլերի ֆինանսավորման նպատակով, բաժնետիրական կապիտալի գործիքներ օգտագործելու մեջ կոչված է ազդելու նրա հաճախորդների Բ&Ս կատարողականության վրա և ուժեղացնելու նրանց կարողությունները և պատրաստակամությունը ՄՖԿ Կայունության շրջանակի պահանջները բավարարելու մեջ: [4]

ՄՖԿ-ն ընդգծում է իր ավելացրած արժեքը՝ որպես երկարաժամկետ գործընկեր: Նա ձգտում է մասնակցել նախագծի իրականացման ամբողջ բոլորաշրջանում՝ նպատակ ունենալով ավելացնել իր բաժնետիրական կապիտալը և տրամադրած պարտքը, նախագծի առաջընթացին զուգահեռ:[5]

Հանքարդյունաբերության մեջ վաղ բաժնետիրական կապիտալի ներդրումների առնչությամբ ՀԱՊԽ-ը դիտարկել է ՄՖԿ-ի մասնակցությունը հաճախորդների նախագծերում երկրախուզական փուլի փաստացի Բ&Ս ռիսկերը և դրանց ազդեցությունները ճանաչելու և մեղմացնելու առումով: ՀԱՊԽ նաև դիտարկել է ՄՖԿ-ի մոտեցումը հանքի շինարարության և շահագործման հետ կապված պոտենցիալ ապագա ազդեցություններին, և թե արդյոք դրանք գնահատվել են այնպես, ինչպես պահանջվում է ՄՖԿ-ի Կատարողականության Չափորոշիչներով: Դրա մեջ կարող է մտնել ԲՍԱԳ-ի փաստաթղթերի և պլանավորված

[4] Հանքերի շինարարության համար, ռիսկերի գնահատումից և արժեքային վերլուծությունից հետո և եթե հանքային պաշարի առկայության ավելի հստակ ապացուցներ են ստացվել, սովորաբար կիրառվում են ֆինանսավորման պարտքային գործիքները, ի տարբերություն բաժնետիրական կապիտալի մոտեցման: *Ibid. նույն տեղում*

[5] “ ՄՖԿ-ն Հանքարդյունաբերության մեջ” (http://goo.gl/M84uOD).

մեղմացման միջոցների վերաքննությունը, կախված դիտարկվող նախագծի զարգացման փուլից:[6]

II. ՀԱՊԽ-ի Համապատասխանության Հետաքննության նախապատմությունը

A. Բողոքները

Լիդիան ընկերություն, Բողոք - 01

Առաջին բողոքը ("Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոք") ներկայացվեց ՀԱՊԽ-ին 2014թ. ապրիլին Վայոց Ձոր մարզի Գնդեվազի և Ջերմուկի երկու բնակիչների կողմից, ինը հասարակական կազմակերպությունների և անհատ ներկայացուցիչների օժանդակությամբ: Բողոքատուները շեշտը դրել էին բնական միջավայրի և շրջապատի համայնքների վրա նախագծի պոտենցիալ ապագա ազդեցությունների կապակցությամբ բարձրացված մտահոգությունների վրա: Բողոքատուների բարձրացրած հարցերի մեջ մտնում էին ընկերության կողմից իրականացվող ազգային ԲԱԳ գործընթացի քննադատությունը և պնդումները ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական կայունության կատարողականության չափորոշիչների ("Կատարողականության չափորոշիչներ") և ազգային օրենքների խախտումների մասին:

Լիդիան ընկերություն, Բողոք -02

Երկրորդ բողոքը ("Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոք") հանձնվեց ՀԱՊԽ-ին 2014թ. հուլիսին Գնդեվազի 148 բնակիչների անունից, ովքեր մտահոգություն էին հայտնում կենսապահովման միջոցների, շրջակա միջավայրի և համայնքի առողջության վրա նախագծի ազդեցությունների մասին: Այս հարցերը մեծ ի մասամբ համընկնում են Լիդիան ընկերություն թիվ -01 բողոքում բարձրացված հարցերի հետ: Սակայն, Լիդիան ընկերություն թիվ -01 և Լիդիան ընկերություն թիվ-02 բողոքները հասցվել են ՀԱՊԽ-ի ուշադրությանը տարբեր անհատների անունից:

Բողոքներում բարձրացված հարցերի առավել մանրամասն ամփոփումը ներկայացված է այս զեկուցագրի III Հատվածում:

Բողոքների գնահատումը ՀԱՊԽ-ի կողմից

[6] ՀԽՊ-ը մի քանի բողոքներ է ստացել կապված ոչ խոշոր ձեռնարկություններում ՄՖԿ-ի բաժնետիրական կապիտալ ներդնելու մոտեցման հետ, որոնք նմանատեսակ խնդիրներ են արծարծել, ինչ այս դեպքի հետ առնչվող բողոքները: Տես, օրինակի համար, *ՀԽՊ Հետաքննությունը՝ «Minera Quellaveco SA», Պերու, նախագծի մեջ ՄՖԿ-ի ներդրումի կապակցությամբ,* օգոստոս, 2014թ.(http://goo.gl/aNauwB); և *ՀԽՊ Հետաքննությունը՝ «Investment in Eco Oro», Կոլումբիա, նախագծի մեջ ՄՖԿ-ի կատարած ներդրումի կապակցությամբ*, հունիս. 2016թ. (http://goo.gl/8yfxlK).

ՀԱՊԽ-ի գնահատման փուլի նպատակն է պարզաբանել այն հարցերը և մտահոգություններ, որոնք բարձրացվել են բողոքատուների կողմից, տեղեկույթ հավաքել այն մասին, թե ինչպես են մյուս շահագրգիռ կողմերը վերաբերում իրավիճակին, և բացահայտել, արդյոք կողմերը կգերադասեն նախաձեռնել ՀԱՊԽ-ի անհամաձայնությունների լուծման գործընթացը, թե համապատասխանության դերը:

ՀԱՊԽ-ի գնահատման ընթացքում Լիդիան ընկերություն թիվ -01 բողոքի բողոքատուները որոշեցին չմասնակցել ՀԱՊԽ-ի կողմից հաշտարարված անհամաձայնությունների լուծման գործընթացին: Արդյունքում գործարկվեց ՀԱՊԽ-ի համապատասխանության գործառույթը:

ՀԱՊԽ-ի կողմից Լիդիան ընկերություն թիվ -02 բողոքի գնահատման ժամանակ բողոքատուները և հաճախորդը համաձայնության եկան, որ կփորձեն լուծել իրենց հարցերը ՀԱՊԽ-ի անհամաձայնությունների լուծման գործառույթի միջոցով:[7] Թեև անհամաձայնության լուծման գործընթացը նախաձեռնվել էր 2015թ. փետրվարին, բողոքատուներն այնուհետև որոշեցին, որ իրենց կարիքներն ավելի լավ կբավարարվեն ՀԱՊԽ-ի համապատասխանության գործառույթի գործարկման միջոցով: Արդյունքում Լիդիան ընկերություն թիվ 02 բողոքը փոխանցվեց ՀԱՊԽ-ի համապատասխանության գործառույթին 2015թ. օգոստոսին:[8]

B. ՀԱՊԽ Համապատասխանության գնահատումները

2015թ. ապրիլին ՀԱՊԽ հրապարակեց մի համապատասխանության գնահատման զեկուցագիր, կապված Լիդիան ընկերության թիվ -01 բողոքի հետ:[9] ՀԱՊԽ-ը եզրակացրել էր, որ բողոքը նշանակալի մտահոգություններ էր բարձրացնում նախագծի մի շարք պոտենցիալ կամ փաստացի Բ&Ս ազդեցությունների շուրջը: ՀԱՊԽ նաև հարցեր էր նույնականացրել, որոնք վերաբերում էին նախագծի հետ կապված իր իսկ Բ&Ս պահանջների նկատմամբ ՄՖԿ-ի վերաքննությանը և վերահսկմանը, և այդպիսով որոշեց իրականացնել ՄՖԿ-ի Կատարողականության համապատասխանության հետաքննություն:

ՀԱՊԽ հրապարակեց մի համապատասխանության գնահատման զեկուցագիր՝ կապված Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքի հետ 2015թ. հոկտեմբերին:[10] Լիդիան ընկերություն, թիվ 02 բողոքի գնահատումը կառուցված էր Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքի գնահատման վրա, քանի որ այնտեղ մի քանի կրկնվող հարցեր կային: Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքի գնահատման միջոցով ՀԱՊԽ նույնականացրեց մի շարք լրացուցիչ հարցեր, որոնք վերաբերում էին նախագծի հետ կապված իր իսկ Բ&Ս պահանջների ՄՖԿ-ի վերաքննությանը և վերահսկմանը, մասնավորապես հողի օտարման (Կատարողականության չափորոշիչ 5) հարցի առնչությամբ: Այս ենթատեքստում, ՀԱՊԽ որոշեց՝ երկու բողոքներում, Լիդիան ընկերություն, թիվ -01 և Լիդիան ընկերություն, թիվ -02, բարձրացված հարցերը դիտարկել միասին: Այդպիսով երկու գործերը միավորվեցին այս մեկ համապատասխանության հետաքննության նպատակահարմարությամբ:

---

[7] ՀԽՊ. *Գնահատման զեկուցագիր, Լիդիան-02*, փետրվար 2015թ. http://goo.gl/YXyiCz.
[8] ՀԽՊ. *Եզրակացության զեկուցագիր, Լիդիան-02*, օգոստոս 2015թ. https://goo.gl/XCVu8s
[9] ՀԽՊ. *Համապատասխանության գնահատման զեկուցագիր, Լիդիան-01*, ապրիլ 2015թ. http://goo.gl/wimmIp.
[10] ՀԽՊ.*Համապատասխանության գնահատման զեկուցագիր, Լիդիան-02*, հոկտեմբեր 2015թ. http://goo.gl/RxQYpt.

C. Համապատասխանության հետաքննության մեթոդաբանությունը

Սույն համապատասխանության հետաքննությունը իրականացվել է համաձայն ՀԱՊԽ-ի *Աշխատանքային ուղեցույցների*[11] և Տեխնիկատնտեսական լիազորությունների, որոնք հրապարակվել են ՀԱՊԽ-ի վեբ կայքում 2016թ. հունվարին (տես Հավելված B):[12] 2016թ., հունվարից օգոստոս ամիսներին ՀԱՊԽ հետաքննության թիմը, ներառյալ ՀԱՊԽ-ի անձնակազմը և երկու փորձագետ խորհրդատուներ վերաքննության ենթարկեցին ՄՖԿ-ի նախագծի ֆայլերը, հարցազրույցներ անցկացրին ՄՖԿ-ի անձնակազմի հետ, նրանց հետ, ովքեր անմիջականորեն իրազեկ են նախագծի մասին, և Հայաստանում այցելություն իրականացրին Երևան, Գնդեվազ, և Ջերմուկ:

ՀԱՊԽ-ի թիմը հանդիպում ունեցավ.

- ՄՖԿ նախագծի թիմի և ղեկավարության հետ
- Լիդիան Ինթերնեշնլ և Գեոթիմ ընկերության ղեկավարության և անձնակազմի հետ
- Բողոքատուների ներկայացուցիչների հետ (ՀԿ-ներ և անհատներ)
- Գնդեվազի բնակիչների հետ (մոտավորապես 40 անհատներ, բողոքների տակ երկուստեք ստորագրյալ և ոչ ստորագրյալ)
- Լիդիանի Կորպորատիվ կապի հանձնաժողովների հետ՝ Ջերմուկում և Գնդեվազում
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ)/ՀԿ-ների և անկախ փորձագետների հետ, ովքեր ընդգրկված չէին եղել ՀԱՊԽ-ին ներկայացված բողոքների գործընթացի մեջ, բայց իրազեկ էին նախագծի և Հայաստանի հանքարդյունաբերության հետ կապված ընդհանուր հարցերին:

Հարցազրույցներն իրականցվեցին երկուստեք անձամբ և հեռախոսով: Ինտերնետային որոնման միջոցով հավաքվեց հարակից երկրորդային տեղեկույթ: Երկրորդային նյութեր տրամադրեցին նաև հարցազրույցների որոշ մասնակիցները:

ՀԱՊԽ-ը չի գնահատում ՄՖԿ-ի Բ&Ս Կատարողականությունը հետին թվով արված գնահատականի դիրքից: Ավելի շուտ յուրաքանչյուր պահանջի նկատմամբ կիրառված չափանիշները որոշում են արդյոք ՄՖԿ-ի գործողությունները կառուցված էին ողջամիտ մասնագիտական դատողության վրա և հոգում էին համապատասխան քաղաքականությունների կիրառման մասին՝ միաժամանակ մատչելի տեղեկատվության աղբյուրների ենթատեքստում և հաշվի առնելով նախագծի զարգացման ընթացքը: ՀԱՊԽ-ը ոչ մի բացահայտում չի անում, բացասական կամ այլ որակի, կապված հաճախորդի կատարողականության հետ:

Սույն համապատասխանության հետաքննությունը դիտարկում է նախագծի հետ կապված ՄՖԿ-ի կատարողականությունը մինչև 2016թ. հուլիս ամիսը, մինչև հանքի շինարարության սկիզբը:

---

[11] *ՀԽՊ. Աշխատանքային ուղեցույցներ*, 2013թ. http://goo.gl/2z8UD6.

[12] Լիդիան Ինթերնեշնլ Արմենիա Լթդ. ընկերության մեջ, ՄՖԿի ներդրումների կապակցությամբ ՀԽՊ Համապատասխանության հետաքննության լիազորության սահմանները http://goo.gl/ND6q4M.

D. ՄՖԿ-ի կիրառելի քաղաքականությունները, կատարողականության չափորոշիչները և ընթացակարգերը

ՄՖԿ-ի դերը և նպատակները

ՄՖԿ-ի 2006թ. *Բնապահպանական և սոցիալական կայունության քաղաքականությունը* (“Կայունության քաղաքականություն”) ձևակերպում է նրա պարտավորությունները կայուն զարգացման նկատմամբ հետևյալ ոլորտներում.

> ՄՖԿ-ի զարգացման առաքելության համար կարևոր նշանակություն ունեն նրա ջանքերը իր ներդրումային գործողությունները և խորհրդատվական ծառայություններն այնպես իրականացնելու ուղղությամբ, որպեսզի “ոչ մի վնաս չհասցվի” մարդկանց կամ բնական միջավայրին: Բացասական ազդեցություններից պետք է հնարավորինս խուսափել, իսկ եթե այդ ազդեցություններն անխուսափելի են, ապա դրանք պետք է հնարավորինս նվազեցվեն, մեղմացվեն կամ համապատասխանորեն հատուցվեն: Մասնավորապես, ՄՖԿ-ն պարտավորվում է երաշխավորել, որ տնտեսական զարգացման ինքնարժեքը անհամամասնորեն չընկնի աղքատների և խոցելիների ուսերին, որ բնական միջավայրը չփչացվի գործընթացում, և որ բնական ռեսուրսներն արդյունավետորեն կառավարվեն: ՄՖԿ-ն գտնում է, որ հաճախորդի կանոնավոր կապը տեղական համայնքների հետ՝ նրանց վրա անմիջականորեն ազդող հարցերի քննարկման համար, կարևոր դեր է խաղում մարդկանց և բնական միջավայրին հասցված վնասից խուսափելու կամ այն հնարավորինս կրճատելու գործում (պարբ. 8):

Կայունության քաղաքականությունը այնուհետև նկարագրում է ՄՖԿ-ի հաճախորդի դերերը և պատասխանատվությունները. մասնավորապես, այնտեղ ասվում է.

> Իր գործողություններում ՄՖԿ-ն ակնկալում է հաճախորդներից կառավարել իրենց նախագծերի սոցիալական և բնապահպանական ռիսկերը և ազդեցությունները: Սա նշանակում է որ հաճախորդը պետք է գնահատի այդ ռիսկերը և ազդեցությունները, և համապատասխան միջոցներ կիրառի Կատարողականության չափորոշիչների պահանջներին բավարարելու համար: Հաճախորդի կառավարման մի կարևոր բաղադրիչ է սոցիալական և բնապահպանական կատարողականության մեջ հաճախորդի կապը ազդակիր համայնքների հետ՝նախագծին վերաբերող տեղեկատվության հրապարակման, խոհրդակցության, և իրազեկ մասնակցության միջոցով (պարբ. 10):

Կիրառելի պահանջները

ՄՖԿ-ի կողմից վաղ բաժնետիրական կապիտալի ներդրումը ընկերության մեջ արվեց *ՄՖԿ Բնապահպանական ու սոցիալական կայունության* քաղաքականության և *Բնապահպանական ու սոցիալական կայունության կատարողականության չափորոշիչների* ենթատեքստում, որոնք միասին հիշատակվում են որպես Կայունության շրջանակ (2006թ.): Կայունության քաղաքականության միջոցով ՄՖԿ-ն պարտավորվում է “երաշխավորել, որ իր կողմից ֆինանսավորված նախագծերը գործում են Կատարողականության չափորոշիչների պահանջներին հարիր կամ համապատասխան եղանակով” (պարբ. 5):

Կատարողականության չափորոշիչները հաստատում են այնպիսի չափորոշիչներ, որոնց ՄՖԿ-ի հաճախորդը պետք է բավարարի ՄՖԿ-ի ներդրումի ամբողջ տևողության ընթացքում: Հաճախորդներից պահանջվում է նաև բավարարել ազգային օրենքի պահանջները:[13]

ՄՖԿ-ն իրականացնում է Կայունության քաղաքականության մեջ ձևակերպված իր պարտավորությունները իր *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգերի* (ԲՍՎԸ) միջոցով, որոնք պարբերաբար արդիականացվում են: Լիդիան ընկերության ներդրումը հավանության էր արժանացել ԲՍՎԸ 1.0. տարբերակով:[14] Այն վերահսկվել է ԲՍՎԸ հաջորդ նորացված տարբերակներով:

ՄՖԿ-ի օժանդակության կարևոր արդյունքներից մեկը եղավ նախագծի միջազգային ԲՍԱԳ-ի պատրաստումը, որը ավարտվեց 2016թ.: Միջազգային ԲՍԱԳ-ը պատրաստվեց ՄՖԿ-ի 2012թ. նորացված Կատարողականության չափորոշիչների հիման վրա: ԲՍԱԳ-ի համար նորացված չափորոշիչների օգտագործումը լավ գործելակերպի մոտեցում էր և համատեղելի էր ՄՖԿ-ի Կայունության շրջանակի պահանջների հետ: ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի նախագծի ԲՍԱԳ-ի վերաքննության գնահատումը, այսպիսով, հղվում է 2012թ. Կայունության շրջանակին:

ՀԱՊԽ նշում է, որ 2016թ. հուլիսից ի վեր ՄՖԿ-ն նոր ընթացակարգ է ընդունել իր ԲՍՎԸ-ում, որը նկարագրում է *փուլային զարգացման նախագծերի մեջ* ՄՖԿ-ի ներդրումների Բ&Ս գնահատման և վերահսկման գործընթացները (ԲՍՎԸ 13): Թեև ՀԱՊԽ-ը ընդունում է այս նոր ընթացակարգի տեղինությունը վաղ բաժնետիրական կապիտալի ներդրումների նկատմամբ, այս զեկուցագիրը չի դիտարկում այն, քանի որ այս հետաքննությունը գնահատում է ՄՖԿ-ի կատարողականությունը մինչև ԲՍՎԸ 13-ի կիրառումը:

[13] ՄՖԿ. *Սոցիալական և բնապահպանական կայունության քաղաքականությունը*, Ներածական, ապրիլ *2006թ.*

[14] ՄՖԿ. *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգերը*, տարբերակ 1.0, ապրիլի 30, 2006թ.

III. Բողոքներում բարձրացված հարցերը

Բողոքները և ՀԱՊԽ գնահատման զեկուցագիրը մի մեծ շարք բնապահպանական և սոցիալական հարցեր են բարձրացնում նախագծի վերաբերյալ, ինչպես նաև մտահոգություններ են արտահայտում կապված ՄՖԿ-ի քաղաքականությունների և գործելակերպերի հետ: Հաշվի առնելով այդ բողոքների բարդության աստիճանը և բարձրացված հարցերի թիվը, ՀԱՊԽ-ը ամփոփել է բողոքատուների մտահոգությունները ստորև զետեղված երեք կատեգորիաների մեջ.

A. ՄՖԿ Քաղաքականությունները և գործընթացները

- Ընհանուր առմամբ ՄՖԿ-ն երաշխիքներ չի տվել առ այն, որ նախագիծը մշակվել է իր պահանջների հետ համապատասխանությամբ, այդ թվում և ՄՖԿ *Բնապահպանական և սոցիալական կայունության քաղաքականության* և ՄՖԿ *Բնապահպանական և սոցիալական կայունության մասին կատարողականության չափորոշիչների* հետ համապատասխանությամբ:

B. Բնապահպանական հարցերը և ԲՄԱԳ-ի գործընթացում վերլուծության որակը

- Գրունտային ջրերի աղտոտման ռիսկերը, որոնք կարող են ազդել Ջերմուկի "առողջարանային" ջրերի (թերմալ աղբյուրների) վրա, և աղտոտման ուժեղացած ռիսկը հանքափոսերից և այլ պայթեցման գործողություններից առաջացած գրունտային ճաքերի պատճառով:
- Ջրի աղտոտման ռիսկերը Վորոտան և Արփա գետերի, Կեչուտ և Վորոտան ջրամբարների, ինչպես նաև Սևանա լճի ջրաբաժանի ավազաններում կատարվող հանքահանության գործողությունների պատճառով:
- Կույտային տարալվացման հարթակին (ԿՏՀ) սպառնացող սեյսմիկ ռիսկերը:
- Հանքահանված ապարների մեջ ուրանի ներկայության հավանականությունից բխող պոտենցիալ ռիսկերը, որոնք կարող են լայնածավալ ճառագայթային աղտոտման պատճառ դառնալ և լրացուցիչ ճառագայթման ռիսկերը ռադոնից:
- Գյուղատնտեսական հողերի և Գնդեվազ գյուղի վրա աղտոտված փոշու տարածման ռիսկերը՝ կախված քամիների գերակշռող ուղղությունից:
- Հայաստանի "Կարմիր գրքում" գրանցված ֆլորայի և ֆաունայի տեսակների ներկայությունը հանքի տեղանքում:[15]

[15] Հայաստանի Կարմիր Գիրքը համապարփակ տեղեկատվության աղբյուր է Հայաստանում բույսերի և կենդանիների տեսակների պահպանման կարգավիճակի մասին: Այն պատրաստվել է օգտագործելով (Բնության պահպանության միջազգային միության Վտանգված տեսակների կարմիր ցանկի չափանիշները:

C. Սոցիալական հարցերը, ԲՍԱԳ-ի և խոհրդակցության գործընթացների որակը

- Հողի օտարման գործընթացներում խոհրդակցության թափանցիկության և համատեղելիության հանգամանքները:
- Արդյոք Գնդեվազի բնակիչների հետ հողի գնման մասին բանակցությունները արվել են՝ մերժելու դեպքում նրանցից հողը բռնագրավելու սպառնալիքի ճնշման տակ:
- Ջերմուկի տուրիստական սեկտորին սպառնացող ազդեցությունների ռիսկերը, որոնք բխում են առողջապահական տուրիզմի համար և, արդյունքում առողջարանի բրենդի հեղինակազրկման առումով, հանքի հարևանության բացասական ազդեցությունների ընկալումից:
- Ջերմուկը նախագծի ազդեցության տարածքի մեջ չընդգրկելու հանգամանքը:
- Մի շարք սոցիալական ազդեցությունների ռիսկը Գնդեվազի համայնքի և նրա բնակչության վրա, որը բխում է նախագծի շինություններին գյուղի հարևանության հանգամանքից, ներառյալ ազդեցությունները առողջության, կենսապահովման միջոցների, և համայնքի բարօրության վրա:
- Խոհրդակցության և մասնակցության գործընթացների համապատասխանությունը, մտահոգ շահագրգիռ կողմերի համար հանրային լսումներին մասնակցելու մատչելիության տեսակետից, և մտահոգությունները առ այն՝ թե արդյոք բողոքները հարիր կերպով են գրանցվել կամ հաստեագրվել:

ՀԱՊԽ-ը նշում է, որ որոշ արծարծված հարցեր վերաբերում են հանքի հեռանկարային կառուցվածքի, զարգացման և շահագործման հանգամանքներին և ոչ երկրաբանական հետախուզության աշխատանքների փուլում նախաձեռնված հատկորոշ գործողություններին: Սակայն, ՀԱՊԽ-ը գտնում է, որ այդ հարցերը չեն կորցնում արդիականությունը այնքանով, որ դրանք պետք է հաստեագրված լինեին ընկերության կողմից պատրաստված ԲԱԳ-ի և ԲՍԱԳ-ի մեջ, որպես նախագծի մասը, մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքի շինարարությունը ակնկալվում էր սկսել ՀԱՊԽ-ի հետաքննության հետ միաժամանակ:

IV. Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծի նկարագրությունը

Այս մասում տրվում է Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծի ընդհանուր նկարագիրը, հիմնականում ելնելով նախագծի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ) փաստաթղթից:[16]

Ինչպես երևում է Քարտեզ 4.1-ից, Ամուլսար նախագիծը գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանից 170կմ դեպի հարավ, Վայոց Ձոր և Սյունիք մարզերի սահմանագծի վրա: Ամուլսարի արտոնագրերը ընդգրկում են ընդհանուր առմամբ 65կմ^2 տարածք: Լիդիան ընկերությունը, երկրաբանական հետախուզության աշխատանքներ է իրականացրել Հայաստանում, Ամուլսարի տարածքում սկսած 2006թ.:[17]

Քարտեզ 4.1.**Նախագծի գտնվելու վայրը**

Աղբյուրը. Լիդիան Ինթերնեշնլ.

ԲՍԱԳ-ի մեջ նշվում է, որ Ամուլսարի ոսկու և արծաթի պաշարները գտնվում են Ամուլսար սարի լեռնակատարի տարածքում, ընդ որում հանքի ենթակառուցվածքները առաջարկվում է կառուցել սարի արևմտյան լանջին, ավելի ցածր բարձրության վրա: Շահագործման հանձնելուց հետո հանքը կիրառելու է ավանդական բաց հանքափոսի հարստահարման տեխնոլոգիան, ոսկի և արծաթ հանելով կույտային տարալվացման եղանակով, դրանից հետո մետաղի կորզման ավանդական գործընթացով և ոսկու ձուլակտորների ստացման եղանակով:[18]

[16] Ամուլսար Գոլդ Փրոջեքտ, ԲՍԱԳ, 2016թ. մայիս http://goo.gl/gsbEjl.
[17] Տես՝ Լիդիանի կորպորատիվ վեբկայքը: http://www.Լիդիանinternational.co.uk/.
[18] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 3, Նախագծի նկարագրությունը, 2016թ. հունիս https://goo.gl/nm5Twj.

Ամուլսար նախագիծը նկարագրվում է որպես երկու հիմնական փուլերից կազմված գործընթաց:[19]

- *Երկրաբանական հետախուզության աշխատանքները:* Այս փուլը ընթացքի մեջ է եղել սկսած դեռ 2006թ.: Այն բաղկացած է երկրախուզական հետազոտություններից և տեխնիկաներից — ներառյալ տարածքի մակերևույթի քարտեզագրումը, երկրաբանական հետախուզության հորատման աշխատանքները և հողի գեոքիմիական կազմության վերլուծությունը — որոնք կիրառվում են ապագա հանքի շինարարության հիմնավորման նպատակով երկրաբանական ռեսուրսի բնութագիրը տալու համար: Տեղանքում կիրականացվեն շարունակական և ընթացիկ երկրաբանական հետախուզության աշխատանքներ, նաև հանքի շինարարության և շահագործման աշխատանքներին զուգահեռ՝ հողի ապարների հնարավոր լրացուցիչ պաշարներ բացահայտելու համար:
- *Շինարարությունը*: Այս փուլը կազմված է հանքի շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների շինարարությունից, հանքանյութի մշակման և թանկարժեք մետաղների տարանջատման գործողություններից, ներառյալ օժանդակ ենթակառուցվածքների շինարարությունը, ինչպես օրինակ վերանորոգման արտադրամասերը և տարածքների վարչական գրասենյակները: Նախա-շինարարական փուլի վաղ աշխատանքները սկսվել են 2016թ. երրորդ եռամսյակում:
- *Շահագործումը*: Շահագործման փուլը կազմված կլինի ոսկու և արծաթի արտադրությունից, որը կգործի՝ բաց հանքափոսերից հանքապարների հանման, և հանքանյութի վերամշակումից հետո, արդեն դատարկ ապարների հեռացման, և դատարկ ապարները հատուկ պոչամբարում կուտակելու եղանակով:
- *Փակումը*: Փակումի փուլը ներառնում է հետ-շահագործման գործողությունները, որոնք կազմված են բաց հանքափոսերի վերականգնման, դատարկ ապարների պոչամբարի (ԴԱՊ) և կույտային տարալվացման հարթակի (ԿՏՀ) փակման գործողություններից: Շինարարության ժամանակ գոյացած հողային կույտերը կօգտագործվեն տարածքի վերականգնման և փակման համար: Ենթակառուցվածքները կքանդվեն կամ կապամոնտաժվեն և խախտված տարածքները կվերականգնվեն արոտավայրերի և այլ կենսական բնակության միջավայրերի, ճիշտ նրանց նման, որոնք առկա են ներկայումս նախագծի ազդեցության և սպասարկման գոտում:

Կառուցվելուց հետո նախագծի հիմնական բաղադրիչներից են լինելու.[20]

- Երեք բաց հանքափոսերը (Արտավազդես/Տիգրանես և Էրատո)
- ԴԱՊ-ը տեղակայվելու է Ամուլսար սարի հյուսիսային կողմում, մոտավորապես 3.8կմ Տիգրանես հանքափոսից և 2.6կմ Էրատո հանքափոսից դեպի հյուսիս
- Ջարդման և մաղման շինությունը
- 5.8կմ երկարությամբ փակ, գրունտային մակարդակի, վերգետնյա հարահոսը՝ ջարդող շինությունից հանքապարը դեպի ջարդված ապարների պահեստավորման կույտը հասցնելու համար, որը գտնվում է բեռնաթափման շինության մոտ ԿՏՀ-ի հարևանությամբ.
- ԿՏՀ, որը գտնվում է ջարդող կայանից մոտավորապես 6.8 կմ դեպի արևմուտք.
- Մերձատար և մոտեցման ճանապարհները
- Վերանորոգման արտադրամասերը

[19] *Ibid. նույն տեղում*

[20] *Ibid. նույն տեղում*

- Թափոնաջրերի վերամշակման շինությունները
- Աշխատողների բնակության ճամբարը, շինարարության փուլի ընթացքում 500-ից 920 աշխատող տեղավորելու համար անհրաժեշտ կացարանային տարածքով և ենթակառուցվածքներով:

Նախագծի շինություններին ամենամոտ գտնվող գյուղը Գնդեվազն է, որը 2014թ. ուներ 899 մարդ բնակչություն, և որը գտնվում է ապագա ԿՏՀ-ից մոտավորապես 1 կմ հեռավորության վրա: ԴԱՊ-ը կտեղակայվի Ջերմուկ առողջարան քաղաքից մոտավորապես 7կմ հեռավորության վրա, որը 2014թ. ուներ ավելի քան 7,500 բնակիչ և մեծ տուրիստական գրավչության կենտրոն էր հանդիսանում տարածաշրջանի համար: Ջերմուկը գտնվում է Էրատո հանքափոսից 10կմ և Տիգրանես/Արտավազդես հանքափոսերից 11կմ հեռավորության վրա:[21]

Ակնկալվում է, որ հանքահանությունը և դրան հարակից արտադրական գործողությունները կսկսվեն 2018թ. առաջին եռամսյակում մերձատար ճանապարհների, ԴԱՊ-ի, հանքանյութի վերամշակման, և օժանդակ շինությունների, այդ թվում ԿՏՀ-ի և հարակից ենթակառուցվածքների շինարարությունից հետո: Նախագծի բաղադրիչները զբաղեցնում են ընդհանուր առմամբ 609 հեկտար (հա) տարածք: Այս տարածքը, այն տարածքի հետ միասին որը գտնվում է նախագծի ազդեցության և սպասարկման գոտու անմիջական հարևանությամբ, ամենայն հավանականությամբ, շինարարության հետևանքով ենթարկվելու է ֆիզիկական փոփոխության. Ազդեցության ենթարկված հողերի ընհանուր ծավալային հանրագումարը մոտավոր հաշվարկով կազմում է 930հա: Կա լրացուցիչ սահմանափակ մուտքով 383հա տարածք (որը կամ ցանկապատված կլինի անվտանգության նկատառումներով կամ ժամանակավորապես փակ կլինի բաց հանքափոսերում պայթեցման աշխատանքների իրականացման ժամանակ):[22]

Շինարարության ժամանակ աշխատուժի պիկային ներհոսքը մոտավոր հաշվարկով գնահատվում է մոտավորապես 1,300 մարդ: Հանքի շահագործման ընթացքում ընդհանուր աշխատուժը մոտավոր հաշվարկով կկազմի 657 աշխատող:[23]

Քարտեզ 4.2-ի վրա ցույց են տրված նախագծի հիմնական բաղադրիչները, ինչպես նաև նախագծի տեղական հարևանությունը (գյուղերը/քաղաքները, գետերը և ջրային հոսանքները, ճանապարհները, երկաթուղագծերը, ջրամբարները, և այլն):

[21] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.12, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ – Ժողովրդագրությունը, 2016թ. մայիս և Գլուխ 3, Նախագծի նկարագրությունը, 2016թ. հունիս:
[22] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 3, Նախագծի նկարագրությունը, 2016թ. հունիս
[23] *Ibid. նույն տեղում*

Քարտեզ 4.2. **Ամուլսար նախագծի տեղանքի քարտեզը**



Աղբյուրը. Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 3, Նախագծի նկարագրությունը, պատկեր 3.1, 2016թ. հունիս:

V. ՀԱՊԽ-ի դիտարկումները Գնդեվազ համայնքի մասին

Գնահատման համար ենթատեքստ տրամադրելու նպատակով այս հատվածը նկարագրում է Գնդեվազ համայնքը: Գնդեվազ գյուղն արժանի է հատուկ դիտարկման, որովհետև այն նախագծի ենթակառուցվածքներին ամենամոտ գտնվող համայնքն է, մասնավորապես, կույտային տարալվացման հարթակին: Այն նաև համարվում է նախագծի ամենամեծ անմիջական ազդեցությունը կրող համայնքը, երկուստեք և դրական, և բացասական առումներով: Այս տեղեկույթը հիմնականում վերցված է նախագծի ԲՍԱԳ-ից և հարակից փաստաթղթերից:[24]

Այս հատվածը նաև խոսում է այն դիտարկումների մասին, որոնք արվել են ՀԱՊԽ-ի հետաքննության նպատակով իրականացված տեղական այցելության ժամանակ: Հետաքննության թիմը այցելության ժամանակ հանդիպել է մի խումբ բողոքատուների մոտավորապես 10 ներկայացուցիչների հետ: ՀԱՊԽ-ի թիմը նաև հանդիպել է մի քանի անհատների հետ, ովքեր հող են վաճառել ընկերությանը, և ոչ պաշտոնապես զրուցել է ավելի քան 20 ուրիշ բնակիչների հետ: Այս դիտարկումները և մտքերի փոխանակումները իրականում չեն ապահովում համայնքի անդամների ընկալումների ներկայացուցչական ընտրանին: Այդուհանդերձ, ավանդական կենսապահովման միջոցների և սոցիալական կառուցվածքի վրա նախագծի ընդհանուր ազդեցության վերաբերյալ մտահոգություններն ակնհայտ էին՝ ՀԱՊԽ-ի կողմից Գնդեվազ կատարած այցելության ժամանակ:

Ելնելով մինչև 2013թ. ընդունված հանքի տեխնիկական կառուցվածքից, Գնդեվազի վրա ակնկալվող ազդեցությունները հարաբերականորեն թույլ էին: Գյուղին պատկանող որոշ հողատարածքներ, որոնք գտնվում են սարի գագաթին մոտ, ճանաչվեցին որպես պոտենցիալ ազդակիր: Ակնկալվում էին նաև ազդեցություններ տրանսպորտային երթևեկությունից, որովհետև գյուղը մոտ է դեպի հանք տանող հիմնական ճանապարհին, որի հետ շրջանառվում են հանքի հիմնական ենթակառուցվածքների հետ կապող բոլոր չորս մերձատար ուղիները; մեկ մերձատար ճանապարհ անցնում է Գնդեվազի հարավով և մեկն անցնում է անմիջականորեն գյուղի դիմացով:

2013-ից 2015թթ. շինարարության տեղանքի հաջորդական փոփոխություններից հետո, որոնք նախագծի մեջ արվեցին, որպեսզի ընկերությունը բավարարի Հայաստանի օրենսդրությամբ կանոնակարգվող պահանջները, Գնդեվազը մոտ կլինի նաև կույտային տարալվացման հարթակին (ԿՏՀ) և քիմիական ադսորբցիայի/ներծծման, դեսորբցիայի/կորզման, վերականգնման կայանին (ԱԴՎ/ADR): Հարահոսային համակարգը, տրանսպորտային ուղիները, և այլ շինությունները, որոնք մտնում են նախագծի ազդեցության և սպասարկման գոտու մեջ, անցնելու են համայնքի հողերով՝ սկսած սարի գագաթից մինչև ստորոտը, գյուղի մակարդակից էլ ցածր: Ներկայիս նախագծային կառուցվածքով, հողի վրա ազդեցությունների մեծ մասը, և ուստի նաև սոցիալական ազդեցությունները և պոտենցիալ առողջական ռիսկերը, ինչպես նաև արդեն նախագծի փակումից հետո անորոշ ազդեցությունների մեծ մասը, Գնդեվազը դարձնում են ամենաազդակիր համայնքը: Այն նաև աշխարհագրորեն ամենամոտն

[24] Այստեղ ընդգրկված է տեղեկույթ, վերցված երկուստեք մեկնարկագծի և ազդեցության մասին Գլուխներից որոնք վերաբերում են ժողովրդագրությանը, տնտեսությանը, կենսապահովման միջոցներին, հողի օգտագործմանը, համայնքային առողջությանը, երթևեկությանը/տրանսպորտին և էկոհամակարգային ծառայություններին:

է լինելու շինարարական ճամբարին և, բնականաբար, ազդեցություններ կլինեն նաև հանքի հետ կապված ավելի լայն սոցիալական փոփոխությունների արդյունքում:

2015թ. Գնդեվազում կար 211 տնային տնտեսություն և համայնքի ընդհանուր բնակչությունը կազմում էր 899 մարդ:[25] Որպես գյուղական համայնք, այն հիմնականում կախված է գյուղատնտեսական արտադրությունից: Ամբողջ Հայաստանի մյուս բոլոր գյուղական համայնքների նման, այն աղքատ է, բայց ունի հարաբերականորեն կրթված բնակչություն, և գրագիտության շատ բարձր մակարդակ: Տնտեսական գործունեությունը 2010թ. բնութագրվում էր գրեթե հավասար կախվածությամբ գյուղատնտեսությունից և տարբեր տեսակի պետական նպաստներից: Գնդեվազի զբաղվածության ցուցանիշները 2014թ., ըստ համայնքապետի զեկուցագրի, կազմում էին մոտավորապես 23 տոկոս գյուղատնտեսության մեջ և ավելի պակաս քան 10 տոկոս հանրային սեկտորում կամ այլ գործարար ոլորտներում:[26] Համայնքում զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են, ինչն ակնհայտ է մեկնարկագծային տեղեկույթից, հաշվի առնելով այն, որ հարցվածների 37 տոկոսը 2011թ. նշել է, որ գործազուրկ է: Պետք է նշել նաև, որ բնակչության ավելի քան 16 տոկոսը թոշակառուներ են, որոնց թիվն այստեղ ավելի մեծ է, քան ուրիշ գյուղական համայնքներում և ավելի բարձր է, քան միջին ազգային ցուցանիշը: Մեկնարկագծային տեղեկույթից պարզ է, որ մարդիկ մեծապես կախված են թոշակներից, ինչպես նաև այլ պետական նպաստներից, ինչը խոսում է սղաճի նկատմամբ բնակչության խոցելիության մասին:[27]

ՀԱՊԽ այցելության ժամանակ տեղի ունեցած զրույցներից պարզ էր, որ կա որոշակի լարում մի կողմից նրանց միջև, ովքեր կողմ են հանքի գործունեությանը և մյուս կողմից նրանց միջև, ովքեր դեմ են հանքին, և ակնհայտ էր խմբերի միջև սոցիալական ճեղքի առկայությունը: Որոշ բնակիչներ շեշտում էին զբաղվածության հնարավորությունները որպես նախագծի ազդեցության դրական կողմ: Ուրիշները շեշտադրում էին խմբերի միջև եղած տարբերությունները և վախ էին արտահայտում, որ նրանք "ովքեր դուրս կմնան" նախագծի օգուտներից, ամենավատ վիճակում են հայտնվելու հենց իսկ հանքի շինարարության պատճառով: Մի քանի բնակիչներ նաև նշեցին, որ իրենք վախենում են, որ համայնքն ընդհանուր առմամբ կաղքատանա և կլքվի, և որ նրանք, ովքեր վաճառել են իրենց հողերը, փող են ունեցել Երևան տեղափոխվելու համար, բայց նրանք ովքեր իրենց հողերը չեն վաճառել, ստիպված են լինելու մնալ: Եվ վերջապես, բնակիչները մտահոգված էին նաև այն կապակցությամբ, որ իրենց համայնքը փոխակերպվում է արդյունաբերական քաղաքի:

Ըստ 2010թ. տնային տնտեսությունների մոտ անցկացված հարցումների, որոնց վրա հղում է արվում ընկերության սոցիալական մեկնարկագծային գնահատականի մեջ, Գնդեվազում գյուղատնտեսական արտադրության 75 տոկոսը սպառվում է տեղում: Այդ մասին հավաստում են նաև համայնքին պատկանող այգիները, բանջարանոցները և նույնիսկ փոքրածավալ մշակված դաշտերը, որոնք սփռված են գյուղի շրջապատի հողերում և բնակիչների տնամերձ հողակտորներում: Ակնհայտ է, որ սննդի անվտանգության նշանակալի մասը ներկայումս

[25] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.12, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ – Ժողովրդագրությունը, մայիս, 2016թ. https://goo.gl/uwMJtT.

[26] Տվյալները վերցված են գյուղապետերի կողմից պատրաստված "Գյուղի բնակչության անձնագրերի" մասին զեկուցագրից:

[27] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.12, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, կենսապահովման միջոցների գործունեությունը և զբաղվածության հնարավորությունները, մայիս 2016թ. https://goo.gl/7iKV1R.

ապահովվում է հենց իսկ համայնքի անդամների կողմից, սեփական արտադրության միջոցով, և ոչ սննդամթերքի գնման միջոցով: Մարդիկ ապրում են հողի առողջությունից մեծ կախվածության պայմաններում, և ՀԱՊԽ-ի այցելության ժամանակ Գնդեվազի բնակիչները մտահոգություն հայտնեցին, որ իրենց վրա բացասական ազդեցություն կունենա հանքի զարգացման հետ կապված աղտոտումը և ճառագայթումը: Սա գերիշխող մտահոգություն էր, նույնիսկ այն բնակիչների մոտ, ովքեր ընդհանուր առմամբ կողմ էին հանքի գոյությանը:

Սոցիալական մեկնարկագիծը նաև նույնականացրել էր, որ ծիրանը Գնդեվազի համար մեծ արժեք ունեցող միրգ է, և տեղացիների պնդումով շատ բարձր է գնահատվում ազգային և միջազգային շուկաներում: Չնայած այդ արժեքին, 2010թ. հարցումին մասնակցածների 60 տոկոսը հայտնել էր, որ իրենց ամսական եկամուտը $210 դոլարից քիչ է լինում ծիրանի բերքահավաքի սեզոնում: Գնդեվազն ունի նաև մեծաքանակ անասուններ: Տեղացի բնակիչները մտահոգություն հայտնեցին նաև իրենց արտադրանքի շուկաների մասին և, մասնավորապես, մտահոգություն՝ իրենց "բրենդային" արժեքը կորցնելու մասին, որն առայժմ ունեն շուկայում: Մի շարք բնակիչներ, ներառյալ բողոքատուները, մտահոգված էին առողջական ազդեցությունների մասին, որոնք կարող են առաջանալ, երբ անասունները կամ մեղուները սկսեն սննդի հետ կլլել փոշու մեջ պարունակվող ծանր մետաղները կամ ցիանիդային գազը:

Տարբեր անհատների կողմից բարձրացված հատկորոշ հարցերից և այլ զրույցներում հնչած մտահոգություններից բացի, ՀԱՊԽ-ը դիտարկել է նաև մի շարք այլ հանգամանքներ, որոնք ազդում են երկուստեք ընկերության և ընկերության կողմից հանրությանը տրամադրված տեղեկույթի ընկալման վրա:

Առաջինը. համայնքի անդամները, ընդհանուր առմամբ, ծայրահեղ անվստահությամբ են լցված կառավարության նկատմամբ և համոզված են, որ կան կոռուպցիայի բազմաթիվ մակարդակներ՝ անձնական շահի, ազգային, և այլ մակարդակների վրա, ընդհուպ մինչև գյուղերի ղեկավարությունը: Ազգային կազմակերպությունների կամ փորձագետների կողմից տրամադրված ուսումնասիրությունները և բացահայտումները ընդունվում են նույնպիսի անվստահությամբ, մինչդեռ միջազգային փորձագետների կարծիքը դիտվում է որպես առավել վստահելի:

Երկրորդը. միջազգային չափորոշիչներով գործող հանքարդյունաբերական նախագծերի և ԲՍԱԳ-ների հետ գործ ունենալու փորձի պակասությունը նշանակում է, որ կրկնվող գործընթացը և նախագծի տեխնիկական կառուցվածքի մեջ տեղ գտած փոփոխությունները — որոշները քաղաքական հարցերի պատճառով, իսկ որոշներն էլ ֆինանսական/տեխնիկական սահմանափակումների — նվազեցրել են գործընթացի վստահելիությունը որոշ դիտորդների համար: Գրեթե 10 տարի տևած երկրաբանական հետախուզության աշխատանքները և նախագծի տեխնիկական կառուցվածքի մեծածավալ փոփոխությունները կասկածի հիմքեր և վստահելիության մարտահրավերներ են ստեղծել ընկերության համար:

Այս ենթատեքստում, ՀԱՊԽ-ը իր քննարկումների ժամանակ բացահատել է, որ հանքի շուրջը ծավալվող դեբատների բոլոր կողմերը ներկայացնող տեղական բնակիչները, ներառյալ ընկերության Համայնքի հետ կապի հանձնաժողովները, այն կարծիքին էին, որ ՀԿ-ները, որոնք քննադատում են նախագիծը, կարևոր աշխատանք են կատարում՝ բարձրաձայնելով մտահոգությունները: Բնակիչները մտահոգություններ արտահայտեցին բողոքներում

բարձրացված հարցերի մեծամասնության կապակցությամբ՝ հաստատելով, որ մտահոգությունները բխում են համայնքի անմիջականորեն ազդակիր բոլոր անդամներից, և որ ՀԱՊԽ-ի այցելության ժամանակ, այս մտահոգությունները դեռ լիովին չէին փարատվել. ՀԱՊԽ-ը նշում է ՄՖԿ-ի դիրքորոշումը, որ իր վերահսկման այցելությունների ժամանակ արված դիտարկումները տարբեր են այն դիտարկումներից, որոնցով Գնդեվազի գյուղացիները կիսվել են ՀԱՊԽ-ի հետ: ՀԱՊԽ-ը նաև նշում է ՄՖԿ-ի դիրքորոշումը, որ համայնքի ոչ բոլոր անդամներն են համամիտ ՀԱՊԽ-ի հետ կապված ՀԿ-ների դերի մասին գյուղացիների տեսակետների հետ:

VI. ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական գնահատումը և Լիդիան Ինթերնեշնլ/Ամուլսար նախագծի վերահսկումը

Որևէ նախագիծ ֆինանսավորելիս, ՄՖԿ-ն առաջին հերթին կատարում է արժեքային գնահատման գործողություն, որպեսզի լիովին գնահատի ներդրումի համար դիտարկվող նախագծի բիզնես պոտենցիալը, ռիսկերը և հնարավորությունները: Երբ նախագիծը հաստատվում է, և ՄՖԿ-ն կատարում է ներդրումը, այն մշտադիտարկվում է նախագծի իրականացման ամբողջ բոլորաշրջանի ընթացքում, որպեսզի երաշխավորվի ՄՖԿ-ի կիրառելի քաղաքականությունների և չափորոշիչների հետ համապատասխանության պահպանումը:

Այս հատվածի նպատակն է ընդհանուր առմամբ գնահատել ՄՖԿ-ի կատարողականությունը 2007թ.-ից մինչև 2016թ. նախագծի իրականացման բոլորաշրջանի այս երկու փուլերում: Այս հատվածում քննարկվում է նախագծի համար ՄՖԿ-ի կատարած առաջին արժեքային գնահատումը և ՀԱՊԽ-ի եզրակացությունը, որ այն համարժեք չի եղել ռիսկին, և, մասնավորապես, որ պակասել է Բ&Ս հարցերի վաղ համալիր ամփոփումը: ՄՖԿ-ի նախաներդրումային վերաքննության թերությունները խնդիրների վերածվեցին վերահսկման առաջին տարիների ընթացքում: Սակայն, ՀԱՊԽ-ը նշում է, որ սկսած 2013թ., նկատելի առաջընթաց է եղել նախագծի նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկման մեջ: Արդյունքը եղել է հաճախորդի Բ&Ս կատարողականության նշանակալի բարելավումը, մասնավորապես, երկրախուզական փուլի ԲՍԿՀ և միջազգային չափորոշիչների համապատասխան ԲՍԱԳ մշակելու միջոցով:

Բողոքատուների կողմից բարձրացված ավելի հատկորոշ հարցերը քննարկվում են սույն զեկուցագրի VII հատվածում:

A. ՄՖԿ-ի կողմից նախագծի Բնապահպանական և սոցիալական վերաքննությունը

Նախա-ներդրումային պահանջները

Նախա-ներդրումային փուլում ՄՖԿ վերաքննում է առաջարկված ներդրումի Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները և համաձայնության է գալիս հաճախորդի հետ այդ ռիսկերը չեզոքացնելու կամ մեղմացնելու միջոցների շուրջ, համաձայն ՄՖԿ-ի *Բնապահպանական և սոցիալական կայունության քաղաքականության* և *Բնապահպանական և սոցիալական կայունության Կատարողականության չափորոշիչների:*

Ինչպես պահանջում է 2006թ. Կայունության քաղաքականությունը, ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը պետք է "համապատասխանի նախագծի բնույթին և ծավալներին" և "համարժեք լինի սոցիալական և բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների մակարդակին" (պարբ. 13): Համաձայն Բ&Ս վերաքննության, ՄՖԿ գտնում է, որ Բ&Ս ռիսկերը հաճախորդի կողմից գնահատված են և "հաճախորդի պատրաստակամությունը և կարողությունը" այս ռիսկերը կառավարելու համար համարժեք է (պարբ. 15): ՄՖԿ նաև դիտարկում է հաճախորդի "պատմությունը" կապված Բ&Ս հարցերի հետ:[28] Կայունության քաղաքականության կենտրոնական սկզբունքներից մեկն այն է, որ "ՄՖԿ-ն որևէ նոր բիզնես չի ֆինանսավորում, եթե հաճախորդը չի ընկալվում որպես ունակ կառավարելու Կատարողականության չափորոշիչները նշանակալի ժամանակահատվածի ընթացքում" (պարբ. 17):

2006թ. ԲՍՎԸ[29] պահանջում է, որպեսզի ՄՖԿ նույնականացնի որևէ անմիջական ներդրումի հետ կապված, մտահոգության տեղիք տվող Բ&Ս հարցերը, ապացույց ստանա դրանք համատեղ կառավարելու ընկերության ունակության մասին, ճանաչի ազդեցությունների ուժգնությունը, և նույնականացնի կիրառելի Կատարողականության չափորոշիչները: Ակնկալվում է, որ հաճախորդի ԲՍԿՀ-ը կվերաքննի և կնույնականացնի հաճախորդին անհրաժեշտ որևէ արտաքին փորձագիտական օժանդակության կարիքը:

ՄՖԿ-ի Կատարողականության չափորոշիչ թիվ 1-ը (ԿՉ1) ձևակերպում է ՄՖԿ-ի հաճախորդի պահանջները սոցիալական և բնապահպանական գնահատման և կառավարման համակարգերի նկատմամբ: Այն պահանջում է, որ հաճախորդն ունենա ԲՍԿՀ (պարբ. 3) և համապատասխան սոցիալական և բնապահպանական գնահատման գործընթաց՝ հիմնված նախագծի ճշգրիտ նկարագրության և համապատասխան սոցիալական ու բնապահպանական մեկնարկագծային տվյալների վրա (պարբ. 4): Այն պահանջում է, որպեսզի նախագծի ռիսկերը և ազդեցությունները վերլուծվեն նախագծի ազդեցության ոլորտների ենթատեքստում և կապակցված լինեն նախագծի բոլորաշրջանի հիմնական փուլերի հետ, ներառյալ նախա-շինարարության փուլը (պարբ. 5): ԿՉ1-ը այնուհետև հատկանշում է, որ ամբողջական կամ սահմանափակ/կիզակետված ԲՍԱԳ կարող է պահանջվել (պարբ. 8) հաճախորդի

[28] ԲՍՎԸ 3, պարբ.3.2.3, տարբերակ 1, ապրիլ, 2006թ.

[29] ՄՖԿ *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգերը*, Տարբերակ 1.0, ապրիլի 30, *2006թ.*

կազմակերպության հստակ կազմակերպչական կառուցվածքների և պատասխանատվությունների բաշխման մասին (պարբ. 17):

ԿՉ1-ը նաև պահանջում է, որ ազգային օրենքի հետ համապատասխանությունը հասցեագրվի հաճախորդի Բ&Ս Գնահատման (պարբ. 4) և ԲՍԿՀ (պարբ. 14) միջոցով: Դա ներառնում է ազգային օրենքի հետ համապատասխանության մասին մեկնարկագծային տվյալների հավաքումը (պարբ. 4), բացերի հասցեագրումը Գործողությունների ծրագրի միջոցով (պարբ. 16) և համապատասխանության մշտադիտարկումը և զեկուցումը (պարբ.եր 24–26):

ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական նախա-ներդրումային վերաքննությունը

ՄՖԿ-ն ավարտեց Լիդիան ընկերության մեջ իր առաջին ներդրումի արժեքային գնահատումը 2007թ. մայիսին: ՄՖԿ-ի կողմից գնահատման իրականացման պահին Լիդիան ընկերությունը շարունակում էր իրականացնել առաջարկված երկրաբանական հետախուզության աշխատանքները Կոսովոյում, Թուրքիայում և Հայաստանում գտնվող իր նախագծերում: ՄՖԿ-ի ներդրումի նպատակն էր օժանդակել այս երկրաբանական հետախուզության նախաձեռնություններից յուրաքանչյուրին, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումները, և այլ նախապատրաստական գործունեությունը: Ընկերության ուշադրության հիմնական կիզակետը, այն ժամանակ, երբ ՄՖԿ կատարեց իր առաջին ներդրումը, ուղղված էր Կոսովոյի նախագծի վրա, որը ընկերության նախագծային փաթեթում այդ պահին ամենաառաջադիմած նախագիծն էր: Ամուլսար նախագիծը դեռ զարգացման վաղ փուլում էր, և դեռ սահմանափակ աշխատանքներ էին կատարվել նախագծի գտնվելու վայրում:

ՄՖԿ-ի կողմից ներդրումի կատարման պահին Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագիծը դեռ համատեղ ձեռնարկության համաձայնագրի մաս էր Նյումոնթ (Newmont) միջազգային հանքարդյունաբերական ընկերության հետ: ՄՖԿ-ի վաղ փաստաթղթերում ասվում է, որ ներդրումը ելնում էր ՄՖԿ-ի ուրիշ ներդրումներից քաղած դասերից: Այնտեղ ասվում էր, որ սպոնսորն ուներ լավ հիմնավորված արդյունաբերական պատմություն, պատրաստակամություն էր հայտնում կիրառել Բ&Ս լավագույն գործելակերպը, և պատրաստ էր հասցեագրել հիմնական Բ&Ս հարցերը երկրաբանական հետախուզության աշխատանքների փուլում:

ՄՖԿ-ն իրականացրել էր Բ&Ս գնահատման այցելություններ՝ ընկերության նախագծերի տեղանքներում, Կոսովոյում և Հայաստանում 2007թ. մայիսին: Ընդ որում մինչ ՄՖԿ-ի Բ&Ս մասնագետը այցելում էր Կոսովոյի տեղանքները, միայն ՄՖԿ-ի ներդրումային անձնակազմի անդամն էր այցելել Ամուլսար նախագծի տեղանքը: Այդուհանդերձ, ՄՖԿ-ի խորհրդի փաստաթղթերում ասվում է, որ այն նախաձեռնել էր Ամուլսարում ընկերությանը պատկանող տեղանքում Բ&Ս հարցերի ամբողջական ֆիզիկական արժեքային գնահատում: ՄՖԿ-ի Ամուլսարի տեղանք կատարած արժեքային գնահատման այցելության եզրակացություններում ասվում էր, որ նախագիծը վայելում է համայնքների օժանդակությունը և չի ունենա որևէ բացասական ազդեցություն բնական միջավայրի վրա:

ՄՖԿ-ն հրապարակեց Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփումը (ԲՍՎԱ) և Առաջարկված ներդրումի ամփոփումը (ԱՆԱ) 2007թ. մայիսի ներդրումի համար:[30] ԲՍՎԱ-ում ասվում էր, որ մինչդեռ բոլոր Կատարողականության չափորոշիչները կիրառելի են այս ներդրումի նկատմամբ, միայն ԿՉ1 –ից մինչև ԿՉ4-ը անմիջապես տեղին կլինեն, հաշվի առնելով նախագծի ռիսկերը երկրաբանական հետախուզության աշխատանքների ժամանակ: ԲՍՎԱ-ում նշվում էր, որ չափորոշիչների տեղինությունը՝ ԿՉ5 (Հողի օտարում և Հարկադիր վերաբնակեցում) և ԿՉ8 (Մշակութային ժառանգություն). ընկերության յուրաքանչյուր նախագծի համար կորոշվեն հանքի տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության ավարտից հետո: Այնուհետև այնտեղ նշվում էր, որ "տեղերում կատարած այցելությունների և նախագծի վերաքննության մասին տեղեկույթն առաջարկում է, որ ազդեցություններ չեն լինի կապված կենսաբազմազանության և բնական ռեսուրսների հետ (ԿՉ6): Սակայն, չկան "Ամուլսար նախագծի Բ&Ս ազդեցությունների մասին ՄՖԿ-ի եզրակացությունները օժանդակող փաստարկներ":

Նախագծին տրվեց կատեգորիա B բնութագիրը, ինչը նշանակում է, որ նախագծից ակնկալվում էին սահմանափակ պոտենցիալ Բ&Ս ռիսկեր և ազդեցություններ, որոնք թվով քիչ էին, հիմնականում դառնալի/վերականգնելի և որոնք կարող էին անմիջապես հասցեագրվել մեղմացնող միջոցառումներով: ՄՖԿ-ի տրամաբանությունը նախագծին B կատեգորիայի բնութագիր տալու մեջ բխում էր այդ ժամանակ հաճախորդի նախագծերի վաղ փուլի առանձնահատկություններից և այն փաստից, որ ՄՖԿ-ի ներդրումը պիտի ֆինանսավորեր միայն երկրաբանական հետախուզության աշխատանքները հաճախորդին պատկանող սեփականության վրա, ներառյալ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումները, և այլ նախապատրաստական գործունեությունը:

ՄՖԿ-ի նախնական ներդրումին վերաբերող Խորհրդի փաստաթղթերում նշվում է, որ ՄՖԿ իրականացրել է մանրամասն Բ&Ս գնահատում և եզրակացրել է, որ ընկերության նախագծերը Կոսովոյում և Հայաստանում ունեցել են Լայն հանրային օժանդակություն (ԼՀՕ). ՀԱՊԽ նշում է, որ ՄՖԿ որևէ տեղեկույթ չի հրապարակել ԼՀՕ գնահատելու համար օգտագործված մեթոդաբանության մասին:

ՄՖԿ-ն նաև նշում էր, որ հաճախորդը, ցանկանալով հանդերձ իր նախագծերն իրականացնել լավ արդյունաբերական գործելակերպին համահունչ եղանակով, այդուհանդերձ, ոչ խոշոր/նորաստեղծ ընկերություն էր, որը դեռ գտնվում էր զարգացման վաղ փուլում և ներքին կառավարման սահմանափակ կարողություններ ուներ, և ուստի ակտիվորեն ակնկալում էր ՄՖԿ-ի ուղղորդումը Բ&Ս հարցերը հասցեագրելու և իր ներքին Բ&Ս կառավարման կարողությունները կառուցելու մեջ:

Միևնույն ժամանակ, ՄՖԿ նշում էր, որ Նյումոնթ ընկերության ներգրավումը, որպես Ամուլսար նախագծի ամենախոշոր ներդրողի, պետք է փարատեր ընկերության կողմից Բ&Ս հարցերը կառավարելու կարողության կապակցությամբ ծագած անհանգստությունը, ինչպես նաև

[30] ՄՖԿ-ի ներդրումը Լիդիան Ռեսորսիզ Քոմփանի Լթդ. ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, մայիս, 2007թ.http://goo.gl/3qx7hs.

երաշխավորեր, որ նախագիծը կզարգանա արդյունաբերության լավագույն գործելակերպին համահունչ: [31]

Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՍԳԾ) պատրաստվեց ՄՖԿ-ի կողմից և համաձայնեցվեց ընկերության հետ մինչև ներդրումը:[32] Համապատասխանաբար, ԲՍԳԾ-ի մեջ մտան ընկերությունից Ամուլսար նախագծի նկատմամբ հետևյալ պահանջները.

- Վարձել փորձառու խորհրդատու, որը կվերահսկի Բ&Ս կառավարումը և մեկնարկագծային աշխատանքը (6 ամիս ներդրումից հետո);
- Մշակել կորպորատիվ ԲՍԿՀ երկրախուզական գործողությունների համար, կիրառման համար փոխադարձաբար ընդունելի վերջնաժամկետներով, և նշանակել համապատասխան Բ&Ս անձնակազմ (մեկ տարի ներդրումից հետո);
- Իրականացնել բնապահպանական և սոցիալական մեկնարկագծային ուսումնասիրություններ Ամուլսարում՝ Հայաստանի օրենքների և ՄՖԿ-ի պահանջների հետ համապատասխանությամբ;
- Իրականացնել Լիդիան ընկերության ակտիվների նկատմամբ Առողջության, ապահովության, բնական միջավայրի, և համայնքի (ԱԱԲՀ) անկախ աուդիտ, ներառյալ ԲԱԳ/ՍԱԳ պարտավորությունների, ԲՍԿՀ իրականացման, և տեղանքի վերականգնման ծրագրերի վերաքննությունը, և վերստուգել համապատասխանությունը ազգային օրենքների և ՄՖԿ պահանջների հետ; և
- Զեկուցել տարեկան՝ հանրային խոհրդակցության և համայնքի զարգացման առաջընթացի մասին:[33]

Ինչպես ներկայացվել էր Խորհրդին, ՄՖԿ-ն ակնկալում էր, որ ընկերությունը կբավարարի ՄՖԿ-ի բոլոր պահանջները մինչև 2008թ.: ՄՖԿ-ն նաև նշում էր, որ Ամուլսար նախագիծը բավարար ներուժ ուներ՝ բաց հանքափոսի մեթոդով աշխատող համաշխարհային կարգի ոսկու հանք դառնալու համար:

Նախագիծը հաստատվեց ՄՖԿ-ի Խորհրդի կողմից 2007թ. հունիսին: Բաժնետերերի համաձայնագիրը, որը ստորագրվեց 2007թ. հուլիսին, պահանջում էր, որպեսզի ընկերությունը ընդունի ԲՍԳԾ և Մշտադիտարկման տարեկան զեկուցագրեր (ՄՏԶ) ներկայացնի ՄՖԿ-ին իր գործունեության մասին:

[31] 2010թ. մարտին Լիդիանը հայտարարեց, որ գնելու է Նյումոնթ/Newmont ընկերության բաժինը Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծում http://goo.gl/e51oI3.

[32] ՄՖԿ ներդրումը Լիդիան Ռեսորսիզ Քոմփանի Լթդ. ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր*, մայիս, 2007թ. https://goo.gl/bRIFSS.

[33] *Ibid. նույն տեղում*

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

ՀԱՊԽ-ը թերություններ է գտնում ՄՖԿ-ի կողմից Ամուլսար նախագծի Բ&Ս նախաներդրումային վերաքննության մեջ: Մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է, հաճախորդից ստացված Բ&Ս տեղեկույթի բացակայության մասին և ՄՖԿ-ի Բ&Ս մասնագետի կողմից տեղանք այցելելու կարիքի մասին: Այս ենթատեքստում, Ամուլսարի Բ&Ս ռիսկերի փորձագիտական ամփոփումը տեղին կլիներ: Բ&Ս ամփոփումը կօգներ ճանաչել հիմնական ռիսկերը և մի շրջանակ կտար ԲՍԱԳ-ի և մեկնարկագծային ուսումնասիրությունների զարգացման համար:

ՀԱՊԽ-ը նաև նշում է, որ ակնհայտ է ՄՖԿ-ի կողմից հաճախորդի ղեկավարության պատրաստակամության հայտարարությունների գերագնահատումը: Հաշվի առնելով նախագծի բարդության աստիճանը, հաճախորդի կարողությունների մեջ ակնհայտորեն ճանաչված բացերը, և նրա մոտ Բ&Ս պատմական գրառումների բացակայությունը, մի ավելի մանրամասն և համակարգված Գործողությունների ծրագիր պետք է առաջարկվեր նախաներդրումային փուլում:

<u>Այս ենթատեքստում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը չի բավարարել ռիսկին համարժեք լինելու չափորոշիչը:</u>

Որպես ՄՖԿ-ի Բ&Ս նախաներդրումային վերաքննության մեջ տեղ գտած թերությունների հետևանք, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն բավարար հիմք չուներ եզրակացնելու, որ ընկերությունը կկարողանա բավարարել ՄՖԿ-ի բոլոր պահանջները մինչև 2008թ., ինչպես ներկայացվել էր Խորհրդին:

<u>Այսպիսով, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը չի բավարարել Կայունության քաղաքականության պահանջներին (2006), պարբ. 17:</u>

Ինչ վերաբերում է ներդրումին կատեգորիա տալուն, ՀԱՊԽ նշում է, որ ՄՖԿ դիտարկել է երկրաբանական հետախուզության աշխատանքների ազդեցությունները, և խնդրել է, որպեսզի հաճախորդը մի ԲՍԿՀ մշակի երկրախուզական գործողությունների համար և մի Բ&Ս խորհրդատու վարձի: Այս ենթատեքստում, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՖԿ-ի ներդրումի ժամանակ նախագիծը գտնվում էր դեռ զարգացման վաղ փուլում, <u>ՀԱՊԽ գտնում է, որ նախագծին B կատեգորիա տալը համարժեք է եղել:</u>

B. Նախագծի բնապահպանական և սոցիալական վերահսկումը ՄՖԿ-ի կողմից

Վերահսկման ընդհանուր պահանջները

Ներդրումը հաստատելուց և կատարելուց հետո ՄՖԿ-ն մշտադիտարկում է նախագիծը, որպեսզի երաշխավորի համապատասխանությունը ներդրումային պայմանագրերի մեջ հատկորոշված պայմանների և կիրառելի ՄՖԿ քաղաքականությունների և չափորոշիչների հետ:

Ինչպես ձևակերպված է ԲՍՎԸ-ում "Բ&Ս վերահսկման նպատակն է զարգացնել և պահպանել այն տեղեկույթը, որն անհրաժեշտ է հաճախորդի հետ համաձայնեցված համապատասխանության կարգավիճակը՝ Կատարողականության չափորոշիչների, ընդհանուր և սեկտորային/ոլորտային Բնապահպանական, առողջական և ապահովության (ԲԱԱ) ուղեցույցների, և Բնապահպանական ու սոցիալական Գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ կամ Գործողությունների ծրագիր)" համեմատությամբ գնահատելու համար: [34]

2006թ. Կայունության քաղաքականության մեջ այնուհետև ասվում է, որ "եթե հաճախորդը չի կարողանում բավարարել իր սոցիալական և բնապահպանական պարտավորությունները, այնպես ինչպես դրանք արտահայտված են ՄՖԿ-ի հետ իրավական պայմանագրի Գործողությունների ծրագրում, [ՄՖԿ-ն պատրաստ է] աշխատել/կաշխատի հաճախորդի հետ դեպի համապատասխանության կարգավիճակ նրան հնարավորինս ուղղորդելու ուղղությամբ, և եթե հաճախորդը չի կարողանում վերականգնել համապատասխանության կարգավիճակը, ապա անհրաժեշտության դեպքում կկիրարկի փարատող/ուղղիչ միջոցներ" (պարբ. 26):

ՄՖԿ-ի կողմից Նախագծի վերահսկումը

ՄՖԿ-ի կողմից Լիդիան ընկերության մեջ իր ներդրումի վերահսկումը սկսվեց 2007թ. և փաստաթղթագրված է ընկերության տարեկան վերաքննության մեջ, ՄՏԶ-ներում և տեղանքի վերահսկողական այցելությունների զեկուցագրերում:

2007թ. դեկտեմբերին ՄՖԿ-ն $1.242 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ:

ՄՖԿ-ի առաջին տեղական վերահսկողական այցելությունը Հայաստանում արվեց 2008թ. հունիսին: ՄՖԿ-ի փաստաթղթերում, կապված այս այցելության հետ, զեկուցվում էր, որ հաճախորդը մի փորձառու Բ&Ս խորհրդատու է վարձել, որ ԲՍԿՀ-ը զարգացման ընթացքի մեջ է, և որ նախագծի բնապահպանական և սոցիալական մեկնարկագծերի ուսումնասիրություններն արդեն սկսվել են: Զեկուցագրում նշվում էր, որ սկսվել է բուսական աշխարհի/ֆլորայի ինվենտարիզացիա և, որ զեկուցվել է տարածքում կովկասյան գորշ արջի բնակության մասին: ՄՖԿ-ի փաստաթղթերում այնուհետև զեկուցվում էր, որ ընկերության

[34] ԲՍՎԸ 6, պարբ.1, տարբերակ 5, Օգոստոս 16, 2010թ.

համար առանցքային հարց է եղել տեղացի շահագրգիռ կողմերի մասնակցության ընդգրկումը, ովքեր ըստ էության մեծ հետաքրքրություն չեն ցուցաբերում այդ տարածքում հանքի հնարավոր զարգացման հեռանկարի նկատմամբ: ՄՖԿ-ն ուստի խորհուրդ էր տալիս, որպեսզի բոլոր համայնքային ժողովները և դրանց արդյունքները մանրամասն փաստաթղթագրվեն: Ընդ որում, ՄՖԿ-ն դիտարկել էր, որ երկրաբանական հետախուզության աշխատանքների արդյունքները խոստումնալից են, և նախագծի զարգացմանը հետագա ընթացք տալու որոշումը պետք է կայանար 2009թ. կեսերին:

ԲՍԳԾ-ն արդիականացվեց 2009թ. հունվարին:[35] Այնտեղ նշվում էր, որ երկրախուզական գործողությունների համար ԲՍԿՀ արդեն ակնկալվում էր 2009թ. մայիսին, համեմատած օրիգինալ ԲՍԳԾ-ում հատկանշված 2008թ հուլիսի հետ: Վերանայված ԲՍԳԾ-ում նույնպես նշվում էր, որ կենսաբազմազանության մեկնարկագծային աշխատանքները կշարունակվեն մինչև 2009թ. վերջը: 2009թ. Գործողությունների ծրագրին կցված ՄՖԿ-ի դիտարկումներում նշվում էր Բ&Ս հարցերի հետ կապված միջազգային չափորոշիչների վերաբերյալ խորհրդատվության պակասի մասին, ԲՍԿՀ-ի շարունակական բացակայության մասին, և միջազգային չափորոշիչներով ԲՍԱԳ ուսումնասիրությունները հնարավորինս շուտով սկսելու կարիքի մասին: ՀԱՊԽ նշում է, սակայն, որ այս ժամանակ ոչ մի հատկորոշ գործողություն չեր պահանջվում ՄՖԿ-ի կողմից ճանաչված թերությունները հասցեագրելու համար:

ՄՖԿ-ի հաջորդ ներդրումը՝ ի օժանդակություն շարունակվող երկրաբանական հետախուզության աշխատանքների, հաստատվեց 2009թ. մարտին և իրականացվեց 2009թ. մայիսին:[36] Այս հաջորդ ներդրումին վերաբերող ՄՖԿ փաստաթղթերում նշվում է, որպես համատեղ ձեռնարկության գործընկեր, Նյումոնթ ընկերության կարևորության մասին և, որ նախագիծը կարող է հասնել արտադրական շահագործման փուլին մինչև 2011թ.: Այնտեղ զեկուցվում էր, որ ընկերությունը մանրակրկիտ խորությամբ իրանականցնում է 2007թ. Գործողությունների ծրագիրը և հասել է բոլոր նշանառված թիրախներին, թեև այս վերլուծությունը չէր հավաստվում ՄՖԿ-ի Բ&Ս վերահսկման փաստաթղթերում: Հաջորդող ներդրումների համար արված ԲՍՎԱ-ն հատկանշեց համայնքի հետ հարաբերություններում հնարավոր բարդությունների մասին և նշեց, որ Ամուլսարում երկրախուզական գործողությունների ԲՍԿՀ դեռ զարգացման ընթացքի մեջ էր:[37] Այնտեղ այնուհետև նշվում էր, որ մեկնարկագծային կենսաբազմազանության աշխատանքն ընթացքի մեջ է, և բացահայտվել են մի քանի բուսատեսակներ, որոնք գրանցված են Հայաստանի "Կարմիր գրքում": [38]

2009թ. օգոստոսին տեղում ՄՖԿ անձնակազմի վերահսկողական այցելության արդյունքում նշվեց, որ նախագիծը պետք է փորձագետներ վարձի միջազգային չափորոշիչները

---

[35] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ինթերնեշնլ ընկերության մեջ (Նախագիծ թիվ 27657), Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր, հունվար 2009թ. http://goo.gl/H3isQ0.

[36] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ինթերնեշնլի մեջ (Նախագիծ թիվ 27657), Առաջարկվող ներդրումի ամփոփումը, հունվար 2009թ. https://goo.gl/rfCQSB.

[37] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ինթերնեշնլի մեջ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, հունվար 2009. http://goo.gl/a58vxi.

[38] Հայաստանի Կարմիր Գիրքը համապարփակ տեղեկատվության աղբյուր է Հայաստանում բույսերի և կենդանիների տեսակների պահպանման կարգավիճակի մասին: Այն պատրաստվել է օգտագործելով (Բնության պահպանության միջազգային միության/International Union for Conservation of Nature /IUCN) Վտանգված տեսակների կարմիր ցանկի չափանիշները

մեկնարկագծային ուսումնասիրություններում կոորդինացնելու համար և, որ Բ&Ս մեկնարկագծերի ուսումնասիրության և ԲՍԱԳ-ի աշխատանքը պետք է նախաձեռնվի համաձայն ՄՖԿ-ի Կատարողականության չափորոշիչների, որովհետև դա, ամենայն հավանականությամբ, պահանջվելու է ապագայում միջազգային ֆինանսավորում ձեռք բերելու համար: Հատկորոշաբար կենսաբազմազանության մասին ՄՖԿ-ն խորհուրդ տվեց Լիդիան ընկերությանը, որ մեկնարկագծային ուսումնասիրություններն անհրաժեշտ են ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի չափորոշիչներին բավարարելու համար: ՄՖԿ–ի փաստաթղթերում նաև զեկուցվում էր, որ ընկերությունը պետք է ուժեղացնի և պաշտոնականացնի համայնքի մասնակցությունը: Ընդ որում, ՄՖԿ-ն այնուհետև խորհուրդ էր տալիս ընկերությանը վերանայել նախագծի ազդեցության տարածքը, ներառյալ պոտենցիալ ազդեցությունները՝ հարևանությամբ գտնվող Ջերմուկ առողջարան քաղաքի վրա:

2010թ. ապրիլին ՄՖԿ-ն $1.772 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ

2010թ. հոկտեմբերին, ՄՖԿ-ի Ամուլսար կատարած տեղում վերահսկողական այցելության զեկուցագրում նշվեց միջազգային խորհրդատուի մասնակցության մասին, որն ընդգրկված էր միջազգային և ՄՖԿ չափորոշիչներով ԲՍԱԳ պատրաստելու համար, և խորհուրդ էր տրվում մանրակրկիտ վերաքննության ենթարկել բոլոր մեկնարկագծային ուսումնասիրությունների համարժեքությունը: Այդ այցելությունից հետո ակնկալված վերջնաժամկետները ԲՍԿՀ-ի, Շահագրգիռ կողմերի ընդգրկման ծրագրի (ՇԿՆԾ), և մեկնարկագծային ուսումնասիրությունների ավարտի համար կրկին հետաձգվեցին: Ընդ որում, չպարզաբանված պատճառներով, ՄՖԿ փաստաթղթերում նախանշված այն պահանջը, որ Լիդիան ընկերությունը պետք է անկախ ԱԱԲՀ աուդիտներ անցնի՝ ՄՖԿ-ի և ազգային չափորոշիչների համապատասխանությունը հավաստելու համար, հանվեց ԲՍԳԾ-ից:

Նախագծի զարգամցան վաղ փուլերից սկսած ՄՖԿ-ն մտահոգություններ է հատկանշել Ամուլսարի շուրջ համայնքների հետ ընկերության մասնակցային հարաբերությունների մասին, հատկապես քանի որ խոհրդակցությունները հիմնականում եղել են գյուղապետերի կամ համայնքապետերի հետ և ոչ համայնքների ավելի լայն հասարակության: ՄՖԿ նաև հարցեր է բարձրացրել նախագծի ազդակիր տարածքի համայնքները ճանաչելու մեջ ընկերության օգտագործած մեթոդաբանության կապակցությամբ: Արդյունքում, ՄՖԿ-ն հորդորել է ընկերությանը բարելավել շահագրգիռ կողմերի մասնակցության իր որդեգրած գործընթացը.

2010թ. նոյեմբերին ՄՖԿ-ն $3.188 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ:

2011թ. հոկտեմբերին տեղի ունեցած վերահսկողական այցելությունից հետ ՄՖԿ նշեց, որ ընկերությունը վերջերս մշակել է Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը (ՇԿՆԾ): Ընդ որում, ՄՖԿ-ն նաև զեկուցեց որ ընկերությունը որոշել է ընդգրկել Ջերմուկը՝ շահագրգիռ կողմերի մասնակցությանը ուղղված իր բոլոր գործուղություններում, ի պատասխան Ջերմուկի համայնքապետի բարձրացրած մտահոգությունների: ՄՖԿ-ն այնուհետև շեշտադրեց՝ կատարողականության չափորոշիչների և բնապահպանության, առողջության և ապահովության ուղեցույցների կիրառման մեջ փորձառու միջազգային Բ&Ս խորհրդատուի օժանդակության աճած կարիքը:

2011թ. դեկտեմբերին ՄՖԿ-ն $1.952 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ:

2012թ. սեպտեմբերին ընկերությունը հրապարակեց Ամուլսար նախագծի համար իր առաջին Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը: Այնտեղ նշվում էր, որ միջազգային ԲՍԱԳ-ի հրապարակումը սպասվում է 2012թ. նոյեմբերին:

2013թ. մարտին ՄՖԿ-ն $1.901 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ:

2013թ. հունիսին, հերթական վերահսկողական այցելությունից հետո, ՄՖԿ-ն հարցադրեց ԿՏՀ-ի տեղի ընտրության գործընթացը: ՄՖԿ-ի համար պարզ չէր, արդյոք այն այլընտրանքային վերլուծությունը, որը հանգեցրել էր տեղանքի ընտրությանը համապատասխանաբար հաշվի էր առել սոցիալական ազդեցությունները: ՄՖԿ նշել էր, որ ոչ մի փաստարկ չկար այս ենթակառուցվածքի տեղակայման վերաբերյալ համայնքների և/կամ հողի մասնավոր սեփականատերերի հետ որևէ համաձայնության մասին: ՄՖԿ այնուհետև նշում էր, որ նախագիծը նշանակալիորեն հետ էր մնում երկրաբանական հետախուզության աշխատանքների համար ԲՍԿՀ զարգացման պլանից, ինչը նշանակալի անհամապատասխանություն էր ներկայացնում ՄՖԿ-ի Կատարողականության չափորոշիչների նկատմամբ: Արդյունքում, ՄՖԿ նշեց, որ երկրախուզական գործողությունները անդառնալի ազդեցություն են թողել ծայրահեղ վտանգված մի բուսատեսակի, *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր,* կենսատարածքի վրա: Սա ճանաչվեց ՄՖԿ-ի կողմից որպես լուրջ համապատասխանության հարց:

2007թ.-ց մինչև 2013թ. ՄՖԿ-ի վերահսկողական փաստաթղթերում շարունակաբար շեշտադրվում էր ընկերության մոտ ադեկվատ ԲՍԿՀ-ի պակասը երկրախուզական գործողությունների համար, այնպես ինչպես պահանջվում է ԲՍԳԾ-ում: 2016թ. հուլիսին նախագծի տեղանքում Բ&Ս կատարողականության ընթացիկ բացթողումների արդյունքում, որոնք բխում էին ԲՍԿՀ-ի բացակայությունից, ՄՖԿ-ն ստիպեց ընկերությանը դիտարկել այս հարցերը որպես հետագա ֆինանսավորման նախապայման:[39]

Ավելի ուշ, 2013թ., ՄՖԿ-ի վերահսկողական փաստաթղթերում ընդունվեց կորպորատիվ ԲՍԿՀ-ի զարգացման փաստը: ՄՖԿ-ն նաև նշել էր, որ Հայաստանի կառավարությունը մերժել է ընկերության դիմումը հանքարդյունաբերական թույլտվություն ստանալու մասին՝ ընկերության կողմից ԿՏՀ-ի տեղանքի ընտրության պատճառով:

2014թ. մարտին ՄՖԿ-ն $1.543 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ:

2014թ. ապրիլին և հուլիսին, երկու բողոքներ հանձնվեցին ՀԱՊԽ-ին:

Նախագծի տեխնիկական կառուցվածքի վերանայումից հետո, մի արդիականացված ազգային ԲԱԳ ընդունվեց Հայաստանի կառավարության կողմից և հանքարդյունաբերական

[39] Հաճախորդին ուղղված իր նամակում ՄՖԿ նշել է հողի կառավարման հետ կապված թերությունների մասին, որոնք վերաբերում են հողի էրոզիայի վերահսկմանը, հողի վերականգնմանը, ազդեցության և սպասարկման գոտու կառավարմանը, հողի օտարմանը և հարակից խորհրդակցություններին, թափոնների կառավարմանը, վառելիքի և վտանգավոր թափոնների կառավարմանը, կենսաբազմազանության կառավարմանը, երթևեկության կառավարմանը և բնապահպանական մշտադիտարկմանը:

գործունեության թույլտվությունը տրվեց 2014թ. վերջին: 2014թ. հոկտեմբերին ընկերությունը հրապարակեց նախագծի արդիականացված Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը: Այն ճանաչում է կարևոր ազդեցությունները կենսաբազմազանության և վտանգված մշակութային ժառանգության պարագաների վրա, և նշում է, որ մեղմացման/չեզոքացման միջոցներ կառաջարկվեն միջազգային ԲՍԱԳ-ում:

2014թ. հոկտեմբերին ՄՖԿ-ի վերահսկողական այցելության փաստաթղթերը շեշտադրում են շինարարական գործունեության համար ԲՍԿՀ մշակելու կարևորությունը, որովհետև ընկերությունը այդ ժամանակ պլանավորում էր սկսել հանքի շինարարությունը 2015թ.:

2015թ. մարտին ՄՖԿ-ն $1.084 միլիոն դոլար գումարի լրացուցիչ ներդրում կատարեց ընկերության մեջ:

2015թ. մայիսին ընկերությունը հրապարակեց Ամուլսար նախագծի միջազգային ԲՍԱԳ-ը, ինչպես և պահանջվում էր ՄՖԿ-ի կողմից, որպեսզի համապատասխանության հասնի Կատարողականության չափորոշիչների և Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպի հետ: ԲՍԱԳ-ի անկախ վերաքննություն իրականացվեց անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի (ԱԲՍԽ) կողմից՝ ընկերության ընթացիկ և ապագա բաժնետերերի անունից (ներառյալ ՄՖԿ):

ՄՖԿ-ն տեղում այցելություն իրականացրեց 2015թ. հոկտեմբերին: Այս այցելության նպատակն էր հանքի շինարարության համար սպասվող պոտենցիալ ՄՖԿ ներդրումից առաջ իրականացնել Ամուլսար նախագծի արժեքային գնահատումը: Այս այցելությունից հետո ՄՖԿ-ն և ընկերությունը համաձայնության եկան Միջանկյալ Գործողությունների ծրագրի շուրջ, որը պետք է իրականացվեր որպես նախապայման, որպեսզի ՄՖԿ-ն մնա ընկերության բաժնետեր և շարունակի նոր ներդրումներ անել: Միջանկյալ գործողությունների ծրագրի մեջ ընդգրկված էին կետեր, որոնք վերաբերում էին կորպորատիվ կառավարմանը, հողի օտարմանը և կենսապահովման միջոցների վերականգնմանը, շինարարության համար ԲՍԿՀ մշակելուն, և նախագծի ԲՍԱԳ-ը արդիականացնելու անհրաժեշտությանը՝ տեխնիկատնտեսական նախահաշվարկի վերանայումից հետո նախագծի տեխնիկական կառուցվածքի մեջ կատարված փոփոխությունները արտահայտելու համար.

2016թ. մայիսին ընկերությունը հրապարակեց արդիականացված ԲՍԱԳ-ը,[40] և ստացավ Հայաստանի կառավարության հավանությունը այն փոփոխությունների համար, որոնց համար նա դիմել էր՝ իր հանքարդյունաբերական իրավունքների կապակցությամբ: Դրանից հետո ԱԲՍԽ-ի կողմից արդիականացվեց ԲՍԱԳ-ի անկախ վերաքննությունը և ավարտվեց 2016թ. մայիսին:[41]

Ինչ վերաբերում է բողոքների մեջ բարձրացված հարցերին, ՀԱՊԽ-ը նշում է, որ ՄՖԿ-ի փաստաթղթերի մեջ ոչ մի փաստարկ չկա առ այն, որ նա վերաքննել է նախագծի համապատասխանությունը ազգային օրենքի հետ իր Բ&Ս վերահսկման շրջանակում: ՄՖԿ-ն զեկուցել է ՀԱՊԽ-ին, որ ինքը նման դեպքերում սովորաբար վստահում է, այն

[40] Տես http://www.geoteam.am/en/publications.htm.l.

[41] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, մայիս, 2016թ. https://goo.gl/hQ51t5.

թույլտվություններին, որոնք տրվել են սուվերեն պետությունների կողմից, և որ ինքը սովորաբար լրացուցիչ գնահատումներ չի նախաձեռնում:

2016թ. հուլիսին, ՄՖԿ-ն հրապարակեց Առաջարկված ներդրումի ամփոփումը[42] և Բնապահպանական ու սոցիալական վերաքննության ամփոփումը[43] նախագծի շինարարության ֆինանսական ապահովման համար հերթական ներդրումի մեջ մասնակցելու նպատակով: ՄՖԿ-ն, սակայն, այնուհետև որոշեց չշարունակել ներդրում կատարել շինարարության փուլում և ներդրումի մասին հրապարակումը հանվեց ՄՖԿ-ի վեբկայքից:

Զեկուցագրի պատրաստման ժամանակ ընկերությունը արդեն սկսել էր նախագծի շինարարության աշխատանքները:

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի Կատարողականության գնահատումը

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն արդյունավետորեն չի վերահսկել հաճախորդի կողմից մի շարք կարևորագույն ԲՍԳԾ պահանջների կատարումը 2007թ.-ից մինչև 2013թթ. հատվածում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է երկրախուզական գործողությունների համար ԲՍԿՀ մշակելու և անկախ ԱԱԲՀ աուդիտներ իրականացնելու պահանջներին: Արդյունքում, վաղ Բ&Ս վերլուծությունը չի կատարվել ժամանակին և հաճախորդի կատարողականությունը չի բավարարել ՄՖԿ-ի պահանջներին: Այս ժամանակահատվածում նախագծի նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկողության մեջ տեղ գտած թերությունները նաև հանգեցրել են երկրաբանական հետախուզության աշխատանքների ընթացքում տեղ գտած անցանկալի ազդեցություններին, ինչպես նկարագրված է այս զեկուցագրում:

Թեև ՄՖԿ-ն իրազեկ է եղել այս հարցերի մասին և բարձրացրել է դրանք հաճախորդի առաջ, հաճախորդի երկրախուզական գործողություններում Բ&Ս ռիսկերի կառավարման անհամապատասխանությունը ադեկվատորեն չի հասցեագրվել ավելի քան վեց տարվա ընթացքում: Այդ ընթացքում ՄՖԿ-ն ընկերության մեջ արել էր ինը լրացուցիչ ներդրումներ: Եվ միայն 2013թ. ՄՖԿ-ն հստակ տեղեկացրեց ընկերությանը, որ հետագա ներդրումները կախված են լինելու երկրախուզական փուլի գործունեության համար համապատասխան ԲՍԿՀ մշակելու նախապայմանից:

<u>Այս ենթատեքստում, ՀԱՊԽ գտնում է, որ հաճախորդի երկրախուզական գործողությունների նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկումը 2007թ.–13թթ ընթացքում համապատասխանության երաշխիքներ չի տվել: Այս ժամանակահատվածի ընթացքում նախագծին լրացուցիչ ֆինանսավորում տալու ՄՖԿ պարտավորությունը համատեղելի չի եղել Կայունության քաղաքականության պահանջի հետ, որ ՄՖԿ-ն պետք փարատիչ/ուղղիչ միջոցներ դիտարկի ընթացիկ անհամապատասխանությանը արձագանքելու համար:</u>

ՄՖԿ-ի կողմից նախագծի վերահսկումը նշանակալիորեն բարելավվեց 2013թ, հետո: Արդյունքը եղավ հաճախորդի Բ&Ս կատարողականության մակարդակի ակնհայտ բարելավումը: Մասնավորապես, երկրախուզական փուլի ԲՍԿՀ-ի մշակման միջոցով: Այս կետից սկսած

[42] ՄՖԿ, Ամուլսար Գոլդ Փրոջեքտի մեջ առաջարկված ներդրումի ամփոփումը, (#37084), հուլիսի 29, 2016թ.

[43] ՄՖԿ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփումը, Ամուլսար Գոլդ Փրոջեքտ (#37084), հուլիսի 29, 2016թ.*

ՀԱՊԽ-ը գտնում է, որ հաճախորդի երկրախուզական գործողությունների նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկումը ապահովել է համապատասխանության ադեկվատ երաշխիքներ:

Սկսած 2010թ. ՀԱՊԽ-ը նաև նշում է, որ ՄՖԿ-ն նշանակալի դեր է խաղացել միջազգային ԲՍԱԳ-ի մշակման համար: Թեև այս զեկուցագիրը որոշ կարևոր թերություններ է տեսնում ՄՖԿ-ի Բ&Ս կատարողականության և ԲՍԱԳ-ի գործընթացի մեջ (տես հատված VII), ՀԱՊԽ-ը ընդունում է ՄՖԿ-ի մասնակցության դերը շահութաբեր նախագծի զարգացման գործում, որը շատ առումներով դրսևորում է Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպ: .

VII. Բողոքներում բարձրացված բնապահպանական և սոցիալական հարցերի վերլուծությունը

Այս հատվածը գնահատում է ՄՖԿ-ի կատարողականությունը կապված նախագծի Բ&Ս ռիսկերի և ազդեցությունների և ՄՖԿ-ի քաղաքականությունների, չափորոշիչների և ընթացակարգերի համապատասխանության առնչությամբ՝ բողոքատուների բարձրացրած մտահոգությունների հետ:

A. Բողոքներում բարձրացված բնապահպանական հարցերի վերլուծությունը

1. Ամուլսարում հնարավոր ապագա բնապահպանական ազդեցությունների գնահատումը

Բողոքները պնդում են, որ նախագծի իրականացման արդյունքում բնապահպանական վնաս կհասցվի մի շարք եղանակներով: Դրանք այնուհետև պնդում են, որ նման ազդեցությունների ռիսկը ադեկվատորեն չի հասցեագրվել ընկերության կողմից: Բողոքատուների բարձրացրած հարցերը շատ բազմապիսի են: Ուստի ՀԱՊԽ-ը միացրել է բարձրացրած բնապահպանական հարցերը հետևյալ մի քանի կատեգորիաների մեջ:

- Գրունտային ջրերի աղտոտման ռիսկերը, որոնք կարող են ազդել Ջերմուկի “առողջարանային” ջրերի (թերմալ աղբյուրների) վրա, և աղտոտման ուժեղացած ռիսկը հանքափոսերից և այլ պայթեցման գործողություններից առաջացած գրունտային ճաքերի պատճառով:
- Ջրի աղտոտման ռիսկերը Վորոտան և Արփա գետերի, Կեչուտ և Վորոտան ջրամբարների, ինչպես նաև Սևանա լճի ջրաբաժանի ավազաններում կատարվող հանքահանության գործողությունների պատճառով:
- Կույտային տարալվացման հարթակին (ԿՏՀ) սպառնացող սեյսմիկ ռիսկերը:

- Հանքահանված ապարների մեջ ուրանի ներկայության հավանականությունից բխող պոտենցիալ ռիսկերը, որոնք կարող են լայնածավալ ճառագայթային աղտոտման պատճառ դառնալ և լրացուցիչ ճառագայթման ռիսկերը ռադոնից:
- Գյուղատնտեսական հողերի և Գնդեվազ գյուղի վրա աղտոտված փոշու տարածման ռիսկերը կախված քամիների գերակշռող ուղղությունից:

Բողոքատուների կողմից բարձրացված հաջորդ հարցը վերաբերում էր Հայաստանի "Կարմիր գրքում" գրանցված ֆլորայի և ֆաունայի տեսակների ներկայությանը հանքի տեղանքում: ՄՖԿ-ի կատարողականությունը կապված այս հարցի հետ վերլուծվում է առանձին հատվածում և ավելի մանրամասն ու հիմնովին՝ նախագծի զարգացման բոլորաշրջանի բոլոր փուլերում, որովհետև կենսաբազմազանության վրա ազդեցությունները հնարավոր էին երկրաբանական հետախուզության աշխատանքների փուլում:

Համապատասխան պահանջները

Բողոքներում բարձրացված հարցերն անմիջականորեն առնչվում են հանքի զարգացմանը ուղեկցող ապագա պոտենցիալ բնապահպանական ազդեցությունների հետ: Թեև նույնիսկ առանձին վերցված այս հարցերը նշանակալի են, դրանց ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ դրանք պետք է հասցեագրվեն նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) գործընթացով: Այս հատվածը վերաբերում է ՄՖԿ-ի 2012թ. Կայունության շրջանակի պահանջներին, որովհետև դրանք փոխադարձաբար հիշատակվում են ԲՍԱԳ-ում և որպես հիմք են ծառայել ՄՖԿ-ի վերաքննության համար:

Կատարողականության չափորոշիչ 1-ը պահանջում է, որ ռիսկերի և ազդեցությունների հանրագումարի նույնականացման գործընթացը կազմված լինի ադեկվատ, ճշգրիտ և օբյեկտիվ գնահատումից և ներկայացումից՝ պատրաստված ձեռնհաս մասնագետների կողմից (պարբ. 19) և պարունակի Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպ (ԼՄԱԳ) (պարբ. 7): Գործընթացը կարող է կազմված լինել ամբողջական բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումից, սահմանափակ կամ կիզակետված բնապահպանական և սոցիալական գնահատումից, կամ բնապահպանական տեղորոշման, աղտոտման չափորոշիչների, տեխնիկական կառուցվածքի չափանիշների, կամ շինարարության չափորոշիչների անմիջական ուղղակի կիրառումից, ըստ նախագծի համապատասխանության (*Ibid.*):

Ստորև վերլուծված հարցերից յուրաքանչյուրի համար, ՀԱՊԽ-ը ուրվագծում է. (a) առանցքային հարցերը, այնպես ինչպես դրանք բարձրացվել են բողոքատուների կողմից; (b) թե ինչպես են այս հարցերը քննարկվում ԲՍԱԳ-ի մեջ; (c) 2016թ. ԱԲՍԽ համեմատական վերլուծության արդյունքում ճանաչված բացերը/թերությունները; և (d) այն միջոցները, որոնք որդեգրվել են հաճախորդի Բ&Ս Գործողությունների ծրագրերում: Այս ենթատեքստում, ՀԱՊԽ գնահատում է, արդյոք ՄՖԿ ունեցել է հիմնավոր երաշխիք առ այն, որ հաճախորդի ԲՍԱԳ-ը բավարարել է ԼՄԱԳ-ի չափորոշիչներին, ինչպես պահանջվում է ԿՉ1-ով:

- *Գրունտային ջրերի աղտոտման հատկորոշ ռիսկերը, որոնք կարող են ազդել Ջերմուկի "առողջարանային" ջրերի (թերմալ աղբյուրների) վրա, և աղտոտման ուժեղացած ռիսկը՝ հանքափոսերից և այլ պայթեցման գործողություններից առաջացած գրունտային ճաքերի պատճառով:*

Բողոքատուների կողմից բարձրացված հարցերը

Երկու առանձին հարցեր են բխում գրունտային ջրերի աղտոտման մասին Բողոքներում բարձրացված հարցից. (i) արդյոք կա հավանականություն, որ նախագիծն անցանկալի ազդեցություն կունենա Ջերմուկի առողջարանային ջրերի վրա, և (ii) արդյոք հնարավոր է, որ նախագծի տեղանքում պայթյուններից և այլ գործունեությունից առաջացած տատանումները կազդեն տեղանքի տակ գտնվող գրունտային ջրերի հոսանքների վրա, ինչի հետագա ազդեցությունը ակնհայտ կդառնա ավելի ուշ ժամանակում:

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

ԲՍԱԳ-ը ճանաչում է Ջերմուկի տարին բոլոր չսառչող աղբյուրների բուժիչ և առողջապահական օգտագործումը որպես շատ բարձր զգայունության ազդակիր գործոն, որը անփոխարինելի է: Այդ աղբյուրները գնահատվում են որպես ազգային կարևորության արժեք:[44]

ԲՍԱԳ-ի գրունտային ջրերի մեկնարկագիծը ճանաչում է աղբյուրները որպես Արփա գետի ջրաբաժանի մասը, որը սակայն Ամուլսարից հոսող ջրերի պոտենցիալ հոսքի հետ հատման կետից բարձր է:[45] Այն տեխնիկական վերլուծություն է տալիս Ամուլսար նախագծի տարածքում և Ջերմուկի Հիդրոթերմալ պարկի շրջապատում գրունտային ջրերի և մակերևութային ջրերի բաղադրության մասին, ի հավաստում այն եզրակացության, որ աղբյուրի ջուրը ազդեցություն կրում է տարբեր աղբյուրներից, ապարների տեսակներից և գրունտային ջրերի քիմիական բաղադրությունից: Այն եզրակացնում է, որ աղբյուրները սնվում են խորը տարածաշրջանային աղբյուրներից, որոնք կապված են նախագծի տարածքի հետ: Տեխնիկական վերլուծությունը եզրակացնում է, որ նախագծի տարածքում ջրերի որակի փոփոխությունը դիմադրություն ունի: Այն նաև պնդում է, որ անհնար է, որ նախագծի տարածքի գրունտային ջրերի հոսքը կամ որակը ազդի հիդրոթերմալ աղբյուրների ջրերի քանակի կամ որակի վրա: Գրունտային ջրերի աղբյուրների վրա ազդեցության գնահատումը[46] եզրակացնում է, որ պոտենցիալ ազդեցությունը չնչին է: ԲՍԱԳ-ից ընկալվում է, որ ընկերությունը պարտավորվել է կրկնել իզոտոպային ուսումնասիրությունները նախագծի շահագործման փուլի ընթացքում:

ԲՍԱԳ-ը նաև մանրամասն վերլուծություն է տալիս՝ նախագծի գործունեության պատճառով և այլ պայթեցման գործողություններից առաջացած տատանումների ազդեցությունների մասին (երկուստեք օդի գերճնշումից և գրունտային տատանումներից): Պայթյունների ազդեցության գնահատումը եզրակացնում է, որ "պայթեցման գործողություններից որևէ պոտենցիալ

[44] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.9, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Ստորգետնյա ջրային ռեսուրսները, Աղյուսակ 6.9.2: Ազդակրի զգայունության աստիճանը (Ստորգետնյա ջրեր), հունիս 2016թ. https://goo.gl/sBElBd.

[45] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.8, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Ստորգետնյա ջրային ռեսուրսներ, հունիս 2016թ.https://goo.gl/kP0LJR.

[46] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.9, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Ստորգետնյա ջրային ռեսուրսներ, հունիս 2016թ.https://goo.gl/sBElBd.

ազդեցություն չի ակնկալվում Ջերմուկի աղբյուրների ջրեր վրա”: Այդ եզրակացությունը բխում է մոդելավորված տատանումների մակարդակներից:[47]

2016թ. մայիսի ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը որևէ թերություն չի ճանաչում կապված՝ գրունտային ջրերից Ջերմուկի աղբյուրների աղտոտման համար նախագծի առաջացրած ռիսկերի, կամ պայթեցման գործողություններից սպառնացող աղտոտման մասին ԲՍԱԳ-ի տված գնահատականի հետ: Այնտեղ այնուհետև նշվում է, որ ընկերությունը պարտավորվել է շարունակել գրունտային ջրերի մշտադիտարկումը՝ իր Բնապահպանական կառավարման ծրագրով (ԲՄԾ):[48]

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի Կատարողականության գնահատումը

Բողոքատուների մտահոգությունները գրունտային ջրերի աղտոտման կապակցությամբ ճանաչվել և վերլուծվել են ԲՍԱԳ-ի գործընթացով:

ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ ԲՍԱԳ-ի տարբեր տարբերակների վերաքննության վրա և հաշվի է առել ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը իր վերաքննության մեջ:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված գրունտային ջրերի պոտենցիալ աղտոտման հետ, համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրում համապատասխան կետերի զարգացմանը:

- *Ջրի աղտոտման ռիսկերը Վորոտան և Արփա գետերի, Կեչուտ և Վորոտան ջրամբարների, ինչպես նաև Սևանա լճի ջրաբաժանի ավազաններում կատարվող հանքահանության գործողությունների պատճառով:*

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սևանա լճի մասին օրենքի, Կեչուտ և Սպանդարյան ջրամբարները Սևանա լճի ջրաբաժան ավազանի մասն են կազմում, ինչպես և Արփա և Վորոտան գետերի ջրաբաժան ավազանները: Բողոքում նշվում է, որ “ցանկացած գործունեություն, որը կարող է անցանկալի ազդեցություն ունենալ Սևանա լճի էկոհամակարգի վրա արգելված է կենտրոնական գոտում, [և] ուղղակի և անուղղակի ազդեցությունների գոտիներում:” Բողոքը պնդում է, որ այս սահմանափակումներն անտեսվել են Ամուլսարի համար արված ազգային ԲԱԳ-ի մեջ, որը չի դիտարկել Սևանա լճի էկոհամակարգին սպառնացող հավանական ռիսկերը:

[47] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.7, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Աղմուկ և տատանումներ, հունիս 2016թ. https://goo.gl/YFzjxy.

[48] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, մայիս 2016թ. https://goo.gl/hQ51t5.

Բողոքատուները այնուհետև պնդում են, որ հանքարդյունաբերական գործունեությունը կաղտոտի Հայաստանի հիմնական ջրային ռեսուրսները:

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

ԲՍԱԳ-ը մանրամասն հասցեագրում է մակերևութային[49] և գրունտային ջրերի որակի առկա մեկնարկագծերը, և ճանաչում ու գնահատում է մակերևութային և գրունտային ջրերի օգտագործողների տարբեր հանրություններին, ներառյալ խմելու ջրի պաշարները, ձկնաբուծական տնտեսությունների սպառումը, գյուղատնտեսության և էկոհամակարգի ծառայությունները.[50] ԲՍԱԳ-ը գնահատում է հանքափոսերի, Դատարկ ապարների պոչամբարի, Կույտային տարալվացման հարթակի, Ադսորբցիայի, դեսորբցիայի և վերականգնման կայանի, և այլ հարակից ենթակառուցվածքների հետ կապված ազդեցությունները:[51]

Հիդրոերկրաբանական և գեոտեխնիկական հետաքննություններ նախաձեռնվել են հանքի ենթակառուցվածքների համար առաջարկված տեղերում և մի շարք այլ տեղերում՝ նախագծի ամբողջ տարածքի համար ամբողջական հիդրոերկրաբանական տվյալներ ստանալու նպատակով: Գրունտային ջրերի ուսումնասիրության տարածքը բնորոշվել է Արփա, Դարբ և Վորոտան գետերից կազմված տարածքով, որովհետև այդ գետերը հիդրավլիկ սահմաններ են ներկայացնում: Ջերմուկն այս հիդրավլիկորեն-բնորոշված տարածքից դուրս է, որովհետև այն գտնվում է Արփա գետից դեպի հյուսիս: Այդուհանդերձ, այն մտցվել է վերլուծության մեջ, տեղական և ազգային շահագրգիռ կողմերի համար աղբյուրների կարևորության պատճառով: Նախագծի տարածքի հիդրոերկրաբանական կոնցեպտուալ մոդելը մշակվել է միջազգային խորհրդատուի կողմից: Վերլուծությունը հենվում է սահմանված հիդրոերկրաբանական միավորների վրա, սակայն ճանաչում է մարդածին առանձնահատկությունների ազդեցությունը (ինչպես օրինակ առկա հանքային երկրաբանական հետախուզության աշխատանքների համար փորված հորատանցքերը և Սպանդարյան–Կեչուտ թունելը):[52] Նախագծի համար մակերևութային ջրերի մեկնարկագծային հետաքննություն իրականացվեց նաև մի միջազգային խորհրդատվական ընկերության կողմից և տարածքի ուսումնասիրության արդյունքները համատեղելի էին գրունտային ջրերի վերլուծության հետ:[53]

Սևանա լիճը և նրա ջրաբաժանը Հայաստանի օրենքով առանձնահատուկ պաշտպանության տակ են, և ոչ մի գործունեություն չի թույլատրվում, որը կարող է բացասական ազդեցություն

---

[49] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.9, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Մակերևութային ջրեր, հունիս, 2016թ. https://goo.gl/4IhV5R.

[50] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.8, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Ստորգետնյա ջրային ռեսուրսներ, հունիս, 2016թ.https://goo.gl/kP0LJR.

[51] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.9, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Ստորգետնյա ջրային ռեսուրսներ, հունիս, 2016 (https://goo.gl/sBElBd); և Գլուխ 6.10, Մակերևութային ջրային ռեսուրսներ, հունիս, 2016թ. (https://goo.gl/IMQ8Gc).

[52] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.8, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Ստորգետնյա ջրային ռեսուրսներ, հունիս, 2016թ. https://goo.gl/kP0LJR.

[53] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.9, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Մակերևութային ջրեր, հունիս, 2016թ. https://goo.gl/4IhV5R.

ունենալ լճի և նրա էկոհամակարգի վրա: Թեև նախագծի շինությունների մեծ մասից ջրերը հոսում են դեպի Արփա գետը, բայց դա կատարվում է Կեչուտ ջրամբարից հոսանքն ի վար, և ուստի չի լինի Սևանա լճի վրա "անմիջական ազդեցության գոտում", ԴԱՊ-ը բնականաբար կցամաքվի Կեչուտ ջրամբարից հոսանքն ի վեր տեղանքում և ընկած է Սևանա լճի վրա "անմիջական ազդեցության գոտում": [54]

Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում իրականացվել է սկսած 2007թ.-ից՝ ընկերության և Բնապահպանության նախարարության կողմից: Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ նախագիծը գործ է ունենալու նշանակալի ծավալներով բնական-պատահող ջրային աղտոտման մակարդակների հետ:[55]

Երկու գրունտային ջրերի ազդակիր հոսանքներ գնահատվել են որպես մեծապես զգայուն: Դրանք են՝ Ջերմուկի հիդրոթերմալ աղբյուրները, որոնք ազգային կարևորության արժեք են ներկայացնում և անփոխարինելի են; և Սպանդարյան–Կեչուտ թունելը, որն իր հերթին ջրով մատակարարում է Սևանա լիճը: Ներկայումս Սպանդարյան ջրամբարից ներհոսք չի պլանավորվում թունելի մեջ, բայց կա նշանակալի արտահոսք, որը, ինչպես ակնհայտորեն երևում է մոդելավորումից, նախագծի տարածքից հոսող գրունտային ջրեր են: Գրունտային ջրերի ազդեցությունների մեջ մտնում են ԴԱՊ-ից և ԿՏՀ-ից ներքև բոլոր աղբյուրների վերացումը, ազդեցությունները աղբյուրների որակի վրա, ազդեցությունները Վորոտան գետին հարակից գրունտային ջրերի որակի վրա, և Սպանդարյան-Կեչուտ թունելի մեջ գրունտային ջրերի ներհոսքների վրա:[56]

ԲՍԱԳ-ը տալիս է մակերևութային ջրերի ազդեցությունների մանրամասն վերլուծությունը բոլոր ճանաչված ազդակիրների համար և ներառնում է նաև ազդեցությունների ամփոփումը, որտեղ հատկորոշվում են յուրաքանչյուր ազդեցության ուժը, նշանակալիությունը և տարածման ծավալը: Հանքի շահագործման ընթացքում մակերևութային ջրերի բոլոր ազդակիրների համար ազդեցության նշանակալիության մակարդակը, ելնելով տեխնիկական կառուցվածքի մեղմացնող հանգամանքներից, համարվում է աննշան: Հետագա վերլուծություն է տրվել հետ-փակումային մեղմացման առումով: Նախագծի հիմնական շինություններից յուրաքանչյուրն ունի տեխնիկական կառուցվածքի մեջ ներկառուցված ճարտարագիտական և կառավարման միջոցներ, որոնք կոչված են վերահսկելու ջրի պոտենցիալ արտանետումները հանքի շահագործման տևողության յուրաքանչյուր փուլում, որոնք հատկորոշված են ԲՍԱԳ-ի մեջ:[57]

Նախագիծն ունի ջրի կառավարման ռազմավարություն, որով ոչ կոնտակտային ջուրը առանձնացվում է կոնտակտային ջրից, և որի նպատակն է հասնել հանքի շինություններից գրունտային ջրերի զերոյական արտանետման դեպի բնական միջավայր: Բոլոր ազդակիր գրունտային և մակերևութային ջրերը մշտադիտարկման պահանջներով ընդգրկված են

---

[54] *Ibid. նույն տեղում*

[55] *Ibid. նույն տեղում*

[56] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.9, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Ստորգետնյա ջրային ռեսուրսներ, հունիս, 2016թ.https://goo.gl/sBElBd.

[57] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.10, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Մակերևութային ջրային ռեսուրսներ, հունիս, 2016թ.https://goo.gl/IMQ8Gc.

Բնապահպանական մշտադիտարկման ծրագրի մեջ, որն ունի մշտադիտարկման և աուդիտի ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր:[58]

Ջրերի կառավարման միջոցառումները ձևակերպված են Մակերևութային ջրերի կառավարման ամբողջական բազմակողմանի ծրագրի մեջ, որը հասցեագրում է ջրերի կառավարման հարցերը նախագծի բոլոր փուլերի ընթացքում. շինարարական, արդյունաբերական և հետ-փակումային:[59]

Ընդհանուր առմամբ, ԲՍԱԳ-ը ընդունում է, որ նախագծի շինությունների համապատասխան տեխնիկական կառուցվածքը և մեղմացման միջոցառումները կերաշխավորեն, որ հանքի գործունեության ազդեցությունը մակերևութային և գրունտային ջրերի պաշարների վրա լիովին վերացվի կամ կրճատվի ընդհուպ մինչև ընդունելի մակարդակները: 2016թ. մայիսի ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը թերություններ չի նույնականացնում կապված հանքի գործունեությունից մակերևութային և գրունտային ջրերի աղտոտմանը հանգեցնող ռիսկերի և ազդեցությունների ԲՍԱԳ-ի գնահատման հետ: Այն նշում է, որ ընկերությունը մշակել է Ջրային կառավարման ծրագիր, որի նպատակները համատեղելի են միջազգային չափորոշիչների հետ:

ՀԱՊԽ նշում է, որ 2016թ. ՄՖԿ-ի նոր ներդրումի ենթատեքստում հրապարակված ԲՍԳԾ-ում ընկերությունից պահանջվում է մշակել մասնակցային մշտադիտարկման ծրագիր, որը համահունչ կլինի Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպի հետ և նպատակ կունենա նախագծի շինարարության և շահագործման փուլերում իրազեկություն ապահովել ջրերի որակի և կառավարման մասին: Այս գործողությունը դիտվում էր որպես նախապայման, մինչև ՄՖԿ-ի կողմից ներդրումի հաստատումը:[60]

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

Բողոքատուների բարձրացրած հարցերը ճանաչվել և վերլուծվել են ԲՍԱԳ-ի գործընթացով: ԲՍԱԳ-ը վերլուծում է մակերևութային և գրունտային ջրերի մեկնարկագծերը, հիմնական ազդակիրների զգայունության աստիճանը, և այդ ազդակիրների վրա պոտենցիալ ազդեցությունները: Այն տվյալներ և մեղմացման միջոցառումներ է առաջարկում, որպեսզի ոչ մի անուղղելի ազդեցություն չլինի Սևանա լճի ջրաբաժանի ջրերի վրա:

ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ ԲՍԱԳ-ի տարբեր տարբերակների վերաքննության վրա և հաշվի է առել ԱԲՍԽ-ի համեմատական վերլուծությունը իր վերաքննության մեջ:

<u>ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը կապված ջրերի պոտենցիալ աղտոտման հարցերի հետ համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը:</u>

[58] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.12, Բնապահպանական մշտադիտարկման ծրագիր (ԲՄԾ), հունիս, 2016թ. https://goo.gl/LQT6fh.

[59] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.22, Մակերևութային ջրերի կառավարման ծրագիր (ՄՋԿԾ/SWMP), հունիս, 2016թ. https://goo.gl/b5viFv.

[60] ՄՖԿ, *Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր*, Ամուլսար Գոլդ Փրոջեքտ (#37084), հուլիսի 29, 2016թ.

- *Կույտային տարալվացման հարթակին (ԿՏՀ) սպառնացող սեյսմիկ ռիսկերը:*

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ "նախագիծը հաշվարկներ և առաջագծված կանխատեսումներ չունի 10 բալ և ավելի բարձր… ուժգնությամբ երկրաշարժերի համար: Պոչամբարային կուտակման տարածքն ունի գրունտային ջրերի բազմաթիվ ելքեր, որոնք թունավոր նյութեր կտարածեն պոչամբարներից դեպի Վորոտան գետը, հետո Վորոտան-Արփա թունելով դեպի Սևանա լիճը… Պայթյուններից կարող են ակտիվանալ սողանքները՝ անկանխատեսելի հետևանքներով…"

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

ԲՍԱԳ-ը ճանաչում է, որ առաջարկված հանքարդյունաբերական նախագիծը գտնվում է սեյսմիկորեն ակտիվ տարածաշրջանում: Այնտեղ ասվում է, որ չկան գեոմորֆիկ փաստարկներ առ այն, որ նախագծի տարածքում, ներառյալ ԴԱՊ-ի, ԿՏՀ-ի, ջարդող կայանի, կամ բաց հանքափոսերի տարածքները, կան գրունտային ճեղքվածքներ կամ այլ տեկտոնիկ գեոմորֆոլոգիաներ: Այնտեղ կանխատեսվում է նախագծի տարածքում հողի մակերևութային խորացող ճեղքվածքների շատ ցածր հավանականություն: ԲՍԱԳ-ը տալիս է նախագծի տարածքի հետ կապված պատմական երկրաշարժերի և սեյսմիկ գործունեության վերլուծություն: Նախագծի տարածքում իրականացվել է հավանական սեյսմիկ վտանգի վերլուծություն (ՀՍՎՎ), որը եզրակացրել է, որ արտոնագրված տարածքում կա միջին հավանականության սեյսմիկ վտանգ:[61]

ԲՍԱԳ-ի մեթոդաբանությունը ներառնում է նաև հիմնական շինությունների վրա լրացուցիչ բեռնվածության գնահատումը դրանց շահագործման փուլում կատարված որևէ սեյսմիկ իրադարձության ընթացքում՝ օգտագործելով պիկային գրունտային ակսելերացիայի մեթոդի (ՊԳԱ) կանխատեսումները, ելնելով երկրաշարժի որոշակի հավանականություններից: ԲՍԱԳ-ի մեջ խորհուրդ է տրվում, որ հիմնական շինությունների թեքությունները, ինչպես օրինակ ԿՏՀ-ի և ԴԱՊ-ի համար, պետք է այնպիսի տեխնիկական կառուցվածք ունենան, որ կայուն լինեն նման երկրաշարժերի կողմից առաջացրած ՊԳԱ բեռնվածության նկատմամբ՝ համաձայն արդյունաբերության մեջ ընդունելի տեխնիկական/ճարտարագիտական հոգածության չափորոշիչների: Եվս մեկ մասնագիտական վերլուծություն, որը նախաձեռնվել է հաճախորդի կողմից, ճարտարագիտական տեխնիկական կառուցվածքի նկատմամբ, փաստարկում է շահագործման ընթացքում հարթակի և կույտի կայունության մասին՝ 6.4 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում, որի պատահման հավանականությունը 50 տարում 10 տոկոս է: Ավելի երկարաժամկետ վերլուծությունը (որն ընդգրկում է նաև հետ-փակումային

[61] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.6, բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Երկրաբանությունը և սեյսմիկությունը, հունիս, 2016թ. https://goo.gl/PlCM32.

ժամանակահատվածը) հենվում է առավելագույն տեխնիկական կառուցվածքի 6.6 բալ ուժգնությամբ երկրաշարժի վրա, որի պատահման հավանականությունը 50 տարում 2 տոկոս է:[62]

2016թ. մայիսի ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը թերություններ չի ճանաչում կապված սեյսմիկ ռիսկերի և ազդեցությունների ԲՍԱԳ-ի գնահատման հետ: Այն նշում է, որ Պոտենցիալ բնակելի շինությունների ապահովության և սեյսմիկ համապատասխանության գնահատում է արվել, և որ Աշխատողների բնակեցման կառավարման ծրագիրը (ԱԲԿԾ) համապատասխան դրույթներ ունի բնակեցման համար առաջարկվող, մինչև 1994թ. կառուցված, շինությունների մանրակրկիտ վերլուծության համար:

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

Բողոքատուների մտահոգությունները սեյսմիկ ռիսկերի կապակցությամբ ճանաչվել և վերլուծվել են ԲՍԱԳ-ի մեջ:

ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ ԲՍԱԳ-ի տարբեր տարբերակների վերաքննության վրա, և հաշվի է առել ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը իր վերաքննության մեջ:

<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված պոտենցիալ սեյսմիկ ռիսկերի հետ համարժեք է ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը:</u>

- *<u>Հանքահանված ապարների մեջ ուրանի ներկայության հավանականությունից բխող պոտենցիալ ռիսկերը, որոնք կարող են լայնածավալ ճառագայթային աղտոտման պատճառ դառնալ և լրացուցիչ ճառագայթման ռիսկերը ռադոնից:</u>*

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ բաց հանքափոսի եղանակով հանքահանության գործունեությունը Ամուլսարում կարող է դիպչել նաև ուրանի հանքաշերտերին, պատճառ դառնալով տարածքի ռասիոակտիվ աղտոտման համար, մասնավորապես, ազդելով Ջերմուկ առողջարանի, Գնդեվազ, Սարավան և Գորայք գյուղերի վրա: Այնտեղ այնուհետ նշվում է, որ ընկերության արձագանքը այս մտահոգություններին չի բավարարում բողոքատուներին: Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքը նաև պնդում է, որ պայթեցման գործողությունների արդյունքում, “անկախ փորձագետների կարծիքով, ռադիոակտիվ մակարդակները կբարձրանան:”

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

Շահագրգիռ կողմերի մտահոգություններից և, նախագծի տարածքում և դրա շուրջը ուրանի հանքաշերտերի հետախուզման նպատակով արված պատմական երկրախուզական աշխատանքների հիման վրա, ճառագայթային իրավիճակի ուսումնասիրություն է

[62] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.18, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Համայնքային առողջությունը, անվտանգությունը և ապահովությունը, հունիս, 2016թ. https://goo.gl/Vic1Yp.

իրականացվել մի անկախ միջազգային ընկերության կողմից, որը մասնագիտացած է ճառագայթային պաշտպանության կառավարման գործում: Հետաքննությունը վերլուծել է փոշու, գազերի և ջրի մեջ (փոշու միջոցով) ճառագայթային իզոտոպների պարունակությունը, և գնահատել դրանց պոտենցիալ ազդեցությունները աշխատողների, հանրության, հովիվների/գյուղացիների, հողօգտագործողների և ջրօգտագործողների վրա: Վերլուծության արդյունքները ներառված են ԲՍԱԳ-ի մեջ:[63] Ազդեցությունները կանխատեսվում են որպես չնչինից մինչև փոքր/տեղային: Ռիսկի գնահատում նախաձեռնվել է փոշու և ապարների բազմաթիվ նմուշների վրա, որոնք երկուստեք պարունակել են և հղի հանքապար, և դատարկ թափոնային ապարներ: Թեև պարունակության խտության առավելագույն ցուցանիշները եղել են ընդհանուր Հայաստանի համար զեկուցված առավելագույն մակարդակներից քիչ ավելի բարձր, միջին խտությունները եղել են Հայաստանի համար ընդունելի նորմերից ցածր:

Ներկլլման ուղիների գնահատումով, որպես առավել ռիսկային ճանաչվել է փոշու կամ ռադոն գազի անմիջական ներշնչումը: Ռադոնի ներկայության բարձր մակարդակները նշանակում են, որ հանքի բոլոր շինությունները զինված կլինեն պաշտպանական միջոցներով: Ուրանի և թորիումի ներկայության վերլուծությունը՝ դրանց դոզաչափային գնահատման մոտավոր հաշվարկով, անկախ ներկլլման եղանակներից, շատ ավելի զածր է, քան թույլատրելի է միջազգային և Հայաստանյան չափորոշիչներով: Ջրի համար չափված մակարդակների մեծ մասը համընկնում է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ/WHO) ուղեցույցների հետ:[64]

ԱԲՍԽ-ի համեմատական վերլուծությունում ոչինչ չի ասվում նախագծի գործունեությունից բխող ռադիոակտիվ աղտոտման ռիսկերի մասին:

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

Ճառագայթման ռիսկերի փորձագիտական գնահատում նախաձեռնվել է ի պատասխան շահագրգիռ կողմերի արտահայտած մտահոգությունների, և ներառվել է ԲՍԱԳ-ի մեջ: Այն եզրակացնում է, որ նախագծի գործունեության արդյունքում ճառագայթման պոտենցիալ ազդեցությունը դիտարկվում է որպես չնչին:

<u>Մատչելի նյութերի հիման վրա ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն կատարել է համապատասխան քայլեր՝ ճառագայթային աղտոտման հետ կապված ԲՍԱԳ գործընթացը վերահսկելու համար:</u>

[63] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 6.18.1, Ռադիոլոգիական զեկուցագիր (Ռադման, 2012). https://goo.gl/JwxYzx.

[64] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.18, Պոտենցիալ Ազդեցությունները և մեղմացման միջոցները, Համայնքային առողջությունը, անվտանգությունը և ապահովությունը, հունիս 2016թ. https://goo.gl/Vic1Yp.

- *Գյուղատնտեսական հողերի և Գնդեվազ գյուղի վրա աղտոտված փոշու տարածման ռիսկերը՝ կախված քամիների գերակշռող ուղղությունից:*

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքը պնդում է, որ "Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ժամանակ կատարված պայթյունների արդյունքում ծանր մետաղներով հագեցած փոշին կտարածվի արոտավայրերի, խոտհարքային և գյուղատնտեսական դաշտերի, ինչպես նաև գյուղի բնակելի տարածքի վրա:"

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

ԲՍԱԳ-ի մեկնարկագծային գնահատումը ճանաչում է պոտենցիալ առողջապահական հարցերի կարևորությունը ներշնչելի օդածին փոշուց և ավելի խոշոր ապարային փոշու մասնիկներից, որոնք թեև նույն առողջական ազդեցությունները չեն ունենում, բայց տհաճ փոշու շերտ են առաջացնում, աղտոտելով մակերևույթները: ԲՍԱԳ-ը նկարագրում է փոշու մակարդկաների և այլ գազային պարամետրերի մեկնարկագծային մշտադիտարկումը:[65] Հինգ տեղական համայնքներում գազային NO_2 և SO_2 –ի համար նախաձեռնված մեկնարկագծային մշտադիտարկումը շատ ցածր խտություն է ցույց տվել, ինչը համատեղելի է գյուղական վայրում սպասվելիք մակարդակի հետ, որտեղ չկան աղտոտման նշանակալի աղբյուրներ: Փոշու տարածումը մշտադիտարկվել է նախագծի հիմնական ենթակառուցվածքների տեղանքներում, որտեղ ցույց է տվել բնական և պոտենցիալ մարդածին աղբյուրներից եկող, տեղական քամիների գերիշխող ուղղություններով տարածվող փոշու ցածր մակարդակներ: Սակայն, կարծր մասնիկների պարունակությամբ փոշու մշտադիտարկումը ցույց է տալիս PM_{10} (կարծր մասնիկների) բարձր մակարդակ, մասնավորապես Գնդեվազում, և ավելի քիչ Ջերմուկում, բայց ցածր $PM_{2.5}$ խտությամբ: ԲՍԱԳ-ը ճանաչում է, որ կա ինչպես հետագա այնպես էլ ընթացիկ մշտադիտարկման կարիք:

Կանխատեսվում է, որ հանքի գործունեության ընթացքում օդի աղտոտման նշանակալի աղբյուրները լինելու են փոշու արտանետումները, որոնք առաջանում են հանքի գործունեությունից՝ ինչպես օրինակ (ներառյալ պայթեցման աշխատանքները) բեռնաքարշելը/բուքսիրելը, բեռնաթափելը, հարահոսի փոխադրման կետերը, ապարների ջարդոտման գործունեությունը, և ավտոմեքենաներից արտաժայթքած գազերը:

ԲՍԱԳ-ը գնահատում է օդի որակի նկատմամբ նախագծի շինարարության, շահագործման և փակման ազդեցությունները զգայուն ազդակիրների հետ: Այն տալիս է նախագծի աղբյուրներից կանխատեսված փոշու արտանետումների բազմակողմանի վերլուծություն: Փոշու մակարդակի մարման/նվազեցման մասին ենթադրությունները, ինչի մասին կարելի է կարծիք կազմել ենթակառուցվածքների գտնվելու տարբեր տեղերում, փոշու

[65] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.4, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Օդի որակը, հունիս, 2016թ. https://goo.gl/YXBs59.

խտացման/մամլման միջոցով, հատկորոշաբար ձևակերպված են ԲՍԱԳ-ի մեջ:[66] Մշակվել է Օդի որակի, աղմուկի և տատանումների կառավարման ծրագիր (ՕԴՈԱՏԿԾ), հատկորոշվել են ընթացիկ մշտադիտարկման մեթոդներ/տեխնիկաներ և ծրագրեր: Իրապես առկա է գերակա պարտավորություն՝ աշխատողներին և շրջապատի ազդակիրներին լավագույն մեթոդաբանությամբ պաշտպանելու համար:[67]

ԲՍԱԳ-ը ճանաչում է առողջության վրա հետագա պոտենցիալ ազդեցությունները՝ որոնք կարող են բխել հատկորոշ վտանգավոր քիմիկատներից —ինչպես օրինակ ԿՏՀ-ում ցիանիդի օգտագործումից և սնդիկի օգտագործումից (որը ԿՏՀ-ի գործունեության կողմնակի արդյունքն է) — ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ծանր մետաղների ազդեցությունից: Բոլոր շինությունների շուրջը նախատեսված 50մ-անոց բուֆերային գոտին լրիվ "կորած" կլինի ցանկացած գործունեության համար, որովհետև ամբողջ բուսականությունը "կվերանա," մինչդեռ լրացուցիչ 368 հեկտար հող ճանաչվել է որպես "խախտված" փոշու ներգործության պատճառով (ներառյալ ծանր մետաղների): Մոտավոր հաշվարկով գնահատվում է, որ փոշու 80 տոկոսը կցրվի ենթակառուցվածքների տեղանքում 100 մետր շառավիղով: Առկա տվյալներից դատելով ԲՍԱԳ-ը եզրակացնում է, որ ուսումնասիրության տարածքում անհնար է որոշել հողի կամ մայր ապարների մեջ բնականորեն առկա ծանր մետաղների ազդեցությունը մարդու առողջության վրա: Գնդեվազը փոշու մոտակա աղբյուրից մոտավորապես 1.0կմ հեռավորության վրա է գտնվում, և մանր մասնիկների պարունակության մակարդակները այդ հեռավորության վրա արտանետված օդի մեջ պետք է կրճատվեն մինչև 1 տոկոսից էլ քիչ քանակության:[68] Մի ծրագիր էր նախաձեռնվել 2016թ., մինչև աշխատանքային փուլի սկսվելը, գյուղում մանրամասն կենսաբժշկական հարցում անցկացնելու համար՝ լրացուցիչ տվյալներ հավաքելու նպատակով, և ընկերությունը պարտավորվել է իրականացնել ազդեցությունների երկարաժամկետ մշտադիտարկում:[69] Ընկերությունը նաև պարտավորվել է իրականացնել ցիանիդի կառավարման ծրագիր, և երաշխավորել, որ այն համապատասխանում է Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքին: Սա օրինավոր նպատակ է այս փուլում, որը կպահանջի գործունեության ծավալմանը զուգահեռ հետագա մանրամասն և պլանավորված առաջընթաց:

Առողջությանը սպառնացող ռիսկերի գնահատում՝ կապված փոշու մեջ ծանր մետաղների տարածման հետ, նախաձեռնվել է ԲՍԱԳ-ում՝ օգտագործելով համապատասխան մեթոդոլոգիաներ: Վերլուծությունը եզրակացնում է, որ ուսումնասիրության տարածքում կա ազդակիրների համար ճանաչելի ռիսկ (մեծահասակ կամ դեռահաս ֆերմերների համար), ելնելով հողի մեջ մետաղի կոնցենտրացիայի/խտության մակարդակից: Մինչդեռ վերլուծությունը առաջարկում է, որ տհաճ փոշին և ներշնչելի փոշին — որոնք կարող են ազդեցություններ ունենալ զգայուն ազդակիրների առողջության վրա — կպահպանվեն

[66] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.6, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Օդի որակը, հունիս 2016թ.https://goo.gl/EXloq8.

[67] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.14, Օդի որակի, աղմուկի և տատանումների կառավարման ծրագիր, հունիս 2016թ.https://goo.gl/rfhym3.

[68] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.18, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Համայնքային առողջության, անվտանգության և ապահովության ծրագիր, հունիս, 2016թ. https://goo.gl/Vic1Yp.

[69] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.15, Համայնքային առողջության, անվտանգության և ապահովության ծրագիր (ՀԱԱԱԾ), Հունիս 2016թ.https://goo.gl/oj8UL5.

ընդունելի մակարդակների վրա, դա կախված կլինի շինարարության տեղանքում փոշու արտանետումների ընթացիկ կրճատման շատ բարձր չափորոշիչից: Ծանր մետաղների ներգործությունից առողջության վրա ազդեցությունները չեն կանխատեսվում, թեև բոլոր ռիսկերը գնահատվել են որպես ընդունելի: [70]

Խախտված գոտիներից դուրս հետագա ազդեցությունները բուսականության վրա հայտնի չեն, որովհետև հայտնի չէ բուսականության դիմադրողականությունը փոշու բարձրացրած մակարդակների նկատմամբ: Ուստի կարող են լինել հետագա ազդեցություններ անասունների արոտավայրերի, ոչ ֆորմալ խոտհարքի և բերքահավաքի վրա, որոնք դեռ հատկորոշված չեն: Ուստի այս իրավիճակի ընդունելիությունը կանխատեսվում է մշտադիտարկման և կառավարման ծրագրի ներքո, որը կլինի մասնակցային և թափանցիկ, և որն ակտիվորեն կկառավարի ապագայի ազդեցությունները, որոնք կարող են ազդել գյուղերի առողջության կամ կենսապահովման միջոցների վրա, ինչպես օրինակ Գնդեվազի բնակչության վրա:[71]

ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը նշում է, որ Համայնքի առողջության, ապահովության և անվտանգության կառավարման ծրագիրը (ՀԱԱԱԾ) հասցեագրում է համապատասխան պահանջներին: Այն նաև նշում է, որ օդի որակի բազմակողմանի մշտադիտարկման ծրագիր է առաջարկվել ՕԴՈԱՏԿԾ-ում, որը սակայն չի ներառնում փոշու նստվածքից հավաքված մետաղների վերլուծությունը: ԱԲՍԽ զեկուցագիրը խորհուրդ է տալիս ավելացնել փոշու նստվածքի մեջ մետաղների վերլուծությունը ՕԴՈԱՏԿԾ-ի և ԲՄԾ-ի մեջ:[72] ՀԱՊԽ նշում է, որ այս հարցը ավելացվել է նախագծի ԲՍԱԳ-ի վերջին տարբերակի մեջ:[73]

Այնուհետև, ՄՖԿ-ի 2016թ նախագծի ԲՍԳԾ-ը պահանջում է հաճախորդից ստորագրել Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքի (ՑԿՄՕ) համաձայնագիրը, և ՑԿՄՕ արտոնագիր ստանալ Ամուլսար նախագծի գործունեության համար, մինչև 2019թ. սեպտեմբերը:[74] ՀԱՊԽ-ը նշում է, որ հաճախորդը ստորագրել է ՑԿՄՕ 2016թ. սեպտեմբերին: Ստորագրելով այդ համաձայնգրի տակ Լիդիան ընկերությունը պարտավորություն է վերցրել հետևելու Ցիանիդի կառավարման օրենսգրքի սկզբունքներին, պահպանելու նրա գործելակերպի չափորոշիչները, և իրականացնելու իր գործունեության վավերացման աուդիտներ՝ հրավիրելով անկախ աուդիտորների, ցիանիդը ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում և այնուհետև ամեն երեք տարին մեկ անգամ: Գործունեությունը կվավերացվի միայն Ցիանիդի օրենսդրության հետ հետևողական համապատասխանության ապացուցման դեպքում: [75]

---

[70] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.18, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Համայնքային առողջության, անվտանգության և ապահովության ծրագիր, հունիս, 2016թ. https://goo.gl/Vic1Yp.

[71] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.15, Համայնքային առողջության, անվտանգության և ապահովության ծրագիր (ՀԱԱԱԾ), հունիս, 2016թ.https://goo.gl/oj8UL5.

[72] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, մայիս, 2016թ. https://goo.gl/hQ51t5.

[73] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.15, Համայնքային առողջության, անվտանգության և ապահովության ծրագիր (ՀԱԱԱԾ), հունիս, 2016թ.https://goo.gl/oj8UL5.

[74] ՄՖԿ, *Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր*, Ամուլսար Գոլդ Փրոջեքտ (#37084), *հուլիսի 29, 2016թ.*

[75] Լիդիան Հայաստան, Մամուլի հաղորդագրություն, 09.28.2016թ.https://goo.gl/dYxHqm.

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

ԲՍԱԳ-ը ճանաչում և վերլուծում է աղտոտված փոշու հարցը: ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը հաստատել է այս հարցի առնչությամբ համապատասխանությունը միջազգային չափորոշիչների հետ, և հաճախորդը հասցեագրել է նրա հանձնարարականները լրացուցիչ մշտադիտարկման գործունեություն նախաձեռնելու ուղղությամբ:

ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ ԲՍԱԳ-ի տարբեր տարբերակների վերաքննության վրա, և հաշվի է առել ԱԲՍԽ համեմատական վերլուծությունը իր վերաքննության մեջ:

<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված աղտոտված փոշու տարածման պոտենցիալ ազդեցությունների հետ, համարժեք է ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը:</u>

2. Կենսաբազմազանությունը և Հայաստանի “Կարմիր գրքում” գրանցված բուսական և կենդանական տեսակների ներկայությունը

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ Ամուլսարում կան մի շարք կենսատեսակներ, որոնք գրանցված են Հայաստանի “Կարմիր գրքում”, հենվելով Վայրի բնության Համաշխարհային հիմնադրամի (ՎԲՀՀ/WWF) նախաձեռնած աշխատանքի վրա: Դա ներառնում է ծայրահեղ վտանգված մի ծաղկաբույս (*Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր*) և մի շարք կարևոր կենդանական տեսակներ (մողեսներ, թռչուններ, և կաթնասուններ): Այն այնուհետև պնդում է, որ ազգային ԲԱԳ-ը չի հասցեագրում այս կարգի մտահոգությունները, հիմնականում ուշադրությունը կիզակետելով կովկասյան գորշ արջի ներկայության վրա: Բողոքի մեջ հղում է արվում Հայաստանի Հանրապետության հանքահանության օրենքին և Հայաստանի Հանրապետության ֆաունայի մասին օրենքին, հրահանգելով, որ ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է կարմիր գրքում գրանցված ֆլորայի կամ ֆաունայի ներկայացուցիչների թվի կրճատմանը, պետք է արգելվի:

Համապատասխան պահանջները

Բողոքատուների մտահոգությունները կապված վտանգված տեսակների վրա նախագծի ազդեցությունների հետ մի շարք հարցեր են բարձրացնում:

Առաջինը, կան հարցեր, որոնք վերաբերում են ՄՖԿ-ի նախնական վերաքննությանը և 2006թ. Կայունության շրջանակի ներքո նախագծի հանդեպ վաղ վերահսկմանը: Ինչպես ասվել է, ՄՖԿ-ի 2006թ. Ուղղորդումը նշում է, որ Բ&Ս գնահատման առաջին գործընթացը ներառնում է նախագծի պոտենցիալ Բ&Ս ռիսկերի և ազդեցությունների բացահայտման և նույնականացման գործողությունները: [76]

Երկրորդը, կան հարցեր, որոնք վերաբերում են միջազգային ԲՍԱԳ-ի գործընթացի նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկմանը, որն իրականացվել է 2012թ. Կայունության շրջանակի ներքո:

Նշանակալի նմանություններ կան 2006թ. և 2012թ. Կայունության շրջանակների պահանջների միջև: Ստորև բերված հղումները վերաբերում են 2012թ. Շրջանակին, եթե այլ կերպ չի հատկորոշվում:

ՄՖԿ Կատարողականության չափորոշիչ 6-ը (ԿՉ6, Կենսաբազմազանության կոնսերվացիա/պահպանում և կենդանական բնական ռեսուրսների կառավարում)

---

[76] ՄՖԿ, *Կատարողականության Չափորոշիչների իրականացման ուղեցույցային ծանոթություններ. Ուղեցույցային ծանոթություն* 1 – Սոցիալական և բնապահպանական գնահատման և կառավարման համակարգեր, ՈՒԾ10 և ՈՒԾ14: Ուղեցույցային ծանոթությունները ուղղորդում են Կատարողականության չափորոշիչներում պարունակվող պահանջները, ներառյալ հղումային նյութերը, և Նախագծի կատարողականության բարելավման համար լավ կայուն գործելակերպերի կիրառումը: Այս ուղեցույցային ծանոթություններն իքնին որևէ քաղաքականություն հաստատելու նպատակ չեն հետապնդում: Հանքարդյունաբերության վաղ փուլի ԲԵՍ աշխատանքների համար միջազգային լավ գործալեկարպի ավելի արդի ուղղորդումը նույնպես շեշտադրում է ԲԵՍ ծավալների բացահայտման կարևորությունը մինչև տեղում որևէ երկրախուզական աշխատանք սկսելը: Օր.: Prospectors & Developers Association of Canada (PDAC), *e3 Plus: A Framework For Responsible Exploration, Excellence In Environmetnal Stewardship Toolkit (EES)*, Մարտ, 2009թ. https://goo.gl/yzgmoY.)

ձևակերպում է այն պահանջները, որոնք ուղղված են հաճախորդի գործունեությունից կենսաբազմազանության նկատմամբ ծագող սպառնալիքներից խուսափելու կամ դրանք մեղմելու միջոցառումներին: Այն պահանջում է, որ ԿՉ6-ի կիրառելիությունը հաստատվի Բ&Ս Գնահատման գործընթացի ժամանակ, մինչդեռ Կատարողականության չափորոշիչի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը կառավարվում է հաճախորդի Բ&Ս Կառավարման համակարգի միջոցով, ինչպես ուրվագծված է ԿՉ1 –ում (ԿՉ6, պարբ. 4):

ԿՉ6-ով պաշտպանության ամենաբարձր մակարդակները կիրառվում են կենդանատեսակի բնակության "կենսականորեն կարևոր բնական միջավայրի" նկատմամբ, որը ներառնում է նշանակալիորեն կարևոր բնական միջավայրը՝ ծայրահեղ վտանգված կամ վտանգված տեսակների (որոնք հայտնի են նաև որպես "Կարմիր ցանկի" տեսակներ) համար: ԿՉ6-ի պարբ. 17-ը ասում է, որ նախագծի ոչ մի գործունեություն թույլատրելի չէ կրիտիկական կարևորության բնակության միջավայրում, բացառությամբ այն դեպքերի, երբ բավարարվում են հետևյալ չորս չափանիշները:

i. "Եթե տարածաշրջանում չկան նախագծի զարգացման համար այլ պիտանի տարբերակներ՝ կենսաբազմազանության արժեքի փոփոխված կամ այնպիսի բնակության միջավայրում, որը կրիտիկական չէ;
ii. Նախագիծն իր գործունեությամբ չափելի անցանկալի ազդեցությունների չի հանգեցնի կենսաբազմազանության այն արժեքների նկատմամբ, որոնց համար նախատեսված է կրիտիկական բնակության միջավայրը, և այն էկոլոգիական գործընթացների նկատմամբ, որոնք օժանդակում են կենսաբազմազանության այդ արժեքներին;
iii. Նախագիծը չի հանգեցնում քանակական առումով՝ կրիտիկապես վտանգված կամ վտանգված տեսակների գլոբալ և/կամ ազգային/տարածաշրջնային պոպուլյացիայի կրճատմանը որևէ տևական ժամանակահատվածի ընթացքում;
iv. հաճախորդի կառավարման ծրագրի մեջ կա ներկառուցված ուժեղ, համապատասխանորեն ձևակերպված և երկարաժամկետ կենսաբազմազանության մշտադիտարկման և գնահատման ծրագիր:"

ԿՉ6-ը այնուհետև ասում է, որ "այն դեպքում, եթե հաճախորդն ի վիճակի է բավարարել պարբ. 17-ում սահմանված պահանջները, Կենսաբազմազանության Գործողությունների ծրագրի մեջ կնկարագրվի նախագծի ազդեցությունների մեղմացման ռազմավարությունը, որը հատուկ ձևակերպված կլինի կենսաբազմազանության այն արժեքների համար քանական օգուտներ ձեռք բերելու նպատակով, որոնց համար նախատեսված էր կրիտիկական բնակության միջավայրը" (պարբ. 18): Սրան կարելի է հասնել *տեղում իրականացվող* ջանքերի միջոցով, որոնք կոչված են բարելավել և պաշտպանել բնակության միջավայրը, կամ կենսաբազմազանության փոխհատուցման միջոցով (տողատակի ծանոթություն 15):

ՄՖԿ-ի արժեքային գնահատումը և կենսաբազմազանության հարցերի վաղ վերահսկումը

Ինչպես ասվեց վերևում, ՄՖԿ-ի կողմից 2007թ. հաճախորդի նախագծի մեջ կատարված նախնական ներդրումի արժեքային գնահատումը չէր ներառնում ՄՖԿ-ի Բ&Ս անձնակազմի այցելությունը Ամուլսարի տեղանք: ՄՖԿ-ի ներկայացուցիչը, որը Բ&Ս փորձագիտական որակավորում չուներ, այցելել է տեղանք 2007թ. մայիսին և զեկուցել, որ նախագիծը ոչ մի

ազդեցություն չի ունենա բնական միջավայրի վրա, և որ ոչ մի բնական ալպիական արոտավայր չի վնասվի: Արդյունքում, 2007թ. մայիսին ՄՖԿ-ի կողմից հրապարակված ԲՍՎԱ-ում [77] ԿՉ6-ի հետ կապված որևէ հարց չի նույնականացվել:

Նախնական ԲՍԳԾ-ում, ՄՖԿ-ի և հաճախորդի միջև փոխադարձ համաձայնությամբ պահանջվում էր, որ պետք է լինի ԲՍԿՀ, որ պետք է ստացվի համապատասխան փորձագիտական կարծիք, որ Բ&Ս հարցերի շուրջ պետք է անկախ աուդիտ անցկացվի, և որ հաճախորդը պետք է Ամուլսարի տարածքի համար իրականացնի Բ&Ս մեկնարկագծային ուսումնասիրություններ:[78]

ՄՖԿ-ի 2009թ. մայիսի հաջորդ ներդրումի հետ կապված՝ ԲՍՎԱ-ում նշվում էր, որ հայաստանցի մասնագետների կողմից իրականացված կենսաբազմազանության մեկնարկագծային վերլուծության ժամանակ ճանաչվել է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բուսականության ներկայություն: Սակայն, ԿՉ6-ի կիրառումը չէր քննարկվել և ԿՉ6-ի հետ կապված ոչ մի հատկորոշ Գործողությունների ծրագիր չէր նույնականացվել:[79]

2009թ. օգոստոսին կայացած ՄՖԿ-ի վերահսկողական այցելության փաստաթղթերում նշվում էր, որ հաճախորդը պետք է առաջնահերթություն տա միջազգային փորձագետ վարձելու հանգամանքին, որը կկոորդինացնի մեկնարկագծային ուսումնասիրությունները, և որ Բ&Ս մեկնարկագծային և ԲՍԱԳ-ի աշխատանքները պետք է նախաձեռնվեն համաձայն ՄՖԿ-ի պահանջների:

2010թ. հունիսին համեմատական վերլուծություն նախաձեռնվեց միջազգային խորհրդատուի կողմից, որի նպատակն էր վերաքննել նախագծի կարգավիճակը միջազգային ԲՍԱԳ-ի պահանջների համեմատությամբ: Ֆլորան և ֆաունան այդ պահին դիտվեցին որպես ցածրից միջին մակարդակի ռիսկերի հարցեր, թեև առկա էր պաշտպանվող տեսակների պոտենցիալ ներկայության հանգամանքը, և ուստի նշվեց հետագայում քանակական հատկորոշման և տեղում վավերացման կարիքի մասին:

2010թ. հոկտեմբերին կայացած վերահսկողական այցելության փաստաթղթերում նշվում էր միջազգային խորհրդատուի մասնակցության մասին, որը հրավիրված էր միջազգային և ՄՖԿ չափորոշիչներով ԲՍԱԳ պատրաստելու համար, և որը խորհուրդ էր տվել համապատասխանության համար մանրակրկտորեն վերաքննել կենսաբազմազանության մեկնարկագծային ուսումնասիրությունները:

Միջազգային ԲՍԱԳ-ի գործընթացը սկսելուց հետո, կենսաբազմազանության մեկնարկագծային տվյալների վերլուծությունը ճանաչեց կենսաբազմազանության որոշ բաղադրիչների շուրջը հետագա ուսումնասիրությունների կարիքը: 2012թ. նշվեց կրիտիկապես վտանգված *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր* բուսատեսակի

[77] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ռեսորսիզ Քոմփանի Լթդ. ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, մայիս, 2007թ. http://goo.gl/3qx7hs.

[78] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ռեսորսիզ Քոմփանի Լթդ. ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր*, մայիս, 2007թ. https://goo.gl/rjQeeK.

[79] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ինթերնեշնլ, ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, հունվար, 2009թ. http://goo.gl/a58vxi.

ներկայության մասին, որի արդյունքում նախաձեռնվեց մասնագետի կողմից բուսատեսակի ներկայության քանակական գնահատում:

2013թ. հունիսին, ՄՖԿ վերահսկողական այցելության արդյունքում նշվեց, որ նախագիծը նշանակալիորեն հետ է մնում երկրաբանական հետախուզության համար իր բնապահպանական, սոցիալական, առողջության և ապահովության (ԲՍԱԱՀ) կառավարման համակարգի զարգացումից: Արդյունքում ՄՖԿ-ն դիտարկեց, որ հաճախորդի երկրախուզական գործողությունները ազդել են *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր* բուսատեսակի պոպուլյացիայի վրա, դրանով իսկ նշանակալի անհամապատասխանության հարց ստեղծելով Կատարողականության չափորոշիչներով:

Սկսած 2013թ. ՀԱՊԽ-ը նշում է, որ փաստարկներ կան ՄՖԿ-ի և հաճախորդի կողմից կենսաբազմազանության հարցերի նշանակալի և ընթացիկ վերահսկման մասին, ներառյալ կենսաբազմազանության և էկոհամակարգի ծառայությունների վրա ավելի շատ ընթացիկ աշխատանքը, ինչպես նաև թիրախառված վերահսկողական հանդիպումները: .

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

2012թ.-ից մինչև 2015թ. միավորված բաժնետերերի (ՄՖԿ և ԶՎԵԲ), և ավելի ուշ նոր վարկատուների (RCF և Orion) խնդրանքով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացվեցին, որոնց նպատակն էր հասցեագրել կենսաբազմազանության հարցերը: Բացահայտվեց, որ Ամուլսար սարը և նրա լանջերը բնակության միջավայր են հանդիսանում 23 տեղական գիշատիչ թռչունների համար, որոնցից 14-ը գրանցված են Հայաստանյան Կարմիր գրքում, որոնցից յոթի բնադրման միջավայրը գտնվում է անմիջականորեն նախագծից ազդակիր տարածքում: Երկու տեսակներ գրանցված են որպես «Վտանգված»՝ Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Դրանք են. Եգիպտական անգղը և հողմավար բազեն: Եզրակացվել է, որ նախագծի տարածքն ունեցել է թռչունների տեսակների մեծ բազմազանություն, ներառյալ մի քանի վտանգված պոպուլյացիաներ: Սակայն, տարածքը չի որակավորվել որպես կրիտիկական բնակության միջավայր առանձին գիշատիչ տեսակների կամ չվող տեսակների համար, որոնք օգտվում են նախագծի տարածքից: Կաթնասունների ուսումնասիրությունը հաստատել է կովկասյան գորշ արջի բազմացող պոպուլյացիայի ներկայությունը Ամուլսար սարի հարավային լանջերի վրա: Տարածքը դիտվում է որպես կարևոր մի շարք տեսակների համար, որոնք պաշտպանվում են ԵՄ Բնակության միջավայրերի պաշտպանության դիրեկտիվով: Հետագա վերլուծություն նախաձեռնվեց արջի այս տեսակի պոպուլյացիայի մասին տվյալներ հավաքելու համար, ինչպես և մեկնարկագծային ուսումնասիրություններ արվեցին չղջիկների, երկենցաղների, սողունների, անողնաշարավորների, ձնկների, և այլնի համար: Նախագծի տարածքում կա առաջին կարգի կարևորության կրիտիկական բնակության միջավայր *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր* բուսատեսակի համար: Լավ վիճակում գտնվող ենթաալպիական արոտավայրերը, ինչպես օրինակ Ամուլսարում, հազվագյուտ են Հայաստանում, և դրանք

բնակության վայր են հանդիսանում նշանակալի թվով տարածաշրջանային-էնդեմիկ տեսակների համար:[80]

Ճանաչելով նախագծի տարածքում կենսաբազմազանության կարևորությունը, հաճախորդը որդեգրեց բնական բնակության միջավայրերում կենսաբազմազանության պահպանման՝ "ոչ մի քանակական կորուստ" արդյունքի, և կրիտիկական բնակության միջավայրերի համար "քանակական աճ" արդյունքի կորպորատիվ քաղաքականությունը: ԲՍԱԳ-ը նախաձեռնեց կենսաբազմազանության հարցերի մի բարդ վերլուծություն և ձևակերպեց մեղմացնող ռազմավարություն՝ ճանաչելով կենսաբազմազանության արժքեների պահպանման և այն կորուստները հակակշռելու անհրաժեշտությունը, որոնք չեն կարող մեղմացվել:[81]

ԲՍԱԳ ճանաչում է, որ նախագծի ենթակառուցվածքները և գործունեությունը կհանգեցնեն որոշ բնական բնակության միջավայրերի մեկընդմիշտ կորուստին, ինչից անհնար է խուսափել նախագծի տեխնիկական վերակառուցման միջոցով:[82] Նախաձեռնվել են այս տարածքից *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր* բուսատեսակի բնակության միջավայրի տեղափոխման ծրագրեր: Սկսվել են հեազոտությունները նախագծի փակումից հետո պոտենցիալ վերականգնողական գործողությունների համար: "Ռեզերվացիա" է նախագծվել որոշ *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր* բուսատեսակների, ինչպես նաև արջի համար կարևոր բնակության միջավայրի պաշտպանության համար, թեև արդյունավետ լինելու համար դա պետք է կապակցվի արևմտյան լանջի անտառային տարածքների հետ, ինչը պահանջում է որ արջերի (և այլ կաթնասունների) համար անցումային կետեր նախատեսվեն հարահոս համակարգի երկայնքով: Կենսաբազմազանության կորուստների փոխհատուցման մեծ հույսեր են կապվում առաջարկված Ջերմուկի Ազգային Պարկի հետ: Եվ ընկերությունը պարտվորություն է վերցրել օժանդակելու այդ նախագիծը:[83] Ոչ մի քանակական կորուստ պարտավորությունը իրականացնելը դժվարին խնդիր է լինելու, բայց հաճախորդը հետամուտ է այնպիսի մոտեցումների և լուծումների, որոնք համատեղելի են ընթացիկ լավ արդյունաբերական գործելակերպերի հետ:

Այդուհանդերձ, ԲՍԱԳ-ը նշում է կենսաբազմազանության վրա մնացորդային ազդեցության տարածքների մասին, որոնք մշտադիտարկման կարիք են ունենալու, անհրաժեշտության դեպքում փոխհատուցման տարբերակների վերաքննությամբ: Դրանք ներառնում են հետևյալ ազդեցությունները.

- *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր* բուսատեսակը՝ իր առաջին կարգի կրիտիկական բնակության միջավայրով.
- *Գորշ արջը* (*Ursus arctos)*, որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում որպես խոցելի և վտանգված ամբողջ տարածաշրջանում, և կրիտիկական բնակության միջավայրի կարգավիճակ է ստանում ՋՎԵԲ-ի 6րդ հանձնարարականով, որովհետև այդ տեսակները գրանցված են ԵՄ Բնակության միջավայրերի պաշտպանության Դիրեկտիվի IV Հավելվածում:

---

[80] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.10, *Բնապահպանական և* սոցիալական *մեկնարկագիծ*, *Կենսաբազմազանություն*, հունիս, 2016թ. https://goo.gl/s2Rthz.

[81] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.20, Կենսաբազմազանություն գործողությունների ծրագիր, հունիս, 2016թ. https://goo.gl/sgskMn.

[82] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.11, Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր, հունիս, 2016թ. https://goo.gl/r5aTll.

[83] ՄՖԿ Ներդրումը Ամուլսարում, *Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր*, հուլիս, 2016թ. https://goo.gl/xQXsbe.

- *Փոքր մկնաբազեն* (*Falco naumanni*) և ՀՀ Կարմիր գրքում գրանցված այլ թռչնատեսակներ, որոնք բնադրում են նախագծից ազդակիր տարածքում.
- Տարածքի կենդանական և բուսական տեսակներով հարուստ ենթաալպիական արոտավայրերը՝ ավելի լայն առումով վերցված:

2016թ. մայիսին ԱԲՍԽ Վերաքննությունը դրական գնահատական է տալիս, առ այն, որ ԲՍԱԳ-ի կենսաբազմազանության տարրերը հիմնականում համատեղելի են համապատասխան պահանջների հետ: Այնքանով որքանով որ թերությունները ճանաչվել են, դա վերաբերում է կովկասյան գորշ արջի վրա նախագծի ազդեցության ուսումնասիրությունների ավարտին և Տեսակների մասին ուղեկցող Գործողությունների ծրագրին:

ԱԲՍԽ նշում է, հաճախորդի կողմից վերջնաժամկետներով հաստատված և ռեսուրսներով օժանդկված պարտավորություններ ընդունելու կարևորության մասին՝ կենսաբազմազանության կորուստները փոխհատուցելու համար: Հաշվի առնելով փոխհատուցման բարեհաջող իրականացման համար առկա “գործնական բարդությունները”, ԱԲՍԽ նաև նշում է տեղանքի համար բազմակողմանի կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրի զարգացման կարևորությունը:[84]

Այս հանձնարարականները արտացոլվում են նախագծի ՄՖԿ ԲՍԳԾ-ի մեջ:[85]

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

Ոչ ՄՖԿ-ի նախնական արժեքային գնահատումը, ոչ էլ նրա կողմից նախագծի վաղ վերահսկումը չեն ճանաչել կենսաբազմազանությունը որպես կարևոր հարց և ՄՖԿ-ն չի նախաձեռնել ԿՉ6-ի կիրառումը նախագծի նկատմամբ: Արդյունքում ՄՖԿ-ի արժեքային գնահատումը և վաղ վերահսկումը երաշխիքներ չեն տվել առ այն, որ հաճախորդն ի վիճակի է եղել բավարարելու ԿՉ6-ի պահանջները՝ կապված կրիտիկական բնակության միջավայրերի հետ: Վաղ Բ&Ս ռիսկերի ծավալային ուսումնասիրության բացակայությունը խնդիրներ առաջացրեց ԲՍԳԾ-ի իրազեկության համար: Ծավալների ուսումնասիրությունը կարող էր հնարավորություն տալ պոտենցիալ Բ&Ս ռիսկերի և ազդեցությունների ծավալների և շրջանակի գնահատման համար, ինչպես և նախատեսվում է ՄՖԿ-ի Ուղեցույցներում, ներառյալ կարևոր բնական և կրիտիկական բնակության միջավայրերի նույնականացումը:

Հայաստանի բնապահպանական թույլատվության գործընթացին օգնելու համար նախաձեռնված մեկնարկագծային ուսումնասիրությունները չբավարարեցին միջազգային որակի ԲՍԱԳ-ի կարիքներին: Դա ուղղվեց 2010թ. վերջին միջազգային ԲՍԱԳ-ի խորհրդատուների մասնակցության շնորհիվ, ինչից հետո միայն մեծապես ակնհայտ դարձավ կենսաբազմազանության վրա ազդեցությունների նշանակությունը, ներառյալ նաև երկրաբանական հետախուզության աշխատանքների ժամանակ:

ՄՖԿ-ի պահանջը, որ հաճախորդը նախաձեռնի անկախ Բ&Ս աուդիտներ, այդպես էլ երբեք չբավարարվեց և հանվեց ԲՍԳԾ-ից 2010թ.: ՄՖԿ-ի գնահատականը ԿՉ1-ի պահանջների

[84] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, մայիս 2016թ. https://goo.gl/hQ51t5.

[85] ՄՖԿ Ներդրումը Ամուլսարում, *Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր*, հուլիս, 2016թ. https://goo.gl/xQXsbe.

համաձայն երկրախուզական գործողություններ նախաձեռնելու մեջ հաճախորդի կարողության և պատրաստակամության մասին մակերեսային էր: Այս ենթատեքստում, պետք է նշել, որ ՄՖԿ-ն երաշխիք չուներ առ այն, որ հաճախորդը համապատասխան ԲՍԿՀ ուներ երկրաբանական հետախուզության աշխատանքների համար մինչև 2013թ.:

Ուստի ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից կենսաբազմազանության առնչությամբ 2007թ.–13թթ. ընթացքում նախագծի ռիսկերի վերաքննությունը և վերահսկումը անբավարար են եղել:

Արդյունքում, ՄՖԿ-ն երաշխիքներ չուներ առ այն, որ հաճախորդը կարողություն ուներ կրիտիկական բնակության միջավայրերի առնչությամբ ԿՉ6-ի պահանջները բավարարելու համար: Այս ենթատեքստում, ՄՖԿ-ն դիտարկել է, որ 2013թ. հաճախորդի երկրախուզական գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել՝ ծայրահեղ վտանգված, *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր,* բուսատեսակի պոպուլյացիայի 1-ին կարգի կրիտիկական բնակության միջավայրի համար: Սակայն, երբ վտանգված տեսակների վրա ազդեցությունները ճանաչվեցին, ՄՖԿ-ն արձագանքեց կենսաբազմազանության գնահատումների և Գործողությունների ծրագրերի պահանջով, ինչը պահանջվում է ԲՍԱ-ի գործընթացի մաս հանդիսացող ԿՉ6-ով:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ 2013թ,-ից հետո ժամանակահատվածում ՄՖԿ-ի վերահսկումը համարժեք է եղել ռիսկին և հանգեցրել է Գործողությունների ծրագրում համապատասխան դրույթների զարգացմանը, որոնք նախագծված են կենսաբազմազանության վրա նախագծի պոտենցիալ ազդեցությունները նվազագույնի հասցնելու, մեղմացնելու և փոխհատուցելու համար, ինչպես պահանջվում է Կատարողականության չափորոշիչներով:

B. Սոցիալական հարցերի վերլուծությունը

Այս հատվածը գնահատում է ՄՖԿ-ի կատարողականությունը կապված բողոքատուների կողմից բարձրացված մի շարք սոցիալական հարցերի հետ: Այդ հարցերը վերաբերում են ընկերության կողմից սոցիալական ռիսկերի և ազդեցությունների կառավարմանը, նախագծի ԲՍԱԳ-ի որակին, և նախագծի շուրջ խոհրդակցության գործընթացներին: Մասնավորապես, բողոքատուների բարձրացրած մտահոգությունները վերաբերում էին հետևյալ հարցերին.

- Հողի օտարման գործընթացի թափանցիկությանը և համապատասխան խոհրդակցությանը, Արդյոք Գնդեվազի բնակիչների հետ հողի գնման մասին բանակցությունները տարվել են՝ մերժելու դեպքում նրանցից հողը բռնագրավելու սպառնալիքի ճնշման տակ:
- Ջերմուկի տուրիստական սեկտորին սպառնացող ազդեցությունների ռիսկերը, որոնք բխում են առողջապահական տուրիզմի և արդյունքում առողջարանի բրենդի հեղինակազրկման առումով հանքի հարևանության բացասական ազդեցությունների ընկալումից:
- Ազդեցությունների ռիսկը Գնդեվազի համայնքի և բնակչության վրա նախագծի շինությունների տեղից և ազդեցությունները առողջության, կենսապահովման միջոցների, և համայնքի բարօրության վրա.

- Խոհրդակցության և մասնակցության գործընթացների համապատասխանությունը, հանրային լսումներին մտահոգ շահագրգիռ կողմերի մասնակցության մատչելիությունը, և մտահոգությունները, թե բողոքները համապատասխանաբար են գրանցվել կամ հասցեագրվել:

1. Հողի օտարումը և կենսապահովման միջոցների վերականգնումը

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ տեղեկույթը Գնդեվազում հողի օտարման հարցի մասին պարզ չի եղել, այսինքն պարզ չի եղել, թե ինչ է կառուցվելու հողի վրա: Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքը պնդում է, որ հողի օտարումն իրականացվել է ճնշման տակ, որովհետև մերժելու դեպքում եղել է կառավարության կողմից բռնագրավման սպառնալիք: Այնտեղ նաև պնդում են, որ տեղեկույթը հողի օտարման մասին պարզ չի եղել, և որ վաճառողները մանիպուլյացիայի են ենթարկվել/մոլորեցվել են այնպիսի գործողությունների միջոցով, ինչպես օրինակ սեփականատիրական վկայականներ հավաքելը առանց տեղեկացնելու սեփականատերերին, թե դրանք ինչու էին հավաքվում: ՀԱՊԽ-ի համապատասխանության արժեքային գնահատումը գտավ, որ բողոքում բարձրացվում են հարցերը, որոնք վերաբերում են հողի օտարման նկատմամբ նախագծի մոտեցումներին. մասնավորապես, արդյոք սեփականատերերի հետ գործարքները արվել են թափանցիկ ձևով: Այնուհետև մտահոգություններ բարձրացվեցին ՀԱՊԽ-ի հետաքննության տեղական այցելության ժամանակ, առ այն, որ հողի վաճառքը ազատորեն չի բանակցվել, որովհետև բանակցություններն արվել են բռնագրավման սպառնալիքի տակ:

Համապատասխան պահանջները

Այս հատվածը կիրառում է ՄՖԿ-ի 2012թ. Կայունության շրջանակի պահանջները, որովհետև դրանք հղվում են ԲՍԱԳ-ում, և դրանից հետո հողի օտարման և կենսապահովման միջոցների վերականգնման գործողությունների քննարկման կապակցությամբ ՄՖԿ-ի վերահսկման մեծ մասն արվել է 2012թ. Շրջանակով:

Կատարողականության Չափորոշիչ 5-ը (ԿՉ5, Հողի օտարում և հարկադիր վերաբնակեցում) նպատակ ունի խուսափել հարկադիր վերաբնակեցումից կամ առնվազն նվազագույնի հասցնել այն և մեղմացնել անցանկալի սոցիալական և տնտեսական ազդեցությունները, որոնք բխում են հողի օտարումից կամ հողի օգտագործման սահմանափակումներից (ԿՉ5, Նպատակները): ԿՉ5-ը հատկորոշաբար միտված է կառավարելու Հարկադիր վերաբնակեցումը, որը վերաբերում է հարկադիր սեփականազրկման դեպքերին, ինչպես նաև այն դեպքերին, երբ հողի օտարումը տեղի է ունենում սեփականազրկման սպառնալիքի տակ (պարբ. 5):

ԿՉ5-ը խրախուսում է մասնավոր սեկտորի գործիչներին “օգտագործել բանակցված գործարքների մոտեցումը” նույնիսկ այնտեղ, որտեղ սեփականազրկումը տարբերակ է (պարբ. 3): Սակայն, նման դեպքերում, ԿՉ5-ը հստակ հատկորոշում է, որ բանակցային

համաձայնությունները պետք է բավարարեն ԿՉ5-ի պահանջներին: Նման մոտեցումը ենթադրում է "ակտիվների կորուստի ինքնարժեքի լրիվ փոխարինումով հատուցման" դրույթը, ինչպես նաև "այլ օգնություն [հարկադիր վերաբնակեցված անձանց], իրենց կենսամակարդակի կամ կենսապահովման միջոցների չափորոշիչները վերականգնելու կամ բարելավելու համար" (պարբ. 9):

Գործընթացի բերումով, հիմնական նշանակություն ունեն երկու ընդգրկուն հարցեր: Առաջինը, վերաբնակեցման գործողությունը պետք է կիրառվի ազդակիրների իրազեկ մասնակցությամբ (ԿՉ5, Նպատակները): Երկրորդ, վերաբնակեցումը պետք է տեղի ունենա համաձայն Վերաբնակեցման Գործողությունների ծրագրի կամ Կենսապահովման միջոցների վերականգնման ծրագրի, որոնք կուղղորդեն գործընթացը նախնական պլանավորումից մինչև սոցիալ-տնտեսական մեկնարկագծային տվյալների հավաքումը այն անձանց մասին, ովքեր վերաբնակեցվել են, ի հավաստում գործողության բարեհաջող ավարտի (պարբ.-եր 14 և 15):

ՄՖԿ-ի Բ&Ս նախաներդրումային վերաքննությունը

ՄՖԿ-ի կողմից 2007թ. մայիսին Ամուլսարում կատարած նախաներդրումային այցելության փաստաթղթերը զեկուցեցին, որ հողի հետ կապված ոչ մի ազդեցություն չի ակնկալվում, քանի որ նախագծի տարածքում ոչինչ չի աճում: 2007թ մայիսին հրապարակված ԲՍՎԱ-ում հատկանշվում էր, որ ԿՉ5-ի տեղինությունը (Հողի օտարում և հարկադիր վերաբնակեցում) "կհաստատվի հանքի Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության ավարտից և հերթական ներդրումի մասին որոշման կայացումից հետո:"[86] ԲՍՎԱ-ն պնդում է, որ ոչ մի ազդեցություն չի լինի սննդի անվտանգության վրա և գյուղատնտեսական հողերի կորուստ կամ պակասում չի ակնկալվում, և որ արտոնագրված տարածքում չկա ոչ մի գյուղատնտեսական կամ մասնավոր սեփականության հողատարածք:

ՄՖԿ-ի վերահսկումը

Նախագիծը, ինչպես որոշված էր իզկզբանե պետք է գտնվեր Վորոտանի հովտում, որտեղ հիմնականում ազդելու էր Գորայքի համայնքի հողատարածքների վրա: Մինչև 2013թ. շատ քիչ, եթե ոչ ընդհանրապես ոչ մի, ենթակառուցվածք չէր պլանավորվում կառուցել Գնդեվազի վարչական տիրույթում:

2008թ. վերահսկողական այցելությունից հետո ՄՖԿ-ի փաստաթղթերում նշվում էր, որ համայնքները հեռու են երկրաբանական հետախուզության աշխատանքների տեղանքից: Եվս մեկ տեղում այցելությունից հետո, 2009թ., ՄՖԿ-ի փաստաթղթերում նշվում էր, որ անասնապահները ավանդաբար հող են վարձակալում "տեղական ինքնակառավարման մարմիններին/քաղաքապետարաններին" պատկանող տարածքներում՝ իրենց կենդանիներին արածացնելու համար: Ընկերության գործունեության հնարավոր ազդեցությունը ավանդական հողօգտագործողների վրա չէր դիտարկվում, ելնելով այն պնդումներից, որ երկրախուզական գործողությունները ոչ մի ազդեցություն չունեն անասնապահների վրա: Այդ տեղանքային այցելությունից հետո ՄՖԿ-ն ավելացրեց ԲՍԳԾ-ի մեջ՝ մեկնարկագծային սոցիալ-տնտեսական ուսումնասիրություններ անմիջապես նախաձեռնելու կարիքը:

2010թ. ՄՖԿ ճանաչեց նախագծի տարածքի պոտենցիալ օգտագործումը սեզոնային

[86] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ռեսորսիզ Քոմփանի Լթդ. ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, մայիս, 2007թ. http://goo.gl/3qx7hs.

անասնապահների/հովիվների կողմից և ԿՉ5-ի առնչությամբ սոցիալական մեկնարկագծային ուսումնասիրություններ իրականացնելու կարիքը, նպատակ ունենալով երաշխավորել բոլոր նրանց նույնականացումը, ովքեր կարող են պոտենցիալ ազդակիր լինել, ներառյալ "քոչվոր հովիվներին": ՄՖԿ-ն խորհուրդ տվեց հաճախորդին օգտագործել այս տեղեկությթը հանքի ենթակառուցվածքների համար իրազեկ ընտրություն կատարելու համար:

2010թ. հուլիսին ԲՍԱԳ-ի համեմատական վերլուծությունը ճանաչեց ընթացիկ հողօգտագործման մասին տեղեկույթի կարիքը և որոշեց որ մի "առանձին" հատուցման ծրագիր պետք է գնահատվի՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի մեջ ընդգրկվելու նպատակով: Այս հարցը, սակայն, չփոխանցվեց ՄՖԿ-ի վերահսկողական փաստաթղթերին հաջորդ տարիների ընթացքում:

2011թ., սոցիալ-տնտեսական մեկնարկագծային ուսումնասիրությունները ընթացքի մեջ էին: 2012թ., մեկնարկագծային ուսումնասիրությունների շրջանակում իրականացվեց սեզոնային հովիվների մարդահամար: Այս աշխատանքը հետագայում արդիականացվեց 2014–15թթ. ընթացքում ֆոկուսային խմբերի և հարցազրույցների միջոցով՝ էկոհամակարգային ծառայությունների վերաքննության շրջանակում:

2012–14թթ. ժամանակահատվածի ընթացքում նախագծի ենթակառուցվածքների համար պլանավորված տեղերը նշանակալիորեն փոխվեցին, ներառյալ ԿՏՀ-ի տեղի փոփոխությունը — ավելի ակտիվորեն օգտագործվող հողերից ազդեցությունները հեռացնելու ակնկալիքով, ներառյալ Գնդեվազի բնակիչներին պատկանող գյուղատնտեսական հողատարածքները, խոտհարքի դաշտերը և ծիրանի այգիները: 2013թ. մայիսին ՄՖԿ-ն նշեց, որ հաճախորդը վարձել է թիրախային վերաբնակեցման մասնագետի, որը պետք է առաջնորդի հողի օտարման գործընթացը: ՄՖԿ-ն մտահոգություններ արտահայտեց և հանձնարարականներ տվեց կապված ԿՉ1-ի և ԿՉ5-ի համապատասխանության ապահովման հետ. որովհետև պոտենցիալ ազդակիր հողատերերի հետ խոհրդակցություններ չէին անցկացվել, ինչը կարող էր տեղեկույթ ապահովել ԿՏՀ-ի նոր տեղի մասին որոշում կայացնելու համար այլընտրանքային գնահատման տեսակետից, — և ավելի ընդհանուր առմամբ պակասում էր հողատերերի իրազեկման համար տրամադրված տեղեկույթը:

2013թ. վերջին, ԿՏՀ-ի տեղը կրկին փոխվեց այս անգամ իրավական նկատառումներով: Ընդ որում, ԿՏՀ-ի ընթացիկ տեղանքն արդեն նույնականացվել էր և լրացուցիչ ուսումնասիրություններ էին արվել ԲՍԱԳ-ի վերաքննության համար: Գործընթացն ուղղորդելու համար Հողի օտարման ճանապարհային քարտեզի մշակումն ավարտվեց 2014թ. մայիսին անկախ փորձագետի կողմից, որը խորհուրդ էր տալիս, որ ամբողջական Վերաբնակեցման գործողությունների ծրագրի (ՎԳԾ) կարիք չկա:

2014թ. հոկտեմբերին ՄՖԿ-ն նշեց, որ Հողի օտարման և հատուցման ուղեցույց (ՀՕՀՈՒ)[87] է հրապարակվել 2014թ. Հունիսին՝ հողի սեփականատերերի և հողօգտագործողների համար, և որ խոհրդակցությունները՝ հողի օտարման մասին 21 հողի սեփականատերի հետ, ընթացքի մեջ են: ՄՖԿ-ն մտահոգություններ արտահատեց հատուցման տարիֆների որոշման

[87] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 6.16.1, Ուղեցույց հողատերերի, և հողօգտագործողների համար – հողի օտարումը և հատուցումը (2014թ.), փետրվար, 2015թ.

կապակցությամբ հստակ ուղղորդման բացակայության մասին և ավելի ընդհանուր առմամբ ԿՉ5-ի պահանջների հետ գործընթացի համապատասխանության մասին: Ընդ որում, ՄՖԿ նաև շեշտադրեց կենսապահովման միջոցների վերականգնման կարևորությունը ԿՉ5-ի պահանջներին բավարարելու համար, և որ Հողի մատչելիության և կենսապահովման միջոցների վերականգնման ծրագիրը (ՀՄԿՄՎԾ) պետք է հրապարակվեր մինչև հողի օտարման գործընթացի սկիզբը:

2015թ. սեպտեմբերին ՄՖԿ-ն իրականացրեց վերահսկողական և արժեքային գնահատման միավորված այցելություն՝ ակնկալելով հերթական պոտենցիալ ներդրումը հանքի շինարարության մեջ: ՄՖԿ նշեց, որ հողի օտարման գործընթացը սկսվել է 2015թ. հունվարին՝ 141 ազդակիր տնային տնտեսությունների հետ: ՄՖԿ-ն հարցարույցներ անկցակացրեց համայնքի սահմանափակ թվով, հողի օտարման գործընթացից ազդակիր, անդամների հետ, և մի անկախ աուդիտ՝ այս այցելության և հողի օտարման գործընթացի կապակցությամբ հավաքված արդյունքների հիման վրա, զեկուցեց, որ. "… գործընթացի մասին ընդհանուր կաիծիքն ադեկվատ է, մարդկանց հետ խորհրդակցել են հողօտարման գործողությունը սկսելուց առաջ և մարդիկ լավ իրազեկված են եղել գործընթացի մասին, արժեքային գնահատումները ադեկվատ են եղել և շուկայական արժեքին համարժեք կամ նույնիսկ ավելի բարձր, և այն անհատները, ովքեր արդեն ստացել են վճարումը բավարարված են գործարքների ընդհանուր տևողությամբ:"

ԲՍԱԳ-ի արդյունքները

ՀՕՀՈՒ-ն իսկզբանե հրապարակվեց 2014թ. հուլիսին, իսկ արդիականացված տարբերակը հրապարակվեց 2015թ. փետրվարին: ՀՕՀՈՒ-ն ԲՍԱԳ գործընթացով վերամշակվեց և դարձավ Հողի մատչելիության և կենսապահովման միջոցների վերականգնման ամբողջական ծրագիր (ՀՄԿՄՎԾ): ՀՄԿՄՎԾ-ը հասցեագրում է նախագծի ազդեցությունները անասնապահ հովիվների, Գնդեվազի հողի սեփականատերերի, և այլ ազդակիր հողօգտագործողների վրա: ՀՄԿՄՎԾ-ը հրապարակեց 2015թ. ապրիլին և ներառեց տեղեկույթ սեփականազրկման իրավունքի մասին, որը կարող է կիրառվել որպես վերջին միջոց, եթե մասնավոր հողի օտարումն անհնար է: [88]

Հողի օտարման գործընթացի վերաբերյալ անկախ աուդիտ իրականացվեց 2015թ. օգոստոսին: Աուդիտը գտավ, որ հողի օտարման ընկերության գործընթացը համատեղելի է եղել ԿՉ5-ի պահանջների հետ, նույնիսկ թեև ԿՉ5-ը պահանջում էր, որ ՀՄԿՄՎԾ-ն պետք է առկա լիներ մինչև հողի օտարումը:[89] Աուդիտը հասցեագրում էր տեղեկույթի մատչելիության հարցը հողի օտարման բանակցությունների ժամանակ և գտավ, որ հարցված վաճառողների կարծիքով, իրենք լավ իրազեկված են եղել և ընկերությունն էլ իրենց հարցերի համար հասանելի է եղել: Աուդիտը ճանաչեց, որ կար թերություն հողի օտարման գործընթացի մասին տեղեկույթի առկայության առումով, 2014թ. սկզբին: Սակայն, այն նաև նշեց, որ երբ հողային խոհրդակցությունները և բանակցությունները սկսվեցին 2015թ. սկզբին, վաճառողները ստացել էին համապատասխան տեղեկատվություն, և նրանք լավ իրազեկված էին զգում իրենց:

[88] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.23, Հողի մատչելիության և կենսապահովման միջոցների վերականգնման ծրագիր (ՀՄԿՄՎԾ), էջ 7, փետրվար 2015թ. https://goo.gl/TL7diz.
[89] Նայթ Պյեսոլդ, ՀՄԿՄՎԾ Աուդիտ, 2015թ., էջեր ES-2,3.

Ի ամփոփում, ԲՍԱԳ-ը ճանաչել է հողային պահանջները և հասցեագրել է պոտենցիալ ազդեցությունները: Այս գործընթացի վերահսկման ընթացքում ՄՖԿ ողջամիտ քայլեր է նախաձեռնել համոզվելու համար, որ Գնդեվազի հողերի օտարման և հատուցման գործընթացները գնահատված են եղել, պլանավորված և իրականացվել են ԿՉ5-ի պահանջների հետ համապատասխանությամբ, հատկանշելով, որ գները շուկայական արժեքից բարձր են եղել, և վաճառողների կողմից դիտվել են որպես արդարացի: Հատուցման գնահատումը և գները հրապարակվել են որոշ բանակցություններից հետո: Թեև հնարավոր է, որ դա լրիվ համատեղելի չի եղել թափանցիկության և իրազեկ մասնակցության մասին ԿՉ5-ի պահանջների հետ, ոչ մի փաստարկ չկա առ այն, որ դա հանգեցրել է հողի օտարման արդյունքների մեջ այնպիսի նյութական թերությունների, որոնք հետագայում կպահանջեին ՄՖԿ-ի կողմից որևէ գործողություն:

Խոհրդակցության գործընթացը հողի օտարման և հատուցման շուրջը

Ինչպես նշվել է ՄՖԿ-ի կողմից, թերություններ են եղել մինչև 2013թ. ԿՏՀ-ի տեղանքի այլընտրանքային վերլուծության համար հնարավոր ազդակիր հողի սեփականատերի հետ խոհրդակցության առնչությամբ: Տնտեսական տեղահանությունից ազդակիր մարդկանց առաջին անմիջական մասնակցությունը եղավ 2013թ. սեպտեմբերին, երբ տեղի ունեցավ հնարավոր ազդակիր անասնապահ հովիվների հետ հանդիպումը, համաձայն ՇԿՆԾ-ի 2016թ, տարբերակի հետ:[90] Գնդեվազի ազդակիր հողատերերի հետ առաջին փաստաթղթագրված խոհրդակցությունը ԿՏՀ-ի վերջնական տեղի շուրջը տեղի ունեցավ 2014թ. մայիսին, երբ, համաձայն 2016թ. ՇԿՆԾ-ի հաճախորդը ներկայացրեց նոր նախագծի տեխնիկական կառուցվածքը մի հանրային հանդիպման ժամանակ:[91]

Հողի օտարման գործընթացի հետ կապված հատկորոշ խոհրդակցությունների և հրապարակման գործողությունների ցանկը տրված է ՀՄԿՄՎԾ[92]-ի մեջ, որը հետագայում վավերացվեց անկախ աուդիտի կողմից.[93] Ստորև զետեղված են հիմնական փաստաթղթերը և դրանց իրականացման ժամանակացույցը.

- ՀՕՀՈՒ-ի հանրային հրապարակում 2014թ. Հուլիսին, անգլերեն և հայերեն, Գնդեվազի Տեղեկատվության կենտրոնում, հաճախորդի վերկայքում, և 1,000 օրինակ չորս համայնքների տնային տնտեսություններին բաժանելու միջոցով.
- Վերջնական ՀՕՀՈՒ-ի հրապարակումը 2015թ. հունվարին.
- ՀՄԿՄՎԾ-ի հրապարակումը 2015թ. ապրիլի 21, անգլերեն և հայերեն, Գնդեվազի Տեղեկատվության կենտրոնում, հաճախորդի վերկայքում.
- Վաղ խոհրդակցությունների ժամանակ մատչելի հարց ու պատասխանի թերթիկ.

Անկախ աուդիտը ներառավ խոհրդակցության գործընթացների մանրամասն վերաքննությունը: Խոհրդակցությունը ներառված էր որպես աուդիտի կիզակետ, ՄՖԿ-ի և ևս մեկ վարկատուի մտահոգությունների շրջանակում՝ հողի օտարման գործընթացի շուրջը

---

[90] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.6, Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը (ՇԿՆԾ), հունիս, 2016թ.
[91] *Ibid. նույն տեղում*, էջ 25
[92] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.23, Հողի մատչելիության և Կենսապահովման միջոցների վերականգնման ծրագիր (ՀՄԿՄՎԾ), էջ 42, փետրվար, 2015թ. https://goo.gl/TL7diz.
[93] Նայթ Պյեսոլդ, ՀՄԿՄՎԾ աուդիտ, 2015թ.

հրապարակումների և խոհրդակցության համապատասխանության մասին: Աուդիտը գտավ, որ թեև նախագիծն իսկզբանե ամբողջությամբ համապատասխան չէր, մինչև հողի օտարման գործողությունները սկսելը՝ տեղեկատվության հրապարակումների բացթողման պատճառով, շահագրգիռ կողմերին ադեկվատորեն իրազեկելու նպատակը ի վերջո ապահովվել էր ՀՕՀՈՒ-ի շուրջը խոհրդակցության և հրապարակումի միջոցով: [94] ՀԱՊԽ-ը նշում է, որ, համաձայն աուդիտի, ՄՖԿ-ն շեշտադրել էր ՀՄԿՄԿԾ-ի հրապարակման կարիքը մինչև հողի օտարման գործողությունների սկսելը:[95]

Համաձայն ՄՖԿ-ի 2016թ. ԲՍՎԱ-ի և ԲՍԳԾ-ի, Կենսապահովման միջոցների վերականգնման ծրագիրը (ԿՄՎԾ) պետք է "բարելավվեր", ելնելով կենսապահովման միջոցների վերականգնման գործողությունների տրամադրման նախնական փորձից, և հրապարակվեր ազդակիր համայնքներում:[96] ՀԱՊԽ-ը նշում է, որ ԿՉ5-ը պահանջում է ոչ միայն հրապարակել, այլ նաև նաև խոհրդակցություն և ազդակիր մարդկանց իրազեկ մասնակցությունը: Հաշվի առնելով բողոքատուների և միչն այդ նաև ՄՖԿ- կողմից բարձրացված մտահոգությունները խոհրդակցության գործընթացների համապատասպանության մասին, ՀԱՊԽ-ը նշում է, որ դա ՄՖԿ-ի պատասխանատվությունն է՝ երաշխավորել, որպեսզի ԿՄՎԾ-ը արդիականացվի համապատասխան խոհրդակցության և ազդակիր համայնքների մասնակցության միջոցով:

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

ԿՉ5-ի ընդհանուր համապատասխանությունը

Հաճախորդը կարող էր հետամուտ լինել հողի սեփականազրկմանը, բայց ընտրեց, ԿՉ5-ի նպատակների հետ համատեղելի մոտեցում. ձեռք բերել հողը բանակցված համաձայնության միջոցով: Երբ գործընթացի սկզբում ճանաչվեցին հողի օտարման մոտեցման մեջ հաճախորդի թերությունները, ՄՖԿ-ն աշխատեց հաճախորդի հետ այդ հարցերը հասցեագրելու ուղղությամբ, կենտրոնանալով այնպիսի արդյունքների վրա, որոնք համատեղելի են ԿՉ5-ի նպատակների հետ:

ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ տվեց ԿՉ5-ի հիմնական պահանջները բավարարելու համար:

Հողի օտարման հետ կապված մասնակցությունը, խոհրդակցությունը և տեղեկատվության հրապարակումը

Նախագծի հողի օտարման կարիքների հետ կապված անորոշությունները, նախագծի ենթակառուցվածքների տեղի փոփոխության պատճառով, հանգեցրին ինչպես հաճախորդի, այնպես էլ ազդակիր համայնքների համար անորոշության նշանակալի ժամանակահատվածի: ՄՖԿ-ն ճանաչեց ավելի ուժեղ խոհրդակցության կարիքը 2013 և 2014թթ., ներառյալ հողի օտարման կապակցությամբ: ՄՖԿ-ն աշխատեց հաճախորդի հետ այս հարցերը վերահսկման մեջ հասցեագրելու ուղղությամբ, ներառյալ հողի օտարման գործընթացի նկատմամբ անկախ

[94] *Ibid. նույն տեղում*
[95] *Ibid. նույն տեղում*
[96] ՄՖԿ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, Ամուլսար Գոլդ Փրոջեքտ (#37084), հուլիսի, 29, 2016թ.

աուդիտի միջոցով, որն իրականացվեց 2015թ. և եզրակացրեց, որ խոհրդակցության և հրապարակման պահանջները բավարարվել են:

ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ տվեց՝ ԿՉ5-ի խոհրդակցության և հրապարակման պահանջների հետ:

2. Ազդեցությունները Ջերմուկի տուրիզմի վրա

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ նախագիծն անցանկալի ազդեցություններ կունենա առողջարան-քաղաք Ջերմուկի տնտեսության վրա, որը գտնվում է հանքի տեղանքից 12կմ հեռավորության վրա: Ջերմուկի տուրիստական գոտու որոշ մասեր, ինչպես ասվում է բողոքում, գտնվում են հանքից ընդամենը 2կմ-ից 4կմ հեռավորության վրա: Բողոքում նշվում է, որ Ջերմուկը տուրիստական կենտրոն է իր տաք աղբյուրների, հանքային ջրերի և առողջապահական շինությունների գրավչությամբ: Հատկորոշաբար, բողոքում ասվում է, որ բնակիչների կարծիքով նախագիծը անցանկալի ազդեցություններ կունենա Ջերմուկի "առողջարանային բրենդի" վրա: Բողոքն այնուհետև պնդում է, որ քաղաքի բացառումը օրիգինալ ԲԱԳ-ի ազդակիր տարածքից, նշանակում էր, որ քաղաքի կրած ազդեցությունները հաշվի չեն առնվել, և ուստի բնակիչների ընդդիմությունը հանքի նմատմամբ անուշադրության է մատնվել:

Համապատասխան պահանջները

Բողոքատուների մտահոգությունները Ջերմուկի տուրիստական տնտեսության վրա նախագծի ապագա ազդեցությունների կապակցությամբ հարցեր են բարձրացրել հաճախորդի Բ&Ս գնահատման գործընթացի նկատմամբ ՄՖԿ-ի վերաքննության և վերահսկման համապատասխանության առնչությամբ: Այս ենթատեքստում տեղին են ԿՉ1-ի պահանջները: Մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է այն պահանջը, որ հաճախորդի Բ&Ս գնահատման մեջ դիտարկվեն "նախագծի հետ առնչվող բոլոր բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ազդեցությունները" (ԿՉ1, պարբ. 7) Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպի հետ "ադեկվատ, ճշգրիտ և օբյեկտիվ" (ԿՉ1, պարբ. 19) և համատեղելի եղանակով:

Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները պետք է գնահատվեն նախագծի "ազդեցության տարածքի" (ԿՉ1, պարբ. 8) ենթատեքստում, որը սահմանվում է, որպես տարածք, որն ամենայն հավանականությամբ ազդեցություն կկրի նախագծից: Ազդեցության տարածքի սահմանումը պետք է արվի կրկնողաբար, շահագրգիռ կողմերի սահմանման և պոտենցիալ ազդեցությունների նույնականացման հետ միասին: [97]

Երբ ազդեցությունները ճանաչված են, "մեղմացնող միջոցների հիերարխիան" պահանջում է գերապատվությունը տալ "ազդեցություններից խուսափելուն, համեմատած դրանք նվազագույնի հասցնելու հետ, իսկ այնտեղ, որտեղ մնում են մնացորդային ազդեցությունները,

[97] *Ուղեցույցային ծանոթություն ՄՖԿ Կատարողականության չափորոշիչների համար*, Ուղեցույցային ծանոթություն 1, ՈՒԾ15, հուլիս, 2007թ.

առաջարկվում է հատուցում [կամ] փոխհատուցում, երբ դա տեխնիկապես և ֆինանսապես իրականացվելի է” (ԿՉ1, պարբ. 14):

ՄՖԿ-ի արժեքային գնահատումը և վաղ վերահսկումը

Նախագծի ազդեցության տարածքի հարցը առանձնահատուկ չէր դիտարկվել ՄՖԿ-ի 2007թ. և 2009թ. ներդրումների համար Բ&Ս վերաքննության մեջ: Ի հետևանք վաղ սոցիալ-տնտեսական ռիսկերի ծավալային ամփոփումը նույնպես չէր իրականացվել: Հանքի զարգացումից տուրիստական տնտեսությանը սպառնացող ռիսկերը, ինչպես նաև պոտենցիալ համայնքային մտահոգությունները, այդպիսով, չէին ճանաչվել և համապատասխան պահանջները կապված այս հարցերի հետ չէին առաջադրվել:

2007թ. ԲՍԳԾ-ն պարտավորեցնում է ընկերությանը իրականացնել մեկնարկագծային ուսումնասիրություններ, համաձայն ՄՖԿ-ի պահանջների հետ: Նախնական բնապահպանական մեկնարկագծային աշխատանքը սկսվեց 2008թ., բայց այն ուղղված էր ազգային պահանջներին և արտոնագրման գործընթացին և չէր ներառնում Ջերմուկը ազդեցության տարածքի մեջ: Նախօրոք սոցիալական մեկնարկագծային աշխատանք չէր իրականացվել, որովհետև այն չէր պահանջվում ազգային ԲԱԳ-ի գործընթացով:

2009թ. վերահսկողական այցելությունից հետո, ՄՖԿ խորհուրդ տվեց, որ հաճախորդը սոցիալ-տնտեսական մեկնարկագծային ուսումնասիրություններ սկսի: ՄՖԿ-ն խորհուրդ տվեց, որ ընկերությունը դիտարկի այն հարցը, արդյոք Ջերմուկը պետք է դիտարկել ԲՍԱԳ-ում, տեսողական/բնապատկերի փոփոխությունից և աղմուկի պոտենցիալ ազդեցությունների ենթատեքստում: ՄՖԿ-ն նաև խորհուրդ տվեց, որ սոցիալական մեկնարկագծային աշխատանք իրականացվի այնպիսի մակարդակում, որը բավարարում է ՄՖԿ-ի պահանջներին:

ՄՖԿ-ի 2011թ. վերահսկողական այցելության փաստաթղթերում նշվում է, որ Ջերմուկը դեռ ազդեցության տարածքի մաս չէր, և որ կան աճող մտահոգություններ, արտահայտված Ջերմուկի քաղաքապետի կողմից, քաղաքի վրա նախագծի պոտենցիալ ազդեցությունների մասին: Արդյունքում, հաճախորդը ստեղծեց Համայնքի հետ կապի հանձնաժողով (ՀԿՀ) Ջերմուկում և արդիականացրեց ԲՍԱԳ-ը քաղաքապետի համար: Միջազգային ԲՍԱԳ-ի գործընթացը սկսվեց 2011թ. և ներառավ Ջերմուկը որպես ազդակիր համայնք:

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

Տուրիզմի վրա նախագծի ազդեցությունների գնահատման քննարկումը ԲՍԱԳ-ի մեջ կարելի է բաղդատել երկու մասի: Մի կողմից, մտահոգություններ կան, որ նախագիծը կարող է անցանկալի ազդեցություն ունենալ Ջերմուկի առողջարանային ջրերի վրա, մասնավորապես, մակերևութային և գրունտային ջրերի աղտոտման և ճառագայթային աղտոտման առումով: Ինչպես նշվում է VII.A.1.-ում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համոզվել է, որ շահագրգիռ կողմերի մտահոգությունները այս հարցերի շուրջ արձագանք են ունեցել և դիտվում են որպես ԲՍԱԳ գործընթացի մասը:

Մյուս կողմից, կան փաստաթղթագրված մտահոգություններ՝ Ջերմուկի “բրենդի”, որպես առողջապահական տուրիզմի կենտրոնի վրա, նախագծի պոտենցիալ ազդեցությունների մասին, որոնք կարելի է ակնկալել, օրինակի համար.

- Նախագծի ստեղծած տեսողական ազդեցություններից,
- Աղմուկից և պայթյունների առաջացրած օդային ալիքների ազդեցություններից,
- Աշխատուժի ներհոսքից
- Ջերմուկի նախագծի մոտիկության բացասական ընկալումից
- Մի շարք այլ մտահոգություններից, ներառյալ պոտենցիալ բնապահպանական ազդեցությունները և բնապատկերի բնական բնույթի կորուստը:

Ստորև զետեղված աղյուսակը ամփոփում է ԲՍԱԳ-ի արդյունքները՝ կապված ազդեցության յուրաքանչյուր պոտենցիալ աղբյուրի հետ.

Ազդեցության աղբյուրը	**Ազդեցության գնահատումը**	**Մնացորդային ազդեցությունը**	**Ազդեցությունը Ջերմուկի բրենդի վրա**
Տեսողական/ վիզուալ ազդեցությունը	ԲՍԱԳ-ը ներառնում է տեսողական և բնապատկերային ազդեցության գնահատումը, դիտարկելով հանքի մոտիկության հանգամանքի ազդեցությունը Ջերմուկի տուրիստական վայրերի վրա: (Գլուխ 6.5)	Ճանաչվել է, որ նախագիծը անցանկալի տեսողական ազդեցություններ ունի, տեսանելի է Ջերմուկից և մոտակայքի տուրիստական վայրերից: Ճանաչվել է, որ այդ առումով հանգստացողները և տուրիստները կրելու են ամենանշանակալի ազդեցությունները: Տեսողական ազդեցությունները տուրիստների վրա գնահատվել են որպես ցածրից մինչև խոշոր՝ հանքի շահագործման ընթացքում, և ցածրից մինչև միջին՝ ավելի երկարաժամկետ առումով (փակումից հետո): Տեսողական ազդեցությունների մասին նշվել է նաև ԲՍԱԳ-ի էկոհամակարգային ծառայությունների հատվածում (Գլուխ 6.20):	Չի գնահատվել
Աղմուկը և պայթյունները	ԲՍԱԳ-ը դիտարկում է նախագծի աղմուկի ազդեցությունները: Ներառնում է պայթյունների արդյունքում օդի գերճնշման (պայթյունից առաջացած օդային ալիքի) ազդեցության	Աղմուկի ազդեցությունը շինարարության ընթացքում դիտարկվում է ցածր կամ չնչին բոլոր ազդակիր համայնքներում (ներառյալ Ջերմուկը): Պայթյունները կլինեն շաբաթական ոչ ավելի քան երեք անգամ: Պայթյունի աղմուկի կանխատեսումները հատկանշում են Ջերմուկի տարածքում օդի գերճնշումային խտացում մինչև 94 դեցիբել: Սա համարվում է չնչին	Չի գնահատվել

	վերլուծությունը: (Գլուխ 6.7)	ազդեցություն ըստ պայթյունների համար կիրառվող միջազգային ապահովության չափորոշիչների: Սակայն, ակնկալվում է , որ բոլոր պայթյունները լսելի կլինեն:	
Աշխատուժի ներհոսքը	ԲՍԱԳ-ը դիտարկում է տեղական համայքներում, ներառյալ Ջերմուկում աշխատողների բնակեցման ազդեցությունները: (Գլուխ 6.21)	Նշվում է, որ աշխատուժի ներհոսքի պատճառով մարդկանց կարծիքի մեջ բացասական փոփոխությունը Ջերմուկի, որպես - առողջարան քաղաքի նկատմամբ, կունենա պոտենցիալ "երկարաժամկետ ազդեցություններ քաղաք ժամանող այցելուների թվի աճի և ընդհանուր տնտեսական գործունեության և տուրիստկան սեկտորի հնարավորությունների աճի առումներով:" Սա դիտվում է որպես նախագծի "հնարավոր ամենալուրջ ազդեցություններից մեկը, որը պետք է համապատասխանաբար կառավարվի մի շարք միջոցներով և մշտադիտարկվի: "	Ճանաչվել է
Բացասական ընկալումները	Թեև համարվում է, որ ուղղակի բնապահպանական ազդեցությունները հավանական չեն, հանքի մոտիկության պատճառով Ջերմուկի բացասական ընկալումների հարցը չի գնահատվել:	Չի գնահատվել	Չի գնահատվել

Տուրիզմի վրա նախագծի ազդեցությունների ավելի ընդհանուր քննարկում պարունակվում է հաճախորդի մի շարք փաստաթղթերում:

Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի առաջին տարբերակում (ՇԿՆԾ տ.1, 2011թ.) նշվում է Ջերմուկի վրա պոտենցիալ ազդեցությունների մասին, և որ "որպես տուրիստական կենտրոն, որը կախված է շրջապատի բնության ֆիզիկական գեղեցկությունից, հնարավոր է,

որոշակի մտահոգություններ ծագեն քաղաքի բնակիչների մոտ նախագծի տեսողական բարետեսության կապակցությամբ [sic.]:”[98]

ՇԿՆԾ (տ.8) 2013թ. ավելի վաղ տարբերակում նշվում է տուրիզմի և Ջերմուկի առողջարանային ջրերի վրա նախագծի թողած ազդեցությունների կապակցությամբ շահագրգիռ կողմերի մտահոգությունների մասին: Այն նաև ներառնում է պարտվորություն “Բացասական ազդեցությունները կրճատող միջոցների և տուրիզմի հետ կապված դրական ազդեցությունները և հնարավորությունները առաջ տանող մեղմացնող ծրագրերի նախաձեռնման մասին:” Այս պարտավորությունը հանված է վերջնական տարբերակից (2016թ):[99]

2016թ. ՇԿՆԾ նշում է տուրիզմի վրա նախագծի բացասական ազդեցությունների կապակցությամբ համայնքի մտահոգությունների մասին: Ի պատասխան, ՇԿՆԾ նշում է հաճախորդի տեսակետի մասին, որ “տեսողական ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ մշակվել են”, և որ “անհավանական է, որ փոշին, պայթյունները կամ աղմուկը [կ]ազդեն Ջերմուկի վրա:”[100]

Տնտեսական ազդեցության մասին ԲՍԱԳ-ի Գլխում նույնպես քննարկվում է տուրիզմի մասին, եզրակացնելով, որ նախագիծը դրական ազդեցություն կունենա Ջերմուկ քաղաքի վրա, համալրելով քաղաքի եկամուտները տուրիստական սեզոնից դուրս, երբ հյուրանոցների զբաղվածությունը ցածր է: Մյուս կողմից, ճանաչվում է, որ նախագծի պոտենցիալը իր ծախսումներով առկա տուրիստական գործունեությունը հակակշռելու առնչությամբ պետք է մեղմացվի: Ջերմուկի բրենդի վրա ազդեցությունները չեն քննարկվում:

ԲՍԱԳ-ը դիտարկում է տուրիզմը որպես էկոհամակարգի արժեքավոր բաղադրիչ Կումուլատիվ ազդեցությունների գնահատման (ԿԱԳ) մեջ, գնահատելով երկուստեք հանքային ջրերի և տուրիստական արդյունաբերության դիմադրողականությունը՝ ուրիշ, (ոչ-հանքարդյունաբերական) արտաքին ազդեցությունների նկատմամբ: Սակայն, ԿԱԳ-ը չի դիտարկում Ջերմուկի վրա պոտենցիալ ազդեցությունների կումուլատիվ բնույթը ազդեցությունների բազմակի աղբյուրներից, և թե ինչպես կարող են դրանք ազդել, որպես տուրիստական այցելավայր առողջարան, բրենդային արժեքի վրա:

Վերջապես, Աշխատողների բնակության կառավարման ծրագրում (ԱԲԿԾ) նշվում է, որ “Ջերմուկի առողջարանային և հանգստավայրային տուրիստական իմիջի հեղինակազրկման ընկալման հետ կապված բարձր ռիսկը առկա է անկախ նախագծի աշխատողների բնակության վայրից:”[101] Սակայն, այս հարցը այդ փաստաթղթում որպես գնահատման առարկա չի դիտարկվում:

---

[98] Ամուլսար, Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը, տ.1, հոկտեմբեր, 2011թ.

[99] Ամուլսար, Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը, տ.8, մայիս, 2013թ.

[100] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.6, Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը, V12, հունիս 2016թ. https://goo.gl/H5J4jz.

[101] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.25, Բնապահպանական և Սոցիալական Կառավարման ծրագիր, Աշխատողների բնակեցման կառավարման ծրագիր, էջ 53, հունիս 2016թ. https://goo.gl/ac8pMH.

Հաճախորդի Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրում (ԲՍԿԾ) Ջերմուկի տուրիստական բրենդի վրա պոտենցիալ անցանկալի ազդեցություններն անմիջականորեն գնահատելու հատկորոշ միջոցները սահմանափակվում են հետևյալ դրույթներով.

- Նույնականացնել "տուրիզմի զարգացումը" որպես սոցիալական ներդրումների պոտենցիալ ոլորտ:[102]
- Միջոցներ նախաձեռնել աշխատուժի ներհոսքի ազդեցությունը՝ որպես տուրիստական ուղղություն, Ջերմուկի կարգավիճակի վրա նվազեցնելու համար:[103]

ՀԱՊԽ նշում է, որ բրենդի վրա ազդեցության մասին հիշատակվում է ԱԲՍԽ համեմատական վերլուծության տեսողական և բնապատկերային գնահատման քննարկման մեջ: ԱԲՍԽ նաև նշում է, որ ծայրահեղ կարևոր է, որպեսզի ադեկվատ խոհրդակցությունը շարունակվի Ջերմուկի բնակիչներին իրազեկելու և նրանց արձագանքը մեծաքանակ աշխատողների ներկայության կապակցությաբ գնահատելու համար, ինչը կարող է փոխել քաղաքի բնույթը և հեղինակությունը որպես տուրիզմի և առողջարանային կենտրոն: Սակայն, այս հարցերը չեն թարգմանվել Գործողությունների ծրագրում հատկորոշված պահանջների մեջ:[104]

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

Կան լավ-փաստաթղթագրված համայնքային մտահոգություններ տուրիզմի վրա նախագծի պոտենցիալ անցանկալի ազդեցությունների մասին: Ընդունվում է, որ Ջերմուկի հեղինակությունը որպես առողջարան քաղաքի կապակցվում է լավ առողջության կամ ինքնազգացումի, մաքուր օդի և հանգստության հետ: Ընդունվել է նաև, որ քաղաքի ընկալման վրա անցանկալի ազդեցությունները կարող են հանգեցնել քաղաքի տուրիստական այցելուների թվի կրճատմանը:[105]

Այս ենթատեքստում, պահանջվում էր նախագծի ազդեցության վերլուծությունը տուրիզմի վրա: Թեև Ջերմուկը իսկզբանե չէր դիտարկվում որպես նախագծի ազդեցության տարածքի մասը, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան միջոցներ է ձեռնարկել երաշխավորելու համար, որ դա այդպես լինի հաճախորդի կողմից միջազգային ԲՍԱԳ-ի պատրաստման ժամանակ:

<u>ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն համոզվել է, որ նախագծի հետ կապված բնապահպանական ազդեցությունների ռիսկը Ջերմուկի վրա ցածր է եղել, ինչպես շարադրված է սույն զեկուցագրի VII.A.1 հատվածում:</u>

Մինչև օրս, Ջերմուկի բրենդի վրա ազդեցությունների գնահատում նախաձեռնվել է միայն աշխատուժի ներհոսքի կապակցությամբ՝ Աշխատողների բնակեցման ազդեցության

[102] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.16, Համայնքային զարգացման ծրագիր, S/2, էջ 26, հունիս, 2016թ. https://goo.gl/LYGga6.

[103] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.25, Աշխատողների բնակեցման Կառավարման ծրագիր, տ.1, էջ 53, հունիս, 2016թ.https://goo.gl/S8FNDN.

[104] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, մայիս, 2016թ. https://goo.gl/hQ51t5.

[105] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.21, Պոտենցիալ Ազդեցությունները և Մեղմացման միջոցները, Աշխատողների բնակեցման, հունիս, 2016թ.https://goo.gl/DlLma8.

գնահատման (ԱԲԱԳ) միջոցով: Արդյունքում, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի առ այն, որ ազդեցությունները որոնք կարող են ազդել Ջերմուկի բրենդի վրա, որպես տուրիստական կենտրոնի — ինչպես օրինակ պայթյունների աղմուկը, տեսողական խանգարումները, և ավելի ընդհանուր ընկալումները, որոնք բխում են քաղաքին նախագծի մոտիկության հանգամանքից — համապատասխանաբար գնահատվել են: Կարելի է եզրակացնել, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի առ այն, որ այս հարցը հասցեագրվել է մեղմացման հիերարխիայի հետ համապատասխանությամբ:

Արդյունքում, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից ԲՍԱԳ գործընթացի վերահսկումը՝ կապված Ջերմուկի, որպես առողջարանային քաղաք բրենդի վրա նախագծի պոտենցիալ ազդեցության հետ, համարժեք չի եղել ռիսկին:

3. Գնդեվազ գյուղի վրա ազդեցությունների գնահատման համապատասխանությունը

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքի տակ ստորագրել են Գնդեվազի 148 բնակիչներ: Բողոքը նույնականացնում է մի շարք մտահոգություններ, որոնք վերաբերում են. կենդանիների կենսապահովման միջոցների վրա ազդեցություններին՝ աղտոտված խոտով սնվելու պատճառով, գյուղատնտեսական ապրանքների համար շուկաների կորստին, հարևանությամբ շահագործվող հանքի պատճառով, մարդկային առողջությանը սպառնացող ռիսկերին և բնապահպանական ռիսկերին՝ կապված ԿՏՀ-ի մոտիկության հանագամանքի հետ, ծանր մետաղների պարունակությամբ փոշու տարածմանը արոտավայրերի, բերքի և բնակելի տարածքների վրա: Բողոքը նաև պնդում է ճառագայթային ակտիվության բարձրացման մասին: Մտահոգությունները՝ կապված աշխատուժի ներհոսքի ազդեցությունների հետ, նշվում են նաև այս բողոքի առնչությամբ ՀԱՊԽ-ի գնահատման զեկուցագրում:

ՀԱՊԽ-ի անձնակազմը, Ամուլսար Նախագծի տարածք կատարած իր այցելության ժամանակ խոսել է Գնդեվազի բնակիչ ավելի քան 30 անհատների հետ, ովքեր կամ օժանդակել են, կամ ընդդիմադիր են եղել, կամ անվստահ չեզոք են եղել հանքի նկատմամբ: Այս քննարկումները հաստատել են համայնքի մտահոգությունները՝ կապված բողոքում բարձրացված հարցերի հետ: Մի շարք բնակիչներ մտավախություն են արտահայտել, որ իրենց սպասվում է աղքատացում, կենսապահովման միջոցների կորուստ, և որ մարդիկ կլքեն գյուղը, նրանք ովքեր չեն աշխատում ընկերության համար, կամ կվաճառեն հողերը և կտեղափոխվեն այլուր: Հատկորոշ մտահոգություններ կային նաև մեղվապահների և այլ ոչ ֆորմալ տնտեսական գործունեությամբ զբաղվողների վրա ազդեցությունների կապակցությամբ, որ Գնդեվազը կկորցնի ծիրանի ‘բրենդը’ և իր այլ գյուղատնտեսական ապրանքների գրավչությունը, և այն փոփոխությունների մասին, որ կկատարվեն համայնքի կյանքում հանքի զարգացման

պատճառով — վերածելով գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղը արդյունաբերական ավանի:[106]

Թեև ընդունվում է, որ նախագիծը կբերի նաև հատկորոշ օգուտներ և հնարավորություններ կստեղծի տարածաշրջանի համար, ինչպես ճանաչվել է ԲՍԱԳ-ում, ակնհայտ էր, որ ՀԱՊԽ-ի այդ հարցազրույցներին մասնակցածների մեծամասնությունը կիզակետված էր իրենց վախերի և մտահոգությունների վրա և անկարող էր տեսնել նաև ակնկալվող օգուտները: Հարցազրույցին մասնակցած բնակիչները ընդունում էին, որ զբաղվածության և այլ տնտեսական օգուտների հնարավորությունները կաճեն, բայց դա չէր փարատում նրանց մտահոգությունները, որ իրենց կենսառճը անդառնալիորեն կփոխվի իրենց համար անհասկանալի կամ անկանխատեսելի եղանակներով:

Բողոքի այս կողմերին հասցեագրելու համար, այս հատվածը դիտարկում է, արդյոք ՄՖԿ-ն ունեցել է հիմնավոր երաշխիքներ առ այն, որ Գնդեվազի համայնքի վրա նախագծի ազդեցությունների գնահատումը բավարարել է Կատարողականության չափորոշիչների պահանջներին: Այս հատվածը նաև դիտարկում է ՄՖԿ-ի Կատարողականության չափորոշիչների համապատասխանության ընթացիկ ուղղորդումը՝ ամբողջական/ինտեգրված գնահատումների և կումուլատիվ ազդեցությունների նկատմամբ պահանջների առումով:

Համապատասխան պահանջները

Բողոքներում բարձրացված հարցերն անմիջականորեն կապված են ԿՉ1-ի Բ&Ս համապատասխանության գնահատման բաղադրիչների հետ: Հարցն այն է, արդյոք լիովին են դիտարկվել նախագծի պոտենցիալ Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները: Այս դեպքում Գնդեվազի ռիսկային բնութագիրը նշանակալիորեն խստացել է նախագծի ազդեցության և սպասարկման գոտում նախագծի պլանավորման ուշ փուլում արված փոփոխությունների պատճառով: Ինչպես պահանջվում է Կայունության քաղաքականությամբ, պետք է խուսափել աշխատողների, համայնքների և բնական միջավայրի վրա բացասական ազդեցություններից, կամ եթե խուսափելը հնարավոր չէ, դրանք պետք է հնարավորինս կրճատվեն, մեղմացվեն կամ համապատասխանաբար փոխհատուցվեն (պարբ. 6): Ի լրումն, ՄՖԿ-ն պարտավորվում է երաշխավորել, որ տնտեսական զարգացման ինքնարժեքը անհամամասնաբար չի ընկնի աղքատների և խոցելիների ուսերին (պարբ. 9):

ԿՉ1-ը ձևակերպում է հաճախորդի Բ&Ս Գնահատման պահանջները: Հաճախորդը պետք է իրականացնի մի ԲՍԱԳ, "որը ինտեգրված եղանակով կդիտարկի նախագծի պոտենցիալ սոցիալական և բնապահպանական ռիսկերը և ազդեցությունները" (պարբ. 4): Այն պետք է դիտարկի նախագծի "բոլոր կապակցված Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները" և "համատեղելի լինի Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպի հետ (ԼՄԱԳ)" (պարբ. 7): Այն նաև պետք է դիտարկի "նախագծի պատճառած չպլանավորված, բայց կանխատեսելի զարգացումները" և "այն կումուլատիվ ազդեցությունները, որոնք ծագում են տարածքի կամ նախագծի կողմից օգտագործված կամ անմիջականորեն ազդակիր ռեսուրսների վրա լրացուցիչ

[106] Ավելի մանրամասն տեղեկությունների համար տես՝ այս Զեկուցագրի հատված V (ՀԽՊ-ի դիտարկումները Գնդեվազի Համայնքայի մասին):

կուտակային ազդեցությունից, այլ գոյություն ունեցող, պլանավորված կամ հիմնավորապես սահմանված զարգացումներից…” (պարբ.8): Դիտարկված ազդեցությունները պետք է լինեն այն ազդեցությունները, որոնք ընդհանուր առմամբ ճանաչված են որպես կարևոր “կամ գիտական մտահոգությունների և/կամ ազդակիր համայնքների մտահոգությունների” հիման վրա (ԿՉ1, ՏԾ 16):

ԿՉ1-ի համար Ուղղորդումը պարզաբանում է, որ կումուլատիվ ազդեցությունները կարող են լինել մեկ կամ մի քանի Նախագծերից, ներառյալ “երկրորդական կամ հրահրված սոցիալական ազդեցությունները” (ԿՉ1, ՈՒԾ39): Հատկորոշաբար կումուլատիվ ազդեցությունների առնչությամբ, Ուղղորդման ծանոթությունները պարզաբանում են, որ “այնտեղ, որտեղ նախագիծը ներառնում է հատկորոշաբար ճանաչված ֆիզիկական տարրեր, հանգամանքներ և շինություններ, որոնք հավանական է, որ ազդեցություններ կառաջացնեն, ռիսկերի և ազդեցությունների նույնականացման գործընթացը պետք է ներառնի նաև նախագծին առնչվող բազմապիսի բաղադրիչների միավորված ազդեցությունների գնահատումը (օրինակ, քարհանքերի, ճանապարհների, հարակից շինությունների) նախագծի ազդեցության տարածքի ենթատեքստում" (ԿՉ1, ՈՒԾ38):

Գնդեվազի դեպքում համայնքն է միավորված ազդեցությունների ազդակիրը, որովհետև ԿՏՀ և Աղցորբցիայի, դեսորբցիայի և վերականգնման կայանը (ԱԴՎ), մերձատար հողային ճանապարհները, հարահոսային գոտին և հարակից ջարդող կայանները, հարաբերականորեն մոտ են տեղակայված գյուղին, ինչպես նաև աշխատողների բնակեցման ճամբարը, հիմնական երթևեկության ճանապարհը, և նշանակալի կորուստ կամ փոփոխություն կարող են պատճառել գյուղի գյուղատնտեսական դաշտերի և արոտավայրային հողերի սահմանների առումով: Կարելի է ակնկալել ‘[այս/նման] բազմակի բաղադրիչների միավորված ազդեցությունից բխող ազդեցությունները, քանի որ նախագիծը փոփոխության գործընթացներ է հրահրում տեղական սոցիալական ենթատեքստում:

ՄՖԿ-ի վերահսկումը

ՄՖԿ-ն ճանաչել է սոցիալ-տնտեսական մեկնարկագծային ուսումնասիրություններ նախաձեռնելու կարիքը իր 2009թ. Վերահսկողական այցելությունից հետո և խորհուրդ է տվել, որ այդ աշխատանքն արվի ՄՖԿ-ին համապատասխանող մեկնարկագծի մակարդակով: Սոցիալական մեկնարկագծային աշխատանքը և հողօգտագործողների ու պոտենցիալ ազդեցությունների նույնականացումը կատարվեց ի սկզբանե 2010թ.:

ՄՖԿ-ի 2013 վերահսկողական այցելությունը նշեց ԿՏՀ-ի տեղի փոփոխման որոշման մասին՝ դեպի մի տարածք, որը բարձր տնտեսական արժեք ունի Գնդեվազի համայնքի անդամների համար, մտահոգություններ բարձրացնելով առ այն, որ պոտենցիալ ազդակիր հողի սեփականատերերի հետ խոհրդակցությունը ադեկվատ չի եղել այդ ժամանակ, և անհրաժեշտ է եղել որպես այլընտրանքային վերլուծության մասը: Այս տեղանքային այցելությունից շատ չանցած, Հայաստանի կառավարությունը իրավական գործողությամբ պահանջեց կրկին փոխել ԿՏՀ-ի տեղը: ՄՖԿ-ի փաստաթղթերը համապատասխան վերահսկում են ցուցադրում հաճախորդի Կատարողականության թերությունները հասցեագրելու մեջ՝ կապված համայնքի հետ տեղանքի տեխնիկական կառուցվածքի պոտենցիալ ազդեցությունների մասին

խոհրդակցության պահանջի հետ, ինչպես մինչ այդ դիտարկվել է ՀԱՊԽ-ի կողմից այս փաստաթղթում:

Նախագծի ազդեցության և սպասարկման գոտու այս փոփոխությունից հետո ՄՖԿ-ի վերահսկման փաստաթղթերը չեն արտացոլում ՄՖԿ-ի կողմից որևէ հատկորոշ վերաքննություն կամ ուշադրություն՝ նախագծի տեխնիկական կառուցվածքի փոփոխության պատճառով, փոփոխված բնության և Գնդեվազի վրա ազդեցությունների մակարդակի նկատմամբ: ՄՖԿ-ի վերահսկումը հաճախորդի կողմից Գնդեվազի վրա ազդեցությունների նույնականացման և կառավարման կապակցությամբ կատարվեց ԲՍԱԳ-ի 9րդ տարբերակի (հրապարակվեց 2015թ.) և 10րդ տարբերակի (հրապարակվեց 2016թ.) համապատասխանության վերաքննության միջոցով:

2013թ. կեսից մինչև 2015թ. Կեսը, մինչ նախագծի տեխնիկական կառուցվածքի մեջ ընթացիկ փոփոխություններ էին տեղի ունենում, ՄՖԿ-ի վերահսկողական փաստաթղթերի ուշադրությունը կիզակտեված էր ընկերության կողմից ադեկվատ ԲՍԿՀ-ի մշակման վրա՝ երկրաբանական հետախուզության աշխատանքների ժամանակ ընթացիկ ազդեցությունները հասցեագրելու նպատակով: Միևնույն ժամանակ ՄՖԿ-ն օժանդակում էր հաճախորդին միջազգային փորձառությամբ անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու (ԱԲՍԽ) ներգրավելու գործում՝ ԲՍԱԳ-ի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին վերաքննելու համար:

ՄՖԿ-ն զեկուցեց ՀԱՊԽ-ին, որ իրականացրել է ԲՍԱԳ-ի 9րդ և 10րդ տարբերակների վերաքննությունը, որ Գնդեվազի վրա ազդեցությունները ընդգրկված են այդ վերաքննության մեջ և դիտաչկված են որպես համապատասխան, և որ ի լրումն ԲՍԱԳ-ի մեջ հատկորոշ մեղմացման միջոցառումների, հաճախորդի Համայնքային զարգացման ծրագիրը,[107] ընդհանուր առմամբ, օժանդակում է ազդակիր համայնքներին: ՄՖԿ-ն նաև զեկուցեց, որ տարբեր հանդիպումներ և սեմինարներ են անցկացվել ՄՖԿ-ի և ընկերության միջև՝ ԱԲՍԽ-ի աուդիտների արդյունքները հասցեագրելու նպատակով: Սակայն, ոչ մի հստակ փաստարկ չկա ՄՖԿ-ի վերահսկողական փաստաթղթերում առ այն, որ նախագծի ազդեցությունների բնույթի կամ ուժգնության փոփոխությունը Գնդեվազի համայնքի վրա դիտարկվել է այդ գործընթացներում: Վերահսկումը շարունակվել է ՀԱՊԽ-ի այս վերաքննության տևողության ընթացքում:

[107] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.16, Համայնքային Զարգացման ծրագիր, հունիս 2016թ. https://goo.gl/LYGga6.

ԲՍԱԳ-ի վերլուծությունը

Մեկնարկագծային աշխատանքի և ազդեցության գնահատման տեխնիկական կառուցվածքի որոշման ժամանակ, նախագծի մեծ մասը գտնվում էր միջինից բարձր ալպիական տարածքներում: Մինչև նախագծի տեխնիկական կառուցվածքի փոփոխությունը 2013թ. Գնդեվազի համար սահմանափակ ազդեցություններ էին ակնկալվում: Տեխնիկական կառուցվածքի հիմնական փոփոխությունները տեղի ունեցան 2014–ից 15թթ. ընթացքում, ինչը հանգեցրեց նախագծի գրեթե բոլոր ենթակառուցվածքների ազդեցության ու սպասարկման գոտու փոփոխությանը (բացի հանքափոսերից և թափոնների պոչամբարից) դեպի այն հողերը, որոնք վերաբերում են Գնդեվազին: Արդյունքում, 2014թ. որոշվեց, որ նախագիծը ուղղակիորեն ազդում է Գնդեվազի տնային տնտեսությունների ավելի քան 75 տոկոսի վրա՝ հողի օտարման և մատչելիության արգելման և այլ ազդեցությունների ակնկալումով, շինությունների տեղակայման մոտիկության, աշխատուժի ներհոսքի և այլ պոտենցիալ բնապահպանական ազդեցությունների պատճառով:[108]

Լրացուցիչ գնահատման աշխատանք իրականացվեց Գնդեվազում 2013-ից 2015թթ. նախագծի փաստացի տեխնիկական կառուցվածքի հետ կապված մեկնարկագծային տեղեկույթը արդիականացնելու և ազդեցությունը գնահատելու համար: Գնդեվազի վրա պոտենցիալ ազդեցությունների տեսակետից, դրա մեջ մտան հետևյալ հանգամանքները:

- էկոհամակարգային ծառայությունների շուրջը ֆոկուսային խմբերի քննարկումները, որոնք նույնականացրին էկոհամակարգային ծառայությունների բազմատեսակ օգտագործումները, ի լրումն արոտավայրերի, ինչպես օրինակ կենդանիների և մարդկանց համար սնունդի պաշարումը, մեղվաբուծությունը, և հանգստի նպատակով օգտագործումը, ներառյալ որսը և ձկնորսությունը:[109]
- Տնային տնտեսությունների հարցումները հողի օտարման գործընթացի մասին, որը ներառավ հող վաճառած տնային տնտեսություններին[110]
- Լրացուցիչ հարցումները նախագծի վերափոխված տեխնիկական կառուցվածքից ազդակիր հողօգտագործողների մոտ (սեզոնային, ինչպես նաև օրական հովիվ անասնապահները) [111]
- Ֆոկուսային խմբերի կազմակերպումը յուրաքանչյուր գյուղում՝ Արշակ գյուղի հողերի պոտենցիալ կենսաբանական մեկուսացման շուրջը: [112]

---

[108] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.23, Հողի մատչելիության և Կենսապահովման միջոցների Վերականգնման ծրագիր (ՀՄԿՄՎԾ), փետրվար, 2015թ.

[109] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 6.20.1, Էկոհամակարգի ծառայություններ (https://goo.gl/CdGsF5); և Հավելված 6.20.2, Զեկուցագիր Ֆոկուսային խմբերի քննարկումների մասին (2014թ.) (https://goo.gl/y86zpH)

[110] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 4.17, Բնապահպանական և սոցիալական մեկնարկագիծ, Կենսապահովման միջոցների գործունեության և զբաղվածության Հնարավորությունները, մայիս, 2016թ. https://goo.gl/7iKV1R.

[111] *Ibid. նույն տեղում*

[112] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.20, Կենսաբազմազանության գործողությունների ծրագիր, հունիս, 2016թ. https://goo.gl/sgskMn.

ԲՍԱԳ-ի արդյունքները

ԲՍԱԳ-ի վերջնական փաստաթղթերը հրապարակվեցին առցանց 2016թ. հունիսին, որտեղ ճանաչվում էին մի շարք ազդեցություններ՝ երկուստեք դրական և բացասական, որ մասնավորապես կապ ունեն Գնդեվազի հետ, ինչպես ներկայացված է ստորև աղյուսակի մեջ:[113]

Պոտենցիալ սոցիալական և տնտեսական ազդեցությունները Գնդեվազի վրա	
Դրական ազդեցությունները	**Բացասական ազդեցությունները**
Զբաղվածությունը – մոտավոր հաշվարկով 195 տեղացիներ կստանան աշխատանք, ընդ որում ցկյանս ձեռք բերվող հմտությունների ուսուցմամբ: Նախագծի շինարարության ընթացքում հնարավոր է բացվեն 390 2-ամյա աշխատատեղեր:	Կենսապահովման միջոցների վրա ազդեցությունները. հողի օտարում, անասնապահների տնտեսական տեղահանություն:
Տեղական սպառողական ապրանքների շուկայի և ծառայությունների ընդլայնում – ճամբարի մատակարարում, և արդյունքում տեղացիների գնողունակության բաձրացման	Հողի մատչելիության սահմանափակում, բնապատկերի խանգարում և հողի ֆիզիկական ցանկապատում
Բարելավված առողջապահական ծառայություններ.	Սղաճ՝ ապրանքների և ծառայությունների տեղական գների մեջ և հավելյալ աշխատուժի բնակեցման պատճառով – նույն մակարդակ մինչև մեղմացման միջոցառումները և հետո.
	Գնդեվազի բնակչության ներհոսք.
	Առողջապահական ազդեցություններ բնակչության ներհոսքի պատճառով, ծառայությունների պահանջարկի և տրանսպորտի միջոցների/երթևեկության մեծացում
	Դրական և բացասական ազդեցություններ առողջության սոցիալական որոշիչների վրա
	Եկամուտի անհավասարություն հողի օտարման և սահմանափակ զբաղվածության հետևանքով
	Սոցիալական խնդիրներ; հանցագործություն, սեռական եղանակով տարածվող հիվանդություններ:

[113] Քաղված է Ամուլսար ԲՍԱԳ-ից, Գլուխ 6.22 Ազդեցության գնահատման ամփոփում – https://goo.gl/Cpcwzc

ԲՍԱԳ-ը անհատապես հասցեագրում է ազդեցությունները 23 կառավարման ծրագրերի միջոցով, որոնք ներառնում են ակնկալվող ազդեցություններին արձագանքման մեղմացնող միջոցառումները: Մշակվել է նաև Համայնքային զարգացման ծրագիրը[114] (ՀԶԾ), որը լրացուցիչ ներդրումներ է ակնկալում համայնքային նախագծերի մեջ: Սակայն, ՄՖԿ-ն զեկուցել է ՀԱՊԽ-ին, որ ՀԶԾ-ը չպետք է դիտվի որպես մեղմացնող գործոն Գնդեվազի համայնքի ազդեցությունների համար: ՀԶԾ-ի նպատակն է ընդհանուր օժանդակություն տրամադրել ազդակիր համայնքներին ի լրումն հատկորոշ մեղմացնող միջոցառումների:

Համայնքի առողջությունը և ապահովությունը կապված ԿՏՀ մոտիկության, փոշու, և այլ ռիսկերի հետ

Ինչպես նշվեց վերը, ԲՍԱԳ-ը ճանաչում է ապագա պոտենցիալ առողջապահական ազդեցությունները հատկորոշ վտանգավոր քիմիական նյութերի, ինչպես օրինակ ԿՏՀ-ում ցիանիդի օգտագործումից, սնդիկից (որը ԿՏՀ-ի գործունեության կողմնակի արդյունքն է), և ծանր մետաղների բնապահպանական ներկայությունից: ԲՍԱԳ-ը նաև նկարագրում է ապահովության և անվտանգության ռիսկերը՝ կապված գյուղի հարևանությամբ աշխատանքային ճամբարի ներկայության հետ, ներհոսքի ազդեցությունները ներառյալ «վեկտորածին» հիվանդությունների հնարավորությունից և երթևեկության ուժգնացումից: Հաշվի առնելով, նախագծի գտնվելու վայրը, ռիսկերի մեծ մասը կրելու են Գնդեվազի բնակիչները: Մշակվել են համապատասխան մեղմացման և մշտադիտարկման միջոցառումներ՝ կապված այդ ազդեցությունների հետ, ինչպես արդեն նշվել է այս զեկուցագրի մեջ: Այդուհանդերձ, մնացած անորոշությունները, իմացության/իրազեկության սահմանափակության պատճառով, գումարած տեղեկույթի նկատմամբ անվստահությունը, սնում են ապագայի նկատմամբ մտահոգություններ և վախեր, որ արտահայտել են ՀԱՊԽ-ի կողմից հարցված Գնդեվազի բնակիչները:

Սոցիալ-տնտեսական և մշակութային ազդեցությունները

Սոցիալական գնահատումները ԲՍԱԳ-ում հիմնականում նայում են գյուղական համայնքների և Ջերմուկի սոցիալ-տնտեսական և այլ պայմանների վրա, առանց Գնդեվազին հատուկ ազդեցությունների վրա հատկորոշ ուշադրություն դարձնելու: Գնդեվազը կունենա իր ընդհանուր հողատարածքի մոտ 15 տոկոսի կորուստ, բայց կկորցնի մշակվող այգիների ավելի քան 35 տոկոսը, այլ գյուղատնտեսական հողերի 20 տոկոսը և խոտհարքային հողերի 12 տոկոսը: Այգիները ներկայացնում են Գնդեվազի ամենաարդյունավետ գործունեությունը և այգիների համար պիտանի լրացուցիչ հողերը սահմանափակ են: [115]

---

[114] Թիրախային ոլորտները համայնքային նախագծերի համար ներառնում են գյուղի բնական միջավայրի (արոտավայրերի, անասնապահական ենթակառուցվածքների կառավարումը); տեղական նշանակության շինարարություն, տեղական կոոպերատիվներ, ՓՄՁներ, գյուղատնտեսական և անասնապահական հմտությունների ուսուցում); տնտեսական զարգացում (հիմնականում գյուղատնտեսություն և տուրիզմ); կրթություն և իրազեկություն (առողջ կենսաոճ, աղբահանության կառավարում, դպրոցներում տեխնիկական կրթության օժանդակություն):

[115] *Ibid. նույն տեղում*

ԲՍԱԳ-ի այն հատվածները, որոնք հասցեագրում են Գնդեվազի վրա ազդեցությունները, մյուս գյուղական համայնքներից առանձին, ներառնում են Առողջապահական ազդեցության գնահատումը (ԱԱԳ) և Էկոհամակարգի ծառայությունների վերաքննությունը: Այս ազդեցությունները և ռիսկերը հատկորոշ են այս համայնքի համար, և առանձնացնում են այն մյուս գյուղական համայնքներից, մասնավորապես.

- Գյուղի հողատարածքի նշանակալի հատվածի կորուստը կամ կրճատումը, ներառյալ բարձր տնտեսական արժեք ունեցող ծիրանի այգիները: [116]
- Սննդի անվտանգության և սնուցման հետ կապված պոտենցիալ ազդեցությունները[117]
- Շինարարության աշխատանքային ճամբարների մոտիկությունը և ամուրի տղամարդ բնակչության պոտենցիալ հարաբերումը գյուղի բնակչության հետ, հարակից հանրային ապահովության/կարգուկանոնի և առողջապահական ռիսկերի մեծացման հավանականությամբ, մասնավորապես տեղացի կանանց և աղջիկների հետ կապված [118]
- Գյուղատնտեսական ապրանքների բրենդային արժեքի պոտենցիալ կորուստ կամ ակնկալվող կորուստ՝ ցիանիդային կույտային տարալվացման հարթակի մոտիկության պատճառով:[119]
- Շինարարության տեղանքների մոտիկությունը մերձատար ճանապարհներին, ինչը բարձրացնում է երթևեկության և ապահովություն ռիսկերը:[120]
- Հնարավոր ճնշումները/լարումները բնակչության ներհոսքից: [121]
- Հրահրված աղքատության ռիսկերը՝ սննդի, բնակարանների և հողի գնային սղաճի պատճառով, նրանց համար, ովքեր ուղղակի օգուտներ չեն ստանում նախագծից:[122]
- Սոցիալական լարումները անհավասարության մեծացումից և սոցիալական փոփոխությունը համայնքների ներսում, ներառյալ ավանդական բնակչության հիմքի պոտենցիալ անկումը, սոցիալական միասնականության կորուստը, և համայնքի կամ անհատների բարօրության անկումը:[123]

Ժողովրդագրական փոփոխությունների հետ կապված սոցիալական ազդեցությունների վերլուծությունը ճանաչում է այն լարումները, որ տնտեսական անհավասարության աճի արդյունքնում կրելու են սոցիալական կապիտալը և բարօրությունը, ինչը ճանաչվում է ԲՍԱԳ-ում՝ վարձու աշխատողներ ի տարբերություն ավանդական բնակիչների, համեմատության համատեքստում:[124]

---

[116] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.16, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Կենսապահովման միջոցներ, հունիս, 2016թ.https://goo.gl/eGSNkf.

[117] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.18, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Համայնքային առողջությունը, անվտանգությունը և ապահովությունը, հունիս, 2016թ. https://goo.gl/Vic1Yp.

[118] *Ibid. նույն տեղում*

[119] Չի մտնում ԲՍԱԳ-ի մեջ:

[120] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.18, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Համայնքային առողջությունը, անվտանգությունը և ապահովությունը, հունիս, 2016թ. https://goo.gl/V+ic1Yp.

[121] *Ibid. նույն տեղում*

[122] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.13, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, Տնտեսությունը, հունիս, 2016թ.https://goo.gl/xDXmA0.

[123] Չի մտնում ԲՍԱԳ-ի մեջ:

[124] *Ibid. նույն տեղում*

Հաճախորդն ընդունել է մի սոցիալական քաղաքականություն, որը կոչված է գովածանել լավ սոցիալական կառավարումը, և պարտավորվում է կառավարել սոցիալական ազդեցությունները, և կայուն հարաբերություններ հաստատել շահագրգիռ կողմերի հետ: ԲՍԱԳ-ը ներառնում է կառավարման ծրագրեր ազդեցությունները հասցեագրելու համար ներառյալ ՀԱԱԱԾ: Համայնքային զարգացման ծրագիրը (ՀԶԾ) օգուտներ բերելու համար պետք է համահունչ լինի նախագծի ռիսկերի հետ, բայց "սոցիալական ազդեցությունների մեղմացման դերը չի մտնում համայնքի զարգացման գործունեության մեջ"[125] Երկուստեք ծրագրերն ընդգրկում և նշանակալի պարտավորություններ են դնում առաջարկվող գործողությունների իրականացման վրա: Ներառյալ ՀԱԱԱԾ-ի համար ծրագրերի իրականացման նպատկով նշանակալի աշխատանքային կադրերի վարձակալման պահանջը: ՀԶԾ-ը ճանաչում է մի շարք ծրագրեր, կապված Գնդեվազի վրա նախագծի ազդեցության հետ, բայց միայն ընդհանուր շրջանակի մակարդակում, այսինքն առանց իրականացման ծրագրի, բյուջեների, կամ ծրագրային մանրամասների, և թիրախված չի Գնդեվազի վրա ազդեցությունները մեղմացնելու նպատակին:[126]

Այս համայնքին սպառնացող ազդեցությունների նկատմամաբ ամբողջական մոտեցման բացակայության պայմանում, ռիսկերը և ազդեցությունները հասցեագրվել են ԲՍԱԳ-ում յուրաքանչյուր հստակ ազդեցության մակարդակում, 23 հստակ կառավարման ծրագրերով, որոնք կոչված են անհատապես հասցեագրելու մեղմացման միջոցառումները:

Կումուլատիվ ազդեցությունները

ԲՍԱԳ-ը ներառնում է մի Գլուխ կումուլատիվ ազդեցության գնահատման մասին (ԿԱԳ): ԿԱԳ-ը հասցեագրում է նախագծի և այլ գործողությունների ազդեցությունները "Արժեքավոր էկոհամակարգի բաղադրիչների" (ԱԷԲ) վրա, որոնք ճանաչվել են հաճախորդի և ԲՍԱԳ-ը պատրաստողների կողմից: ԱԷԲ-ները դրանք Բնապահպանական և սոցիալական ատրիբուտներ են, որոնք դիտարկվում են որպես կարևոր՝ ազդակիր բնակչության, ինչպես նաև փորձագետների համար:[127] Մի շարք ԱԷԲ-ներ, որոնք ճանաչվել են ԿԱԳ համար, կապված են Գնդեվազի վրա ազդեցությունների հետ, ներառյալ բարձրորակ արոտավայրերը, բնական բնակության միջավայրերը, խոտի պաշարումը և անասունների ամենօրյա արածումը: Կումուլատիվ ազդեցությունները Գնդեվազ համայնքի վրա, որպես "ազդակիր" համայնքի, չեն գնահատվել: Մեկ բացառություն է ներկայացնում Գնդեվազի բնակիչների վրա կումուլատիվ ազդեցությունների գնահատումը՝ մի շարք էկոհամակարգային ծառայությունների կումուլատիվ կորոուստների տեսակետից, որոնք միասին վերցված հատկորոշ լրացուցիչ ռիսկ են ներկայացնում կենսապահովման միջոցների և սննդի անվտանգության համար: ԿԱԳ-ում ասվում է, որ "… սեզոնային անասնապահ հովիվները, տեղական անասնապահ հովիվները և անասուն չպահող գյուղացիները բոլորը կախված են բազմաթիվ էկոհամակարգային ծառայություններից, որոնցից ոչ բոլորն են ճանաչվել որպես առաջնահերթ ծառայություններ, երբ դիտարկվել են առանձին: Կումուլատիվ ազդեցությունների ռիսկերը, մասնավորապես,

[125] Ամուլսար ԲՍԱԳ, Հավելված 8.16, Համայնքային Զարգացման ծրագիր, հունիս, 2016թ. https://goo.gl/LYGga6.
[126] *Ibid. նույն տեղում*
[127] ՄՖԿ, *Կումուլատիվ ազդեցության գնահատման և կառավարման լավ մոտեցումների ձեռնարկ, օգոստոս, 2013թ.* *https://goo.gl/yS15MS.*

բարձր են այդ խմբերի համար:”[128] Հատուկ միջոցներ են առաջարկվել կումուլատիվ կորստի փաստացի մակարդակի շուրջ խորհրդակցության և հետագա մշտադիտարկման համար: էկոհամակարգային ծառայությունների համար տրված հանձնարարականները ինտեգրվել են Կենսաբազմազանության կառավարման ծրագրի մեջ, ինչպես և առաջարկվել էր ԱԲՍԽ-ի համեմատական վերլուծության մեջ:[129]

Խոհրդակցություն չի եղել անմիջականորեն ազդակիր համայնքների հետ, ներառյալ Գնդեվազը, առ այն՝ արդյոք դիտարկված ԱԷԲ-ները նրանք են, որոնց առաջնահերթություն կտային հենց իսկ ազդակիր համայնքները/մարդիկ: Պետք է նշել, որ ոչ մի սոցիալական կամ տնտեսական ԱԷԲ չի ճանաչվել Գնդեվազի համար, մինչդեռ Ջերմուկի տուրիստական տնտեսությունը ճանաչվել է, որպես ԱԷԲ:

ԿԱԳ-ի գործընթացը գնահատում է կանխատեսված կումուլատիվ ազդեցությունները յուրաքանչյուր ճանաչված ԱԷԲ-ի համար և նկարագրում է առաջարկված գործողությունները ելնելով Ամուլսար նախագծի հետ կապված ազդեցություններից: Արձագանքները, առանձին կումուլատիվ ազդեցությունների նկատմամբ, որ ճանաչվել են ԿԱԳ-ում, համապատասխան և համատեղելի են Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպի հետ:

Ինչը չի քննարկվել ԿԱԳ-ում կամ այլուր ԲՍԱԳ-ի մեջ, այդուհանդերձ, նախագծի բազմակի ազդեցություններ ունենալու պոտենցիալն է, որոնք ազդում են Գնդեվազի համայնքի ընդհանուր կայունության/դիմադրողականության վրա սոցիալական միասնականության, սոցիալական կապիտալի, կամ հատկորոշ խմբերի խոցելիության տեսակետից: Այս հարցերը և բարօրության հարակից սոցիալական տարածաչափերը չեն ճանաչվել որպես ԱԷԲ-ներ: ՄՖԿ-ի ձեռնարկը ԿԱԳ-ի մասին, ԱԷԲ-ների շուրջ խոհրդակցությունը դնում է ԿԱԳ-ի գործընթացի կենտրոնում:[130] Եվ քանզի խոհրդակցություն չի եղել ԱԷԲ-ների շուրջը, ՄՖԿ-ն և հաճախորդը չեն կարող երաշխիքներ ունենալ առ այն, որ ԱԷԲ-ների նույնականացումը եղել է համապատասխան կամ ամբողջական:

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

ՀԱՊԽ-ը թերություններ է գտնում ԲՍԱԳ-ի գործընթացը վերահսկելու ՄՖԿ-ի մոտեցման մեջ՝ Գնդեվազի բնակչության ռիսկերի և մտահոգությունների և ընդհանրապես հանքի զարգացման պոտենցիալ միավորված ազդեցությունների առումով՝ համայնքի լավ առողջության և դիմադրողականության նկատմամբ:

ԲՍԱԳ-ը և կառավարման ծրագրերը առանձին վերցված դիտարկել կամ հասցեագրել են այս ազդեցություններից շատերը, և ԱԱԳ-ը, էկոհամակարգային ծառայությունների վերաքննությունը, և ՀՄԿՄՎԾ-ը, այլոց թվում, ճանաչվել են, որպես բարձր միջազգային ստանդարտներին համապատասխանող: Ի լրումն, ՀԱՊԽ-ը ճանաչում է համայնքի համար պոտենցիալ դրական ազդեցությունները:

[128] Ամուլսար ԲՍԱԳ, Գլուխ 6.20, Պոտենցիալ ազդեցությունները և մեղմացման միջոցները, էկոհամակարգի ծառայությունների վերաքննում, հունիս, 2016թ. https://goo.gl/ldWC14.

[129] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, մայիս 2016թ. https://goo.gl/hQ51t5.

[130] ՄՖԿ, *Կումուլատիվ ազդեցության գնահատման և կառավարման լավ մոտեցումների ձեռնարկ*, օգոստոս 2013թ. https://goo.gl/yS15MS.

Այդուհանդերձ, ՀԱՊԽ-ը գտնում է, որ նախագծի տեխնիկական կառուցվածքի փոփոխությունը 2013թ.-ից հետո հանգեցրել է Գնդեվազի բնակիչների վրա պոտենցիալ ազդեցությունների նշանակալի աճին: Այս փոփոխությունները պահանջում են քաղաքի և նրա բնակիչների վրա նախագծի տարբեր բաղադրիչների միավորված կամ կումուլատիվ ռիսկերը և ազդեցությունների գնահատումը — դրա հետ կապակցված խոհրդակցությամբ, մեղմացման և մշտադիտարկման միջոցառումներով, ի լրումն նրանց, որոնք կան ընթացիկ ԲՍԱԳ-ում:

ՀԱՊԽ-ը, ուստի, գտնում է, որ ՄՖԿ-ին պակասում են երաշխիքները առ այն, որ նախագծի ազդեցությունները Գնդեվազի համայնքի վրա ենթարկվել են ինտեգրված գնահատման, որը դիտարկել է "բոլոր կապակցված Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները", ինչպես պահանջվում է ԿՉ1-ով (պարբ. 7): Սա մեղմացման ծրագրերի զարգացման նախապայմանն է, ինչպես պահանջվում է ԿՉ1-ով (պարբ. 15):

ՀԱՊԽ-ը նաև թերություններ է գտնում ՄՖԿ-ի ուղղորդման մեջ՝ կապված Կատարողականության չափորոշիչների հետ, այն առումով, որ այնտեղ մանրամասն չի խոսվում այն մասին, թե ինչպես պետք է երաշխավորել, որ մի ամբողջական և ինտեգրված գնահատում նախաձեռնվի նախագծի միավորված կամ կումուլատիվ սոցիալական ազդեցությունների նկատմամբ:

4. Խորհրդակցության և մասնակցության գործընթացները, Մտահոգ շահագրգիռ կողմերի համար հանրային լսումների մատչելիությունը և Բողոքների գրանցման և հասցեագրման մակարդակը

Բողոքատուների բարձրացրած հարցերը

Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքը պնդում է, որ ընկերությունը չի իրականացրել ադեկվատ հանրային խոհրդակցություններ, որ բողոքատուներին վախեցրել են, և որ ՄՖԿ-ն շարունակաբար չի արձագանքել նրանց մտահոգություններին: Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքը պնդում է, որ բողոքատուների մտահոգությունները չեն գրանցվել, հատկորոշաբար Գնդեվազի հանրային լսումներում, և որ ընկերության տված տեղեկույթը մոլորեցնող է:

Բողոքները տեղեկույթի հրապարակման և հողի օտարման և տեղանքի ընտրության գործընթացների հետ կապված հանրային խոհրդակցությունների մասին (երկուստեք կապված ԿՉ5-ի հետ) առանձին հասցեագրվում են զեկուցագրի VII.B.1. հատվածում: Այս հատվածը կենտրոնանում է խոհրդակցության համապատասխանության և այն հարցի վրա, արդյոք բողոքատուներն ի վիճակի են եղել մասնակցել, և արդյոք նրանց մտահոգությունները համապատասխանորեն գրանցվել և հասցեագրվել են խոհրդակցությունների և ԲՍԱԳ-ի գործընթացում, ներառյալ անհամաձայնությունների լուծման ընկերության գործընթացը:

Համապատասխան պահանջները

2006թ. Կայունության շրջանակը ՄՖԿ-ի նկատմամբ կիրառում է 2007թ. նախաներդրումային վերաքննություն և վաղ վերահսկում: Սակայն, ՄՖԿ-ի վերահսկումը խորհրդակցության և մասնակցության գործընթացների վրա սկսած 2012թ. մինչև ԲՍԱԳ-ի հրապարակումը գնահատվում է 2012թ. Կայունության շրջանակով:

Նախաներդրումային, 2006թ., Կայունության քաղաքականությունը պահանջում է ՄՖԿ-ից վերաքննություն իրականացնել հաճախորդի Բ&Ս գնահատման նկատմամբ, որպեսզի նույնականացնի առաջարկվող ներդրումի ռիսկերը և պոտենցիալ ազդեցությունները: Արդյունավետ մասնակցությունը կենտրոնական նշանակություն ունի Կայունության քաղաքականության նպատակների համար, որոնք պահանջում են ՄՖԿ-ից երաշխավորել, որ ազատ, նախնական և իրազեկ խոհրդակցություն լինի ազդակիր համայնքների հետ, երկուստեք հաճախորդի փաստաթղթերի վերաքննության, ինչպես նաև իր սեփական գնահատման միջոցով: Երբ ակնակլվում է, որ նախագիծը ունենալու է նշանակալի ազդեցություններ, ՄՖԿ-ից պահանջվում է բացահայտել, արդյոք հաճախորդի համայնքային մասնակցության կառավարումը հնարավորություն է տալիս ազդակիր համայնքների իրազեկ մասնակցության համար, ինչը կտանի դեպի Լայն հանրային օժանդակություն (ԼՀՕ) (պարբ. 20):

Կապված ՄՖԿ-ի կողից վաղ վերահսկման հետ (2006թ.), ԿՉ1-ը պահանջում է հաճախորդից ապահովել շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցությունը նախագծի ամբողջ կյանքի ընթացքում, և ավելի ընդհանուր իրազեկել ու խորհրդակցել ազդակիր համայնքների և շահագրգիռ կողմերի հետ: Խոհրդակցությունները պետք է ներառնեն տեղեկույթ երկուստեք ռիսկերի և հնարավորությունների մասին, և պետք է “ապահովեն ժամանակին, տեղին, հասկանալի և մատչելի տեղեկույթը” (ԿՉ1, պարբ.19):

Կապված ԲՍԱԳ-ի գործընթացի հետ, 2012թ. Կատարողականության չափորոշիչները պահանջում են, որ հաճախորդն իրականացնի արդյունավետ խոհրդակցություն, որը պետք է սկսվի վաղ ԲՍԱԳ-ի գործընթացում և շարունակվի ընթացիկ հիմքի վրա; պետք է ազատ լինի արտաքին մոլորեցման փորձերից, միջամտությունից, ստիպումից կամ սպառնալիքներից; հնարավորություն տա իմաստալից մասնակցության համար; և փաստաթղթագրված լինի (ԿՉ1, պարբ. 30): ԿՉ1-ը այնուհետև պահանջում է, որ ազդակիր համայնքների վրա պոտենցիալ նշանակալի անցանկալի ազդեցություններով նախագծի համար հաճախորդը իրականացնի Իրազեկ խոհրդակցության և մասնակցության (ԻԽՄ) գործընթաց: ԻԽՄ-ն ներառնում է կարծիքների և տեղեկույթի ավելի խոր փոխանակում և կազմակերպված և կրկնվող խոհրդակցության գործընթաց, ինչը կհանգեցնի այն բանին, որ հաճախորդն իր որոշումները կայացնելու գործընթացում կներառնի ազդակիր համայնքների կարծիքները այն բաների մասին, որոնք անմիջականորեն ազդում են նրանց վրա, ինչպես օրինակ մեղմացնող միջոցառումները (պարբ. 31):

ԿՉ1-ը պահանջում է, որ հաճախորդը հաստատի անհամաձայնությունների լուծման մի մեխանիզմ՝ ազդակիր համայնքների մտահոգությունների կապակցությամբ նախագծի Բ&Ս կատարողականության հետ կապված բողոքները ստանալու և դրանք լուծելու համար: Անհամաձայնությունների լուծման մեխանիզմը պետք է համաչափորեն ծավալվի նախագծի ռիսկերի և անցանկալի ազդեցությունների հետ և կիրառի հասկանալի, թափանցիկ և մշակութային առումով համապատասխան խորհրդակցական գործընթաց (պարբ. 35):

ՄՖԿ-ի Բ&Ս նախաներդրումային վերաքննությունը

Մինչև ներդրում անելը ՄՖԿ-ն դիտարկել է, որ հաճախորդը ուժեղ պատրաստակամություն ունի խոհրդակցություն և համայնքի մասնակցությունը ապահովելու համար: Պետք է նշել, որ

նախագիծը ներկայացվել է ՄՖԿ-ի Խորհրդին որպես Լայն հանրային օժանդակություն (ԼՀՕ) վայելող նախագիծ, թեև ոչ մի սոցիալական վերլուծություն չի արվել այդ փուլում: Այս պնդումը եզրակացվել է ներդրումային անձնակազմի դիտարկումից, որը այցելել էր նախագծի Ամուլսար տեղանքը ՄՖԿ-ի արժեքային գնահատման ժամանակ:

ՄՖԿ-ի 2007թ. ԲՍՎԱ-ում ներառված է հաճախորդի Հանրային խոհրդակցության և հրապարակման ռազմավարությունը (ՀԽՀՌ), որը կորպորատիվ պարտավորություններ էր ձևակերպում ԿՉ1-ի պահանջներին համապատասխանող խոհրդակցության և հրապարակումների համար: ՄՖԿ-ն նշում է, որ հաճախորդը ուներ Հանրային խորհրդակցության և հրապարակման ծրագիր (ՀԽՀԾ) իր ամենաառաջադեմ նախագծերի համար, ներառյալ Ամուլսարը, սակայն, այն չէր հրապարակվել: ԲՍՎԱ-ում ասվում է, որ հաճախորդը պատրաստակամ էր իրականացնել համայնքի մասնակցության և խոհրդակցության գործունեությունը Կատարողականության չափորոշիչների պահանջների հետ համապատասխանությամբ:[131] Միևնույն ժամանակ, ՄՖԿ-ն նշում էր, որ հաճախորդը սահմանափակ ներքին Բ&Ս ռեսուրսներ ուներ և ակտիվորեն ակնկալում էր ՄՖԿ-ի ուղղորդումը՝ Բ&Ս հարցերը հասցեագրելու և կառավարման կարողություն ձեռք բերելու համար:

Այն ԲՍԳԾ-ն, որն այդ կետում համաձայնեցվել էր ՄՖԿ-ի և հաճախորդի միջև ներառնում էր պահանջ հաճախորդից՝ հանրային խոհրդակցության և համայնքի զարգացման մասին տարեկան առաջընթացի զեկուցագիր ներակայցնելու վերաբերյալ: Սակայն, ավելի հատկորոշ գործողություններ՝ ՀԽՀԾ-ի մեջ իրականացնելու վերաբերյալ, չէին ներառվել[132]

Ընդհանուր մասնակցության գործընթացների վերահսկումը ՄՖԿ-ի կողմից

ՄՖԿ-ի կողմից հաճախորդի վերաքննությունը համայնքների մասնակցության կապակցությամբ ակնհայտ է վերահսկողական փաստաթղթերից, սկսած 2008թ.-ից: 2009թ. ՄՖԿ-ի վերահսկողական այցելությունը ներառնում էր համայնքի մասնակցության ավելի խորը վերաքննությունը: Այդ ժամանակ չորս համայնքներ դիտարկվեցին որպես նախագծից անմիջականորեն ազդակիր՝ Սարավանը, Գորայքը, Գնդեվազը և Կեչուտը: ՄՖԿ-ի 2009թ. վերահսկողական փաստաթղթերում նշվում էր համայնքների մասնակցության առումով հաճախորդի մոտեցման թերությունների մասին: Մասնավորապես, այնտեղ հատկորոշաբար նշվում էր, որ կարիք կա կատարելու հետևյալ գործողությունները.

- Ընդլայնել և ֆորմալացնել համայնքային մասնակցության գործընթացը
- Ընդարձակել խոհրդակցությունը գյուղապետերից անդին
- Ընդարձակել խոհրդակցությունը՝ ընդգրկելով այլ համայնքներ, մինչ ՄՖԿ-ն ճանաչում էր Ջերմուկը, ինչպես նաև ավելի ցածր ընկած համայնքները, որպես պոտենցիալ ազդակիր
- Երաշխիքներ ստանալ, որ հաճախորդի անհամաձայնությունների լուծման մեխանզիմը հրապարակվի և մատչելի լինի բոլոր չորս ազդակիր գյուղերի և աշխատողների համար
- Վարձել Համայնքի հետ կապի պատասխանատու (ՀԿՊ), ինչպես պայմանավորված էր:

[131] ՄՖԿ Ներդրումը Լիդիան Ռեսորսիզ Քոմփանի Լթդ. ընկերության մեջ, *Բնապահպանական և սոցիալական վերաքննության ամփոփում*, մայիս, 2007թ. http://goo.gl/3qx7hs.
[132] *Ibid. նույն տեղում*

Նշելով, որ հաճախորդը պետք է մշակի ավելի ֆորմալացված ԲՍԿՀ, ՄՖԿ-ն նաև դիտարկել էր, որ հաճախորդը չէր կիրառում իր ՀԽՀԾ-ն: ՀԱՊԽ-ը նշում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը հատկորոշաբար չի դիտարկել հաճախորդի Կատարողականությունը ՀԽՀԾ-ի պատրաստած պահանջների համեմատ, որոնք ենթադրվում էր, որ պետք է ուղղորդեին հաճախորդի մոտեցումը խոհրդակցության և հրապարակման պահանջներին: ՄՖԿ-ի վերահսկման տարանջատումը ՀԽՀԾ-ից թույլ տվեց որպեսզի ՄՖԿ-ի կողմից հաճախորդի Կատարողականության գնահատումը մնա ոչ ֆորմալ և *ad hoc/ըստ պահանջի*, ավելի շուտ քան երաշխավորող, որ կառուցվածքային, նորմալացված և պլանավորված խոհրդակցությունները և հրապարակումները տեղի ունենան:

ՄՖԿ-ն նախ վերաքննել է հաճախորդի անհամաձայնությունների լուծման մեխանիզմը Ամուլսարի համար 2009թ. և ուղղորդում է տվել դրա գործառնականության, մատչելիության և ծավալների մեծացման մասին:

ՄՖԿ-ի հետագա փաստաթղթերը, 2010թ. վերահսկողական այցելությունից հետո առաջընթաց նշեցին համայնքային մասնակցության մեջ, կապված ՀԿՊ վարձելու, գյուղերում Համայնքների հետ կապի առաջին հանձնաժողովները (ՀԿՀ) ստեղծելու,[133] համայնքներում անհամաձայնությունների լուծման մեխանիզմի բարելավման, և ամսական տեղեկաթերթի թողարկման հետ: Սակայն, ՄՖԿ-ն շարունակում էր խորհուրդ տալ ավելի կառուցվածքային մոտեցում ցուցաբերել խոհրդակցության և հրապարակման գործընթացին, կապված ԲՍԱԳ-ի գործընթացի հետ և ընդհանրապես: Արդյունքում, ՄՖԿ-ն և հաճախորդը համաձայնության եկան, որ հաճախորդը պետք է Բ&Ս մասնագետ վարձի, որը ծանոթ կլինի ՄՖԿ-ի պահանջների հետ Բ&Ս հարցերի զարգացման իր մոտեցմանը օժանդակելու համար, ներառյալ համայնքի մասնակցության հարցը:

Այս վերահսկողական այցելությունից հետո ՄՖԿ-ն նշել է, որ ՀԽՀԾ-ն չի արդիականացվել և պահանջել է, որ հաճախորդը փոխարինի ՀԽՀԾ-ն Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրով և Համայնքային ներդրումների ծրագրով: Արդիականացված ԲՍԳԾ-ում նշվում է ընթացիկ ֆորմալ ընթացակարգերի բացակայության կամ անանուն բողոքներ ներկայացնելու կարողության մասին, որպես անհամաձայնությունների լուծման մեխանիզմի թերության:

2010թ. ԲՍԱԳ-ի արտաքին խորհրդատուի իրականացրած ծավալային ուսումնասիրության մեջ, 12-ը 28 գործողություններից (40 տոկոսը), որոնք նույնականացված էին սոցիալ-տնտեսական վերնագրի տակ, հասցեագրված էին շահագրգիռ կողմերի հետ խոհրդակցության թերություններին:

Հաճախորդի անհամաձայնությունների լուծման մեխանիզմի գործառնականության քննարկումը դիտարկվում է ՄՖԿ-ի կողմից 2011 և 2012թթ. ՄՖԿ-ին հաճախորդի ներկայացրած զեկուցագրերի վերաքննության մեջ, ինչպես և խոհրդակցության հանդիպումների ժամանակ նույնականացված մտահոգությունները: Համայնքային մտահոգությունների մասին ծանոթագրությունները սկզբում ընդգրկված էին հաճախորդի 2011թ. զեկուցագրի մեջ և ներառնում էին ցիանիդի օգտագործումը, փոշին, աղմուկը, ճառագայթումը, տեսանելիությունը, և ջուրը: ՄՖԿ-ի փաստաթղթերում նաև առաջին անգամ զեկուցվում է

[133] ՄՖԿ'ի փաստաթղթերում նշվում է, որ այն ՀԿՀ-ները, որոնք ներառնում են համայնքային ներկայացուցիչներին և Լիդիանի Համայնքային կապի պատասխանատուին, հանդիպում են ամեն ամիս Նախագծի համար նոր տեղեկություններ տալու և համայնքներից եկած ցանկացած մտահոգություն քննարկելու համար:

նման մտահոգությունների մասին 2011թ.: ՀԿՀ-ների մասին զեկուցվում է որպես լրացուցիչ գործող մեխանիզների, որոնք կոչված են փոխանցելու համայնքի անհամաձայնությունները հաճախորդին, որպեսզի վերջինս դրանք լուծի:

ՄՖԿ-ի 2011թ. վերահսկողական այցելությունից հետո, երկու պարագաներ կապված մասնակցային մշտադիտարկման ծրագրերի զարգացման հետ ավելացվեցին ԲՍԳԾ-ին, ներառյալ գործընթացի մեջ ներկայացուցիչների ընդգրկումը Ջերմուկից: ՄՖԿ-ի փաստաթղթերում ավելի ուշ նշվեց, որ հաճախորդը տեղեկատվական կենտրոն է բացել Գնդեվազում 2013թ., տեղական կապի օգնականներ են վարձվել, և հաճախորդը Հայաստանում մշակել է մի վերկայք, ինչպես նաև մի ամսական տեղեկաթերթ:

Ոչ մի բողոք չէր գրանցվել հաճախորդի կողմից 2010–12թթ., բայց հաճախորդը զեկուցեց անհամաձայնության երկու դեպքերի մասին 2013թ., որոնք ստացվել էին առկա անհամաձայնությունների լուծման մեխանիզմով (առաջարկությունների արկղներով): Սրանք զեկուցվեցին որպես լուծված: Այս փաստաթղթերի, կամ հաճախորդի զեկուցագրերի ոչ մի հավաստում ՄՖԿ-ին չի նույնականացնում անհամաձայնությունների բնույթը: ՄՖԿ-ի փաստաթղթերը չեն ներառնում որևէ վերաքննություն անհամաձայնությունների լուծման մեխանիզմի արդյունավետության մասին, որպես այդպիսին:

2014թ ՀԱՊԽ բողոքների ներկայացումից հետո և ընթացիկ բացասական մամուլի ֆոնի վրա, ՄՖԿ-ի վերահսկողական փաստաթղթերում թեև ասվում էր, որ ընկերությունը առաջընթաց ունի շահագրգիռ կողմերի մասնակցության առումով՝ ուշադրության կիզակետի ուժգնացման և լրացուցիչ ռեսուրսների հատկացման շնորհիվ, դիտարկվեց, որ համայնքային օժանդակությունը կարող է շատ թույլ լինել: Սակայն, սա չուղղորդեց ՄՖԿ-ին պահանջել լրացուցիչ հաղորդակցում, համայնքի ավելի մեծ շրջանների կարծիքների վավերացում, կամ տարբեր մասնակցային գործընթացների զարգացում՝ շահագրգիռ կողմերի վերլուծությանը նոր տեղեկատվություն հրամցնելու համար:

ՀԱՊԽ նշում է, որ ՀԿ-ների հետ հանդիպումների մասին հաճախորդի զեկույցները սկսվեցին Լիդիան ընկերություն, թիվ -01 բողոքատուների ներկայացուցիչների հետ մի հանդիպումից (Էկոլուր) 2010թ.: Սակայն, քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նախագծի տարածքից դուրս, չէր ներառվել Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի մեջ մինչև Լայն շահագրգիռ կողմերի մասնակցության գործողությունների ծրագրի մշակումը 2014թ.:[134]

ԲՍԱԳ-ի վերլուծությունը և արդյունքները

Ընդհանուր մասնակցության գործընթացին զուգահեռ, երկու լրացուցիչ ֆորմալ խոհրդակցական գործընթացներ իրականացվեցին: Միջազգային ԲՍԱԳ-ի խոհրդակցության ծրագրի արդյունքում եղան տասը հանդիպումներ 2011-ից և 2016թթ. Ընթացքում:[135] Մինչ այդ, 12 ազգային մակարդակի ԲԱԳ հանրային լսումներ եղան, որ կազմակերպվել էին 2009թ. նախագծի զարգացման տարբեր փուլերում, ինչպես պահանջվում է ազգային կանոնակարգող

[134] Նայթ Պյեսոլդ, *Ամուլսար նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման անկախ վերաքննություն տ.10*, էջեր 5–45, մայիս 2016թ, https://goo.gl/hQ51t5.

[135] Վերջնական ԲՍԱԳ-ի վերաքննության համար պլանավորված էին երեք լրացուցիչ լսումներ, որոնք տեղի ունեցան ՀԽՊ տեղանք կատարած այցելությունից և ԲՍԱԳ-ի փաստաթղթերի վերջնական պատրաստումից հետո:

գործընթացով նախագծի զարգացման համար թույլատվությունների ստացման բանակցությունների ժամանակ: Ինչպես նշվում է ՄՖԿ-ի վերահսկման փաստաթղթերում, վաղ հանրային լսումները ամենայն հավանականությամբ տուժել են նախագծի թիմի խոհրդակցության փորձի պակասից, և փորձագիտական հմտության բացակայությունից, ինչը հետո հավասարակշռվեց երկուստեք և անձնակազմով և արտաքին խորհրդատուներով:

ԲՍԱԳ-ի խոհրդակցությունների նպատակը, ի լրումն պոտենցիալ ռիսկերի և ազդեցությունների մասին ազդակիր բնակչության իրազեկման, նաև նպատակ ուներ նույնականացնել մտահոգությունները և ինտեգրել դրանք ԲՍԱԳ-ի մեջ, այնպես որ դրանք համապատասխանաբար գնահատվեն: Ինչպես ճանաչվել է այս զեկուցագրի բնապահպանական բողոքների գնահատման VII.A.1. հատվածում, ԲՍԱԳ-ի գործընթացը ընտրում, գնահատում և բացահայտումներ է անում կապված բողոքներում նույնականացված առանցքային բնապահպանական մտահոգությունների հետ: Որտեղ պահանջվում է, այնտեղ ԲՍԱԳ-ը մշակել է համապատասխան մեղմացման միջոցառումներ:

ՀԱՊԽ-ը նշում է, սակայն, որ կումուլատիվ ազդեցության գնահատումը իրականացվել է որպես գրասեղանային ուսումնասիրություն, և չի ուղեկցվել որևէ շահագրգիռ կողմի մասնակցությամբ և խոհրդակցությամբ, որպեսզի երաշխավորվի, որ գործընթացը ընդգրկել է արժեքավոր էկոհամակարգի առաջնահերթ բաղադրիչները, ինչպես դրանք նույնականացվել են ազդակիր համայնքների կողմից: Այս հարցը քննարկվում է Գնդեվազին վերաբերող նախորդ հատվածում:

ՀԱՊԽ-ը նշում է, որ ցուցումներ կան առ այն, որ քննադատների կողմից բարձրացված մտահոգությունները ճանաչվել են ընկերության կողմից ԲՍԱԳ-ի խոհրդակցության գործընթացում, բացառությամբ այն հատկորոշ հարցերի, որոնք ճանաչվել են ավելի վաղ այս զեկուցագրում: Հանդիպումների ժամանակ բարձրացված հարցերի հատկորոշ արձագանքները կարելի է գտնել համայնքի տեղեկաթերթերում և Գնդեվազի Տեղեկատվության կենտրոնում առկա տպագիր նյութերում, որոնք հետագա հաստատում են տալիս առ այն, որ ընկերությունը շատ դեպքերում գրանցել և արձագանքել է բարձրացված հարցերին և մտահոգություններին: Հետագայում, ՀԱՊԽ-ի հետաքննության թիմի կողմից բողոքատուների հետ կազմակերպված հանդիպումների ժամանակ, բողոքատուները նշել են հանրային ժողովներին մասնակցության և տարբեր հարցերի մասին. որ իրենք բարձրացրել էին այդ հանդիպումների ժամանակ:

ՀԱՊԽ-ի կողմից ՄՖԿ-ի կատարողականության գնահատումը

ՄՖԿ-ի *Բ&Մ նախաներդրումային վերաքննությունը*

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն չի մտցրել ԲՍԳԾ-ի մեջ բավարար պահանջներ (վերջնաժամկետներ, համապատասխան փորձագիտության կարիք, փաստաթղթեր, և զեկուցագրեր), որպեսզի երաշխավորի ՀԽՀԾ-ի իրականցման համատեղելիությունը ԿՉ1-ի պահանջների հետ: ՀԱՊԽ-ը նաև նշում է, որ ՄՖԿ-ի պնդումը, որ նախագիծն ունեցել է Լայն հանրային օժանդակություն չի հիմնավորվել սոցիալական վերլուծությամբ կամ փորձագիտական կարծիքով:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից խոհրդակցության հետ կապված նախաներդրումային վերաքննության հարցերի գնահատումը համարժեք չի եղել ռիսկին, այդպիսով չհամապատասխանելով 2006թ. Կայունության քաղաքականության պահանջներին:

ՄՖԿ-ի կողմից հաճախորդի ընդհանուր խորհրդակցության և մասնակցության գործընթացի վերահսկումը

ՄՖԿ-ի նախաներդրումային վերաքննության մեջ եղած թերությունները ավելի ուշ վերածվեցին խոհրդակցության նկատմամբ հաճախորդի մոտեցման մեջ ճանաչված թերությունների, ներառյալ ՀԽՀԾ-ի չկատարման փաստը ՄՖԿ-ի կողմից նախագծի վաղ վերահսկման ժամանակ:

Սակայն, ՄՖԿ-ն ճանաչեց հաճախորդի Կատարողականության թերությունները իր վերահսկման ընթացքում և աշխատեց հաճախորդի հետ նրան համապատասխանության բերելու համար: Այս ենթատեքստում, ՀԱՊԽ նշում է, հաճախորդի խոհրդակցական գործունեությունը ընդլայնելու կարիքը շեշտադրելու մեջ ՄՖԿ-ի դերի մասին: ՀԱՊԽ-ը նաև նշում է, ՄՖԿ-ի դերը շրջանառվող տեղեկատվության որակի մասին հարցեր բարձրացնելու մեջ և արտաքին օժանդակությունը օգտագործելու միջոցով կարողությունների բարելավումը պարտադրելու մեջ:

ՀԱՊԽ-ը այսպիսով գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխանել է հաճախորդի համայնքային մասնակցության և խոհրդակցության գործունեության առնչությամբ իր վերահսկման պահանջներին:

Հաճախորդի անհամաձայնությունների լուծման մեխանիզմի վերահսկումը ՄՖԿ-ի կողմից

Թեև ՀԱՊԽ-ը նշում է, որ ՄՖԿ-ն պետք է ավելի պրոակտիվ լիներ, որպեսզի դրանով երաշխավորեր բոլոր հեռանկարների ներգրավումը և արձագանքը բոլոր հեռանկարներին, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը ցուցադրեց ՄՖԿ-ի բացթողումը ընկերության անհամաձայնությունների լուծման մեխանիզմի համապատասխանության նկատմամբ, այն ժամանակ երբ ՀԿՀ-ներ ստեղծվեցին և ՀԿՊ վարձվեց: ՄՖԿ-ն խորհրդատվություն տվեց հաճախորդին կապված ՀԿՊ-ի գործառույթի հետ և երաշխավորեց, որ ՀԿՀ-ները արդյունավետ մեխանիզմ լինեն, որպեսզի մշակութային տեսակետից համապատասխան լինեն և գործեն ի լրումն ֆորմալ գործընթացի՝ համայնքի մտահոգությունները հաղորդակցելու և դրանց նկատմամբ արձագանք ստանալու համար:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն նախաձեռնել է համապատասխան քայլեր, որպեսզի երաշխավորի հաճախորդի անհամաձայնությունների լուծման գործընթացների համապատասխանությունը ԿՉ1-ի պահանջներին:

ԲՍԱԳ Խոհրդակցության գործընթացի վերահսկումը ՄՖԿ-ի կողմից

ՀԱՊԽ-ը գտնում է, որ իր բազմակի խոհրդակցական գործողություններով ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ, որպեսզի երաշխավորի շահագրգիռ կողմերի արտահայտած մտահոգությունների ընդգրկումը ԲՍԱԳ գործընթացի մեջ և դրանց ներառումը վերջնական ԲՍԱԳ-ում, մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է, որ խոհրդակցության գործընթացում բարձրացված բնապահպանական մտահոգությունները, նկատվել և հաստատագրվել են ԲՍԱԳ-ի մեջ, ինչպես ներկայացվել է VII.A.1. հատվածում:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան քայլեր նախաձեռնել է հաճախորդին վերահսկելու և ուղղորդելու համար՝ ԲՍԱԳ-ի գործընթացի շուրջը խոհրդակցությունը և շահագրգիռ կողմերի մասնակցությունը ապահովելու նպատակով:

VII. Եզրակացությունը և դիտարկումները

Այս զեկուցագիրը դիտարկում է ՄՖԿ-ի Կատարողականությունը կապված մի շարք համայնքների մտահոգությունների հետ՝ Հայաստանում Լիդիան ընկերության Ամուլսար հանքի Բ&Ս ազդեցությունների առնչությամբ:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ այդ մտահոգությունների մեծամասնությունը ենթակա է ՄՖԿ-ի կողմից համապատասխան վերահսկման: ՀԱՊԽ-ը նշում է, որը ՄՖԿ-ը օժանդակել է հաճախորդին այնպիսի ԲՍԱԳ իրականացնելու մեջ, որը հասցեագրում է հանքի ռիսկերը և պոտենցիալ ազդեցությունները, այնպիսի եղանակով, որն արտացոլում է Լավ միջազգային արդյունաբերական գործելակերպը: Սա մի նշանակալի նվաճում է անփորձ հաճախորդի համար, որն աշխատում է բարդ երկրային ենթատեքստում:

Միևնույն ժամանակ այս զեկուցագիրը ճանաչում է նախագծի նկատմամբ ՄՖԿ-ի արժեքային գնահատման և վերահսկման թերությունները:

ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից նախագծի Բ&Ս նախաներդրումային վերաքննությունը համարժեք չի եղել ռիսկին: Մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է, որ եղել է Բ&Ս ռիսկերի վաղ փորձագիտական ամփոփման պակաս և գերագնահատվել են հաճախորդի պատրաստակամությունը և կարողությունը երկրախուզական փուլում հանքարդյունաբերական նախագծերի հետ կապված Բ&Ս ռիսկերը կառավարելու մեջ: Հաշվի առնելով նախագծի բարդությունը, ճանաչված թերությունները հաճախորդի կարողությունների մեջ, և նրա մոտ Բ&Ս պատմական գրանցումների առկայության բացակայությունը, ՀԱՊԽ-ը գտնում է, որ կհամապատասխաներ ավելի մանրամասն և կառուցվածքային Բ&Ս Գործողությունների ծրագիրը:

ՄՖԿ-ի նախաներդրումային վերաքննության թերությունները այնուհետև խնդիրների վերածվեցին վերահսկման նախնական տարիների ընթացքում: ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն 2007թ. և 2013թթ ժամանակահատվածում արդյունավետորեն չի իրականացրել հաճախորդի կատարողականության վերահսկումը, որն ըստ համաձայնության պետք բավարարեր Բ&Ս պահանջներին. մասնավորապես, երկրախուզական գործողությունների համար ԲՍԿՀ մշակելու պահանջը: Նմանապես այդ ժամանակահատվածի ընթացքում ՄՖԿ-ն երաշխիքների չի ձեռք բերել առ այն, որ հաճախորդի Բ&Ս գնահատման գործընթացն իրականացվել է համաձայն ՄՖԿ-ի չափորոշիչների:

Սակայն 2013թ.-ից հետո ՀԱՊԽ-ը նշում է, որ նշանակալի առաջընթաց է եղել նախագծի նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկման մեջ: Արդյունքը եղել է հաճախորդի Բ&Ս

Կատարողականության նշանակալի բարելավումը, մասնավորապես երկրախուզական փուլի ԲՍԿՀ և միջազգային չափորոշիչներով ԲՍԱԳ մշակելու միջոցով:

Այս զեկուցագիրը նաև դիտարկում է մի շարք հատկորոշ բնապահպանական և սոցիալական մտահոգություններ, որոնք բարձրացվել են բողոքատուների կողմից:

Բնապահպանական տեսակետից այդ հարցերը ներառնում են.

- Գրունտային և մակերևութային ջրերի աղտոտման ռիսկերը
- Սեյսմիկ ռիսկերը
- Ճառագայթման ռիսկերը
- Աղտոտված փոշու տարածման ռիսկերը
- Հազվագյուտ և վտանգված տեսակների նկատմամբ ազդեցությունների ռիսկերը:

Այս հարցերից յուրաքանչյուրի առնչությամբ ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից միջազգային ԲՍԱԳ գործընթացի վերաքննությունը համարժեք է եղել ռիսկին:

Երկրաբանական հետախուզության աշխատանքների ժամանակ կենսաբազմազանության վրա նախագծի ազդեցությունների հետ կապված, սակայն, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումն անբավարար է եղել: Արդյունքում, ՄՖԿ-ն երաշխիքներ չուներ առ այն, որ հաճախորդն ունակ է եղել բավարարելու ԿՉ6-ի պահանջները կապված կրիտիկական բնակության միջավայրերի հետ: Այս ենթատեքստում, ՄՖԿ-ն դիտարկել է 2013թ., որ հաճախորդի երկրախուզական գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել ծայրահեղ վտանգված բուսատեսակի՝ *Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր,* պոպուլյացիայի Առաջին կարգի կրիտիկական բնակության միջավայրի համար:

Զեկուցագրում հասցեագրված հատկորոշ սոցիալական մտահոգությունները ներառնում էին հետևյալը.

- Հողի օտարման և կենսապահովման միջոցների վերականգնումը
- Նախագծի պոտենցիալ ազդեցությունները հարևանությամբ գտնվող Ջերմուկ առողջարանային քաղաքի բրենդի վրա
- Նախագծի ազդեցությունները Գնդեվազ գյուղի վրա
- Խորհրդակցության և մասնակցության գործընթացները, մտահոգ շահագրգիռ կողմերի համար հանրային լսումներին մասնակցելու մատչելիությունը, և բողոքների հարիր գրանցման և հասցեագրման հարցը:

Ինչ վերաբերում է հողի օտարմանը, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն հաճախորդին տվել է համապատասխան ուղղորդում՝ կապված հողի օտարման ծրագրի հետ, որը առաջնահերթությունը տալիս է բանակցված գնումներին: ՀԱՊԽ-ը նաև գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը՝ Կատարողականության չափորոշիչների պահանջների հետ համապատասխանության հիմնավոր երաշխիքներ է տվել, կապված կենսապահովման միջոցների վերականգնման պլանավորման հետ, ինչը պահանջվում է, երբ նախագծերը ֆիզիկական կամ տնտեսական տեղահանության պատճառ են դառնում:

Ջերմուկ առողջարանային քաղաքի առնչությամբ ՀԱՊԽ-ը նշում է համայնքի լավ փաստաթղթագրված մտահոգությունների մասին՝ տուրիզմի վրա նախագծի պոտենցիալ անցանկալի ազդեցությունների վերաբերյալ: Թեև Ջերմուկն ի սկզբանե չէր դիտարկվել

նախագծի ազդեցության տարածքում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան միջոցներ նախաձեռնել է երաշխավորելու համար, որ դա այդպես լինի, երբ հաճախորդը պատրաստում էր իր միջազգային ԲՍԱԳ-ը: Այնուհետև, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ ստացել է առ այն, որ Ջերմուկի վրա նախագծի հետ կապված բնապահպանական ազդեցությունների ռիսկերը ցածր են:

Ճանաչվում է, որ առողջարանային քաղաք Ջերմուկի հեղինակությունը կապակցվում է լավ առողջության կամ ինքնազգացումի, մաքուր օդի և հանգստության հետ: Նախագծի ազդեցությունները — օրինակի համար, պայթեցման աշխատանքներից, տեսողական խանգարումներից, և ավելի ընդհանուր ընկալումներից, որոնք բխում են քաղաքին հանքի մոտիկության հանգամանքից — չեն դիտարկվել որևէ գնահատման մեջ, որը դիտարկել է Ջերմուկի հեղինակությունը որպես տուրիստական կենտրոն: ՀԱՊԽ-ի զեկուցագրի պատրաստման ժամանակ, նախաձեռնվել է՝ որպես տուրիստական ուղղություն Ջերմուկի բրենդի վրա ազդեցությունների գնահատումը, միայն կապված աշխատուժի ներհոսքի հետ և ոչ ավելի լայն պոտենցիալ ազդեցությունների առնչությամբ, որոնք կապակցվում են հանքի քաղաքի մոտիկության ընկալումից: Արդյունքում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի, որ որպես տուրիստական կենտրոն Ջերմուկի բրենդի վրա պոտենցիալ ազդեցությունները գնահատվել և մեղմացվել են համաձայն ԿՉ1-ի պահանջների:

ՀԱՊԽ-ը նմանատեսակ թերություններ է գտնում ՄՖԿ-ի մոտեցման մեջ Գնդեվազ գյուղի վրա նախագծի ազդեցությունների վերահսկման առումով: Գնդեվազն այն գյուղն է, որն առավել նշանակալի ազդեցություն է կրում նախագծից, որովհետև նախագծի ենթակառուցվածքները գտնվում են գյուղի հողերի վրա և գյուղն ինքը շատ մոտ է ենթակառուցվածքներին: ՀԱՊԽ-ը թերություններ է գտել ՄՖԿ-ի կողմից ԲՍԱԳ գործընթացի վերահսկման մոտեցման մեջ՝ կապված Գնդեվազի բնակչության ռիսկերի և մտահոգությունների հետ և հանքի զարգացման միավորված ազդեցությունների պոտենցիալի հետ, որը կարող է ազդել համայնքի ընդհանուր բարօրության, ինչպես նաև որոշակի խոցելի խմբերի վրա: Այս ռիսկերը վերաբերում են սոցիալական միասնականությանը, սոցիալ-տնտեսական անհավասարությանը, և պոտենցիալ ճնշումներին և աշխատուժի ներհոսքի արդյունքում ուժեղացած առողջապահական ազդեցություններին և հրահրված աղքատությանը, հողի/կենսապահովման միջոցների կորստին, սղաճին, և ոչ տեղացի աշխատողների ներկայությունից բխող սոցիալական փոփոխությանը և նոր տնտեսական շահառուներին:

ԲՍԱԳ-ը և կառավարման ծրագրերն առանձին վերցված ընդգրկել կամ հասցեագրել են այս ազդեցություններից շատերը՝ ԱԱԳ-ի, էկոհմակարգի ծառայությունների վերաքննության, և ՀՄԿՄՎԾ-ի և այլ նախաձեռնությունների մեջ: Ի լրումն ՀԱՊԽ-ը ճանաչում է նաև պոտենցիալ դրական ազդեցությունները համայնքի համար:

Այդուհանդերձ, ՀԱՊԽ գտնում է, որ 2013թ.-ից հետո նախագծի տեխնիկական կառուցվածքի մեջ արված փոփոխությունները հանգեցրել են Գնդեվազի բնակիչների վրա հնարավոր ազդեցությունների նշանակալի աճին, ինչը պահանջում է գնահատել ռիսկերը և ազդեցությունները, հարակից խոհրդակցությամբ, մեղմացնող և մշտադիտարկման միջոցառումներով, ի լրումն նրանց, որ արդեն կան ընթացիկ ԲՍԱԳ-ի մեջ:

Կապված խոհրդակցության և շահագրգիռ կողմերի մասնակցության գործընթացների և անհամաձայնությունների լուծման մեխանիզմի կիրառման հետ, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի

նախաներդրումային վերաքննությունը համարժեք չի եղել ռիսկին: Սակայն, ՀԱՊԽ-ը նշում է, որ ՄՖԿ-ն ճանաչել է թերությունները հաճախորդի Կատարողականության մեջ իր վերահսկման ընթացքում և աշխատել է հաճախորդի հետ վերջինիս համապատասխանության բերելու համար:

Այս զեկուցագրում պարունակվող բացահայտումների լույսի ներքո, ՀԱՊԽ-ն բաց կպահի այս հետաքննությունը մշտադիտարկման համար, և կթողարկի մի մշտադիտարկման զեկուցագիր ոչ ուշ քան այս հետաքննության հրապարակումից մեկ տարի անց: ՀԱՊԽ-ը կմշտադիտարկի իրավիճակը մինչև ՄՖԿ-ի կողմից նախաձեռնված գործողությունները համոզեն ՀԱՊԽ-ին, որ ՄՖԿ-ն հասցեագրեում է անհամապատասխանության իր բացահայտումները:

Հավելված A. ՄՖԿ-ի ներդրումները Լիդիան Ինթերնեշնլ Լթդ. ընկերության մեջ

Ներդրումի ամսա/տարեթիվը	Արժույթը	Ինքնարժեքը տեղական արժույթով (միլիոններով)	Ինքնարժեքը ԱՄՆ դոլարով (միլիոններով)
Օգոստոս-07	£	1.000	2.024
Նոյեմբեր-07	£	0.037	0.078
Դեկտեմբեր-07	Can$	1.250	1.242
Մայիս-09	Can$	1.391	1.183
Հունվար-10	£	0.047	0.075
Ապրիլ-10	Can$	1.779	1.772
Սեպտեմբեր-10	Can$	0.400	0.389
Նոյեմբեր -10	Can$	3.253	3.188
Դեկտեմբեր-11	£	1.250	1.952
Մարտ-13	Can$	1.954	1.901
Մարտ-14	Can$	1.731	1.543
Մարտ-15	Can$	1.363	1.084
Ընդհանուր ներդրումները			**16.430**

Ծանոթագրություն. Ընկերությունը ի սկզբանե գրանցված է եղել Լոնդոնի Արժեթղթերի Բորսայում / London Stock Exchange: Ուստի նախնական ներդրումները, ինչպես և դրանց հետ կապված երաշխիքային ֆինանսական գործիքները եղել են Բրիտանական ֆունտով (£): Միացյալ Թագավորությունից Կանադա տեղափոխվելուց հետո ընկերության բաժնետոմսերի որոշ մասը գրանցվեց Տորոնտոյի Բորսայում / Toronto Stock Exchange, և ուստի դրանից հետո եղած ներդրումները և համապատասխան երաշխիքային ֆինանսական գործիքները եղան Կանադական դոլարով (Can$): Այս աղյուսակը ցույց է տալիս փաստացի դրամական ինքնարժեքները երկուստեք տեղական շրջանառության արժույթով (£ կամ Can$) և ԱՄՆ դոլարով:

Հավելված B. ՀԱՊԽ-ի Հետաքննության տեխնիկատնտեսական լիազորությունները

Հունվար 8, 2016թ.

… ՀԱՊԽ-ի համապատասխանության գործընթացի կիզակետը ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ներդրումի արժեքային գնահատման և վերահսկման վրա է, և անկախ այն բանից արդյոք ՄՖԿ/ԲՆԵԳ-ը համապատասխանում է իր սեփական քաղաքականության դրույթներին թե ոչ՝ արվում է իր իսկ ներդրումների Բնապահպանական և սոցիալական կատարողականության մեջ համոզվելու համար: ՀԱՊԽ-ը համապատասխանության հետաքննություն չի նախաձեռնում ՄՖԿ/ԲՆԵԳ-ի հաճախորդի նկատմամբ:

ՀԱՊԽ հրապարակել է համապատասխանության հետաքննության իր բացահայտումները՝ հետաքննության զեկուցագրում, որպեսզի տեղեկացնի Համաշխարհային Բանկի Խմբի Նախագահին և Խորհրդին, ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ավագ ղեկավարությանը, և հանրությանը իր որոշումների և դրանց հիմնավորման մասին…

Համապատասխանության հետաքննության շրջանակները

Իր 2015թ. արժեքային գնահատման զեկուցագրերում, կապված Լիդիան ընկերություն, թիվ-01[136] և Լիդիան ընկերություն, թիվ -02[137] բողոքների հետ, ՀԱՊԽ-ը գտել է, որ այս նախագծի որոշ կողմերի վերաքննությունը, որոնք կապված են հանքարդյունաբերության մեջ վաղ բաժնետիրական կապիտալի ներդրումի բնույթի հետ, կարող են ավելի լավ իրազեկել այս նախագծի, ինչպես նաև ապագա նախագծերի իրականացման քաղաքականությունների մասին:

Այս ենթատեքստում, ՀԱՊԽ որոշել է միասին դիտարկել երկուստեք Լիդիան ընկերություն, թիվ -01 և Լիդիան ընկերություն, թիվ -02 բողոքների բարձրացրած հարցերը: Ուստի երկու գործերը միավորվեցին այս համապատասխանության հետաքննության նպատակով:

Հաշվի առնելով ՀԱՊԽ-ի մանդատը, ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննության կիզակետն ուղղված է ՄՖԿ-ի վրա, և այն բանի վրա, թե ինչպես է ՄՖԿ-ն արժեքային գնահատման և վերահսկողության ժամանակ երաշխիքներ ստանում իր ներդրումի Բնապահպանական և սոցիալական կատարողականության մասին:

Համապատասխանության հետաքննության մոտեցումը նկարագրված է ՀԱՊԽ–ի Աշխատանքային ուղեցույցներում (մարտ, 2013թ.),[138] և այսպես է ձևակերպում ՀԱՊԽ-ի կողմից որդեգրված համապատասխանության հետաքննության աշխատանքային սահմանումը.

> *Հետաքննությունը դա փաստարկների օբյեկտիվորեն ստացման և գնահատման համակարգված, փաստաթղթագրված վավերացման գործընթացն է, որը կոչված է որոշել՝ արդյոք Բնապահպանական և սոցիալական գործունեության, պայմանների և*

[136] ՀԽՊ Համապատասխանության գնահատման զեկուցագիր, Լիդիան-01, Ապրիլ, 2015թ. http://goo.gl/GWpgZm.
[137] ՀԽՊ Համապատասխանության գնահատման զեկուցագիր, Լիդիան-02, Ապրիլ, 2015թ. http://goo.gl/ddr6fv.
[138] ՀԽՊ Աշխատանքային ուղեցույցներ, 2013. http://goo.gl/Hc46c8.

դրանց կառավարման համակարգերը, կամ դրանց վերաբերող տեղեկույթը համատեղելի են համապատասխանության հետաքննության չափանիշների հետ։.

Ինչպես հատկանշված է ՀԱՊԽ-ի արժեքային գնահատման զեկուցագրերում, ՀԱՊԽ-ը կիրականացնի հաճախորդի նախագծի մեջ ՄՖԿ-ի ներդրումի համապատասխանության հետաքննությունը՝ կապված այն հարցերի հետ, որոնք բարձրացված են բողոքում: Համապատասխանության հետաքննություն իրականացնելու որոշում ընդունելով, ՀԱՊԽ-ն նշել է, որ ՄՖԿ-ն միչն օչս միայն ֆինանսավորել է այն գործունեությունը, որը նախապատրաստական է եղել հանքի շինարարության համար, և որ հանքի շինարարությունը ֆինանասավորելու մասին ոչ մի որոշում չի ընդունվել: Այդուհանդերձ, ՀԱՊԽ-ը նշել է, որ ՄՖԿ-ի ներդրումները ընկերության մեջ հստակ նպատակ են ունեցել իրականալի դարձնել հանքի շինարարությունը: ՀԱՊԽ-ի համապատասխանության արժեքային գնահատումների հրապարակումից հետո, համաձայնություններ են ձեռք բերվել հանքի շինարարության ֆինանսավորման մասին:

ՄՖԿ-ի Բ&Ս քաղաքականությունների, Կատարողականության չափորոշիչների և ընթացակարգերի ենթատեքստում ՀԱՊԽ-ը նույնականացրել է ներդրումի հետ կապված հետևյալ հատկորոշ հարցերը.

- Արդյոք իր նախաներդրումային վերաքննության արդյունքում նախագծի համար ՄՖԿ-ի տված սահմանումը համարժեք է եղել նախագծի Բ&Ս ռիսկերի և ազդեցությունների մակարդակի հետ:
- Արդյոք այս ներդրումի կառուցվածքում ադեկվատորեն դիտարկվել են նախագծի պոտենցիալ երկարաժամկետ Բ&Ս ռիսկերի ազդեցությունները և ժամանակի ընթացքում ռիսկային պրոֆիլի փոփոխման հնարավորությունը:
- Արդյոք ՄՖԿ-ի վերահսկումը նախագծի փոփոխվող ռիսկային պրոֆիլի նկատմամբ ադեկվատ է եղել:

Համապատասխանության հետաքննության շրջանակը ներառնում է նաև ՀԱՊԽ-ի կողմից անհամապատասխանության ճանաչման անմիջական և հիմնավորող պատճառների ընկալման զարգացումը…[139]

[139] Լիազորության սահմանների ամբողջական նկարագրությունը կա ՀԽՊ-ի վեբկայքում: http://goo.gl/7zW4pg.

Հավելված C. Նախագծի ժամանակացույցը

Տարեթիվը	Առաջընթացի փուլերը, Իրադարձությունները և Փաստաթղթերը
2006	
--	Ամուլսարի երկրաբանական հետախուզության աշխատանքների արտոնագրի տրամադրումը
2007	
Մայիս	ՄՖԿ-ն նախնական ներդրումից առաջ գնահատման այցելություն կատարեց տեղանքներում (Կոսովոյի տեղանքները և Ամուլսարի տեղանքը)
	Հանրային հրապարակում (ԲՍՎԱ և ԱՆԱ)
Հունիս	ՄՖԿ Ներդրումային վերաքննության ժողովը
	Խորհրդի հավանությունը – Նախագիծ #25924
Օգոստոս	Առաջին վճարումը
Նոյեմբեր	Լրացուցիչ ներդրում
Դեկտեմբեր	Լրացուցիչ ներդրում
2008	
Հունվար	Լիդիան ընկերությունը, գրանցվեց Տորոնտոյի արժեթղթերի բորսայում /TSX Main Board
Հունիս	ՄՖԿ-ն կատարեց իր առաջին վերահսկողական այցելությունը տեղանքում
2009	
Հունվար	ԲՍԳԾ-ն արդիականացվեց
	ՄՖԿ-ի Ներդրումի վերաքննության ժողովը - Նախագիծ #27657
Մարտ	Հանրային հրապարակում (ԲՍՎԱ և ԱՆԱ)
	Խորհրդի հավանությունը – Նախագիծ #27657
Մայիսին	Լրացուցիչ ներդրում – Նախագիծ #27657
Օգոստոս	ՄՖԿ-ի վերահսկողական այցելությունը տեղանքում
	ԲՍԳԾ արդիականացվեց – վերջնաժամկետները հետաձգվեցին
2010	
Հունվար	Լրացուցիչ ներդրում
Ապրիլ	Լրացուցիչ ներդրում
	Կոսովոյի նախագիծը դադարեցվեց: Լիդիան ընկերությունը գնեց Նյումոնթի շահաբաժինը Հայաստանյան համատեղ ձեռնարկության մեջ
Մայիս	ԲՍԱԳ-ի Համեմատական վերլուծությունը իրականացվեց միջազգային խորհրդատուի կողմից

Սեպտեմբեր	Լրացուցիչ ներդրում
Նոյեմբեր	ԲՍԳԾ-ը արդիականացվեց
	ՄՖԿ-ի վերահսկողական այցելությունը տեղանքում
	Լրացուցիչ ներդրում
2011	
Օգոստոս	Թողարկվեցին նախագծի նախա-տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության համար արված ուսումնասիրությունները
Հոկտեմբեր	ՄՖԿ-ի վերահսկողական այցելությունը տեղանքում
Դեկտեմբեր	Լրացուցիչ ներդրում
2012	
--	Լիդիան ընկերությունը, 100% սեփականություն ձեռք բերեց Ամուլսար Գոլդ Փրոջեքտ նախագծի նկատմամբ
Սեպտեմբեր	Առաջին տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության թողարկումը
2013	
Մարտ	Լրացուցիչ ներդրում
Հունիս	ՄՖԿ-ի վերահսկողական այցելությունը տեղանքում
Հուլիս	ՄՖԿ-ի նամակը Լիդիանի ղեկավարությանը թույլ Բ&Ս կատարողականության կապակցությամբ
2014	
Մարտ	Լրացուցիչ ներդրում
Ապրիլ	Առաջին բողոքը ներկայացվեց ՀԱՊԽ-ին Գնդեվազի և Ջերմուկի 2 բնակիչների կողմից, 9 ազգային ՀԿ-ների օժանդակությամբ
Հուլիս	Երկրորդ բողոքը ներկայացվեց ՀԱՊԽ-ին Գնդեվազի 150 բնակիչների կողմից
Հոկտեմբեր	Թողարկվեց արդիականացված տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծությունը
	ՄՖԿ-ի վերահսկողական այցելությունը տեղանքում
Նոյեմբեր	Հաստատվեցին Ամուլսարի նախագծի հանքարդյունաբերական իրավունքները
2015	
Մարտ	Լրացուցիչ ներդրում
Ապրիլ	ՀԱՊԽ հրապարակեց Լիդիան ընկերության թիվ 01 բողոքի գնահատման զեկուցագիրը
Մայիս	Լիդիան ընկերությունը հրապարակեց Ամուլսարի ԲՍԱԳ-ը, տ.9
Հոկտեմբեր	ՄՖԿ-ի վերահսկողական / գնահատման այցելությունը տեղանքում
	ՀԱՊԽ հրապարակեց Լիդիան ընկերության թիվ 02 բողոքի գնահատման զեկուցագիրը
Նոյեմբեր	Լիդիան ընկերությունը ավարտեց տեխնիկատնտեսական նախահաշվի պատրաստման գործընթացը

Դեկտեմբեր	Լիդիան ընկերությունը հայտարարեց, որ համաձայնություն է ձեռք բերել Ամուլսար ոսկու հանքի շինարարության համար $325 միլիոն դոլար ֆինանսավորման փաթեթի մասին (Orion and Resource Capital Funds)
2016	
Մայիս	Լիդիան ընկերությունը հրապարակեց Ամուլսարի արդիականացված ԲՍԱԳ-ը (տ.10)
	Ավարտվեց ԲՍԱԳ-ի վերաքննումը ԱԲՍԽ-ի կողմից
Հունիս	Հայաստանի կառավարությունը հաստատեց հանքարդյունաբերական իրավունների մեջ արված փոփոխությունները
	Լիդիան ընկերությունը պաշտոնապես հայտարարեց Ամուլսարի շինարարության որոշման մասին
Հուլիս	ՄՖԿ հրապարակեց ԱՆԱ և ԲՍՎԱ (Նախագիծ #37084)
Հոկտեմբեր	Լիդիան ընկերությունը սկսեց Ամուլսարում տեղանքի հողային աշխատանքները

Հավելված D. ՀԱՊԽ-ի բացահայտումների ամփոփումը

ՄՖԿ-ի գնահատումը և վերահսկումը	
Բ&Ս նախաներդրումային վերաքննությունը	<u>ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը չի բավարարել ռիսկի համարժեքության չափորոշիչին:</u> Հաճախորդից Բ&Ս տեղեկույթի և ՄՖԿ-ի Բ&Ս մասնագետի կողմից տեղում այցելության բացակայության պայմաններում, տեղին կլիներ Ամուլսարում Բ&Ս ռիսկերի փորձագիտական ամփոփումը: ՀԱՊԽ նաև նշում է, որ ՄՖԿ-ն գերագնահատել է հաճախորդի ղեկավարության պատրաստակամության հայտարարությունները: Հաշվի առնելով նախագծի բարդությունը, հաճախորդի կարողությունների մեջ ճանաչված թերությունները, և նրա մոտ Բ&Ս տեղեկությունների պատմական գրանցման պակասը, համապատասխան կլիներ ավելի մանրամասն և կառուցվածքային Գործողությունների ծրագիրը:
	<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը չի համապատասխանել Կայունության քաղաքականության պահանջներին (2006թ/) պարբ. 17:</u> ՄՖԿ-ի Բ&Ս նախաներդրումային վերաքննության մեջ տեղ գտած թերությունների արդյունքում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն բավարար հիմքեր չի ունեցել եզրակացնելու, որ ընկերությունը ի վիճակի կլինի համապատասխանել ՄՖԿ-ի բոլոր պահանջներին մինչև 2008թ., ինչպես ներկայացված է եղել Խորհրդին:
	<u>ՄՖԿ-ի նախնական ներդրումի ենթատեքստում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ նախագծին “B” կատեգորիա տալը համապատասխան է եղել:</u>
Վերահսկումը	<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի երկրախուզական գործողությունների վերահսկումը 2007–13թթ. ժամանակահատվածի ընթացքում համապատասխանության երաշխիքներ չի տվել: Այդ ժամանակահատվածի ընթացքում նախագծի մեջ լրացուցիչ ներդրումներ կատարելու ՄՖԿ-ի պատրաստակամությունը անհամատեղելի է եղել Կայունության քաղաքականության այն պահանջի հետ, որով ՄՖԿ-ն պետք է ուղղիչ միջոցներ դիտարկի ի պատասխան ընթացիկ անհամապատասխանությունների:</u> ՄՖԿ-ն արդյունավետորեն չի վերահսկել հաճախորդի կողմից մի քանի կրիտիկապես կարևոր ԲՍԳԾ պահանջների կատարումը 2007–13թթ: ընթացքում: Մասնավորապես, երկրախուզական գործողությունների համար ԲՍԿՀ մշակելու և անկախ ԱԱԲՀ աուդիտներ իրականացնելու պահանջները: Այս ժամանակահատվածի ընթացում նախագծի նկատմամբ ՄՖԿ-ի կողմից վերահսկման թերությունները նպաստեցին երկրաբանական հետախուզության աշխատանքների ընթացքում տեղ գտած անցանկալի ազդեցություններին: Եվ միայն 2013թ. ՄՖԿ-ն հստակեցրեց ընկերության առաջ, որ հետագա ներդրումները կախված են լինելու երկրախուզական փուլի գործունեության համար համապատասխան ԲՍԿՀ մշակելու նախապայմանից:
	ՄՖԿ-ի կողմից նախագծի վերահսկումը նշանակալիորեն բարելավվեց 2013թ.-ից հետո: Արդյունքը եղավ հաճախորդի Բ&Ս Կատարողականության մակարդակի հստակ բարելավումը, մասնավորապես, երկրախուզական փուլի ԲՍԿՀ մշակելու միջոցով: ՀԱՊԽ գտնում է, որ այդ պահից ի վեր, հաճախորդի երկրախուզական

	գործողությունների նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկումը տվել է համապատասխանության աղեկվատ երաշխիքներ:
Բնապահպանական հարցերը	
Գրունտային ջրերի աղտոտման հատկորոշ ռիսկերը, որոնք կարող են ազդել Ջերմուկի “առողջարանային” ջրերի (թերմալ աղբյուրների) վրա, և աղտոտման ուժեղացած ռիսկը հանքափոսերից և այլ պայթեցման գործողություններից առաջացած գրունտային ճաքերի պատճառով	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված գրունտային ջրերի պոտենցիալ աղտոտման հետ, համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրում համապատասխան կետերի զարգացմանը:
Ջրի աղտոտման ռիսկերը Վորոտան և Արփա գետերի, Կեչուտ և Վորոտան ջրամբարների, ինչպես նաև Սևանա լճի ջրաբաժանի ավազաններում կատարվող հանքահանության գործողությունների պատճառով	ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը կապված ջրերի պոտենցիալ աղտոտման հարցերի հետ համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը:
Կույտային տարալվացման հարթակին (ԿՏՀ) սպառնացող սեյսմիկ ռիսկերը:	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված պոտենցիալ սեյսմիկ ռիսկերի հետ համարժեք է ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը:
Հանքահանված ապարների մեջ ուրանի ներկայության հավանականությունից բխող պոտենցիալ ռիսկերը, որոնք կարող են լայնածավալ ճառագայթային աղտոտման պատճառ դառնալ և լրացուցիչ ճառագայթման ռիսկերը ռադոնից:	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն ճառագայթային աղտոտման հետ կապված կատարել է համապատասխան քայլեր՝ ԲՍԱԳ գործընթացը վերահսկելու համար:
Գյուղատնտեսական հողերի և Գնդեվազ գյուղի վրա աղտոտված փոշու տարածման ռիսկերը կախված քամիների գերակշռող ուղղությունից:	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված աղտոտված փոշու տարածման պոտենցիալ ազդեցությունների հետ համարժեք է ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը:
Կենսաբազմազանությունը և Հայաստանի “Կարմիր գրքում” գրանցված բուսական և	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից կենսաբազմազանության առնչությամբ 2007թ.–13թթ. ընթացքում նախագծի ռիսկերի վերաքննությունը և վերահսկումը անբավարար են եղել:

կենդանական տեսակների ներկայությունը:	ՄՖԿ-ն երաշխիքներ չուներ առ այն, որ հաճախորդը կարողություն ուներ կրիտիկական բնակության միջավայրերի առնչությամբ ԿՉ6-ի պահանջները բավարարելու համար: Հայաստանի բնապահպանական թույլատվության գործընթացին օգնելու համար նախաձեռնված մեկնարկագծային ուսումնասիրությունները չբավարարեցին միջազգային որակի ԲՍԱԳ-ի կարիքներին: Դա ուղղվեց 2010թ. վերջին միջազգային ԲՍԱԳ-ի խորհրդատուների մասնակցության շնորհիվ, ինչից հետո միայն մեծապես ակնհայտ դարձավ կենսաբազմազանության վրա ազդեցությունների նշանակությունը, ներառյալ նաև երկրաբանական հետախուզության աշխատանքների ժամանակ:. Այս ենթատեքստում, ՄՖԿ-ն դիտարկել է, որ 2013թ. հաճախորդի երկրախուզական գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել՝ ծայրահեղ վտանգված, Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր, բուսատեսակի պոպուլյացիայի 1-ին կարգի կրիտիկական բնակության միջավայրի համար:
	ՀԱՊԽ-ը գտնում է, որ 2013թ,-ից հետո ժամանակահատվածում ՄՖԿ-ի վերահսկումը համարժեք է եղել ռիսկին և հանգեցրել է Գործողությունների ծրագրում համապատասխան դրույթների զարգացմանը, որոնք նախագծված են կենսաբազմազանության վրա նախագծի պոտենցիալ ազդեցությունները նվազագույնի հասցնելու, մեղմացնելու և փոխհատուցելու համար, ինչպես պահանջվում է Կատարողականության չափորոշիչներով:
	Երբ վտանգված տեսակների վրա ազդեցությունները ճանաչվեցին, ՄՖԿ-ն արձագանքեց կենսաբազմազանության գնահատումների և Գործողությունների ծրագրերի պահանջով, ինչը պահանջվում է ԲՍԱ-ի գործընթացի մաս հանդիսացող ԿՉ6-ով:

Սոցիալական հարցերը	
Հողի օտարման և կենսապահովման միջոցների վերականգնումը	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ տվեց ԿՉ5-ի հիմնական պահանջները բավարարելու համար: ՄՖԿ-ն աշխատեց հաճախորդի հետ՝ հողի օտարման մոտեցման մեջ գործընթացի սկզբում ճանաչված հաճախորդի թերությունները հասցեագրելու ուղղությամբ, կենտրոնանալով այնպիսի արդյունքների վրա, որոնք համատեղելի են ԿՉ5-ի նպատակների հետ:
	ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ տվեց ԿՉ5-ի խոհրդակցության և հրապարակման պահանջների հետ: ՄՖԿ-ն ճանաչեց ավելի ուժեղ խոհրդակցության կարիքը 2013 և 2014թթ., ներառյալ հողի օտարման կապակցությամբ: ՄՖԿ-ն աշխատեց հաճախորդի հետ այս հարցերը իր վերահսկման մեջ հասցեագրելու ուղղությամբ, ներառյալ հողի օտարման գործընթացի նկատմամբ անկախ աուդիտի միջոցով, որն իրականացվեց 2015թ., և եզրակացրեց, որ խոհրդակցության և հրապարակման պահանջները բավարարվել են:
Ազդեցությունները Ջերմուկի տուրիզմի վրա	ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից ԲՍԱԳ գործընթացի վերահսկումը կապված Ջերմուկի, որպես առողջարանային քաղաք բրենդի, վրա նախագծի պոտենցիալ ազդեցության հետ, համարժեք չի եղել ռիսկին: Ընդունվել է, որ քաղաքի ընկալման վրա անցանկալի ազդեցությունները կարող են հանգեցնել քաղաքի տուրիստական այցելուների թվի կրճատմանը: Այս ենթատեքստում, պահանջվում էր նախագծի ազդեցության վերլուծությունը տուրիզմի վրա: Թեև Ջերմուկը ի սկզբանե չէր դիտարկվում որպես նախագծի ազդեցության տարածքի մասը, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան միջոցներ է ձեռնարկել երաշխավորելու համար, որ դա այդպես լինի հաճախորդի կողմից միջազգային ԲՍԱԳ-ի պատրաստման ժամանակ: Սակայն, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի առ այն, որ ազդեցությունները, որոնք կարող են ազդել Ջերմուկի բրենդի վրա, որպես տուրիստական կենտրոնի — ինչպես օրինակ պայթյունների աղմուկը, տեսողական խանգարումները, և ավելի ընդհանուր ընկալումները, որոնք բխում են քաղաքին նախագծի մոտիկության հանգամանքից — համապատասխանաբար գնահատվել են
Գնդեվազ գյուղի վրա ազդեցությունների գնահատման համապատասխանությունը	<u>ՀԱՊԽ-ն գտնում է, որ ՄՖԿ-ին պակասում են երաշխիքները առ այն, որ նախագծի ազդեցությունները Գնդեվազի համայնքի վրա ենթարկվել են ինտեգրված գնահատման, որը դիտարկել է “բոլոր կապակցված Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները”, ինչպես պահանջվում է ԿՉ1-ով: Սա մեղմացման ծրագրերի զարգացման նախապայմանն է, ինչպես պահանջվում է ԿՉ1-ով.</u> ՀԱՊԽ-ը թերություններ է գտնում ԲՍԱԳ-ի գործընթացը վերահսկելու ՄՖԿ-ի մոտեցման մեջ՝ Գնդեվազի բնակչության ռիսկերի և մտահոգությունների և ընդհանրապես հանքի

	զարգացման պոտենցիալ միավորված ազդեցությունների նկատմամբ, համայնքի առողջության/լավ ինքնազգացումի և դիմադրողականության առնչությամբ: ԲՍԱԳ-ը և կառավարման ծրագրերը առանձին վերցված դիտարկել կամ հասցեագրել են այս ազդեցություններից շատերը, և ԱԱԳ-ը, Էկոհամակարգային ծառայությունների վերաքննությունը, և ՀՄԿՄՎԾ-ը, ուրիշների թվում, ճանաչվել են, որպես բարձր միջազգային ստանդարտներին համապատասխանող: Ի լրումն, ՀԱՊԽ-ը ճանաչում է համայնքի համար պոտենցիալ դրական ազդեցությունները: Այդուհանդերձ, ՀԱՊԽ-ը գտնում է, որ նախագծի տեխնիկական կառուցվածքի փոփոխությունը 2013թ.-ից հետո հանգեցրել է Գնդեվազի բնակիչների վրա պոտենցիալ ազդեցությունների նշանակալի աճին: Այս փոփոխությունները պահանջում են քաղաքի և նրա բնակիչների վրա նախագծի տարբեր բաղադրիչների միավորված կամ կումուլատիվ ռիսկերը և ազդեցությունների գնահատումը — դրա հետ կապակցված խոհրդակցությամբ, մեղմացման և մշտադիտարկման միջոցառումներով, ի լրումն նրանց, որոնք կան ընթացիկ ԲՍԱԳ-ում: ՀԱՊԽ-ը նաև թերություններ է գտնում ՄՖԿ-ի ուղղորդման մեջ կապված Կատարողականության չափորոշիչների հետ, այն առումով, որ դա մանրամասն չի խոսում այն մասին, թե ինչպես պետք է երաշխավորել, որ մի ամբողջական և ինտեգրված գնահատում նախաձեռնվի նախագծի միավորված կամ կումուլատիվ սոցիալական ազդեցությունների նկատմամբ:
Խոհրդակցության և մասնակցության գործընթացների համապատասխանությունը, հանրային լսումներին մտահոգ շահագրգիռ կողմերի մասնակցության մատչելիությունը, և մտահոգությունները, առ այն արդյոք բողոքները համապատասխանաբար են գրանցվել կամ հասցեագրվել	<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից խոհրդակցության հետ կապված նախաներդրումային վերաքննության հարցերի գնահատումը համարժեք չի եղել ռիսկին:</u> ՄՖԿ-ն չի մտցրել ԲՍԳԾ-ի մեջ բավարար պահանջներ (վերջնաժամկետներ, համապատասխան փորձագիտության կարիք, փաստաթղթեր, և զեկուցագրեր), որպեսզի երաշխավորի ՀԽՀԾ-ի իրականցման համատեղելիությունը ԿՉ1-ի պահանջների հետ:
	<u>ՀԱՊԽ-ը այսպիսով գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխանել է հաճախորդի համայնքային մասնակցության և խոհրդակցության գործունեության առնչությամբ իր վերահսկման պահանջներին:</u> Սակայն, ՄՖԿ-ն ճանաչեց հաճախորդի Կատարողականության թերությունները իր վերահսկման ընթացքում և աշխատեց հաճախորդի հետ նրան համապատասխանության բերելու համար: Այս ենթատեքստում, ՀԱՊԽ-ը նշում է, ՄՖԿ-ի դերը հաճախորդի խոհրդակցական գործունեությունը ընդլայնելու կարիքը շեշտադրելու մեջ: ՀԱՊԽ-ը նաև նշում է, ՄՖԿ-ի դերը շրջանառվող

	տեղեկատվության որակի մասին հարցեր բարձրացնելու մեջ և արտաքին օժանդակություն օգտագործելու միջոցով կարողությունների բարելավում պարտադրելու մեջ:
	<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն կատարել է ադեկվատ քայլեր հաճախորդի անհամաձայնությունների լուծման գործընթացների համապատասխանությունը ԿՉ1-ի պահանջների հետ երաշխավորելու համար:</u> Թեև ՀԱՊԽ-ը նշում է, որ ՄՖԿ-ն պետք է ավելի պրոակտիվ լիներ, որպեսզի դրանով երաշխավորեր բոլոր հեռանկարների ներգրավումը և արձագանքը բոլոր հեռանկարներին, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը ցուցադրեց ՄՖԿ-ի բացթողումը ընկերության անհամաձայնությունների լուծման մեխանիզմի համապատասխանության նկատմամբ, երբ ՀԿՀ-ներ ստեղծվեցին և ՀԿՊ վարձվեց: ՄՖԿ-ն խորհրդատվություն տվեց հաճախորդին կապված ՀԿՊ-ի գործառույթի հետ և երաշխավորեց, որ ՀԿՀ-ները արդյունավետ մեխանիզմ լինեն, որպեսզի մշակութային տեսակետից համապատասխանեն և գործեն ի լրումն ֆորմալ գործընթացի:
	<u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան քայլեր նախաձեռնել է հաճախորդին վերահսկելու և ուղղորդելու համար՝ ԲՍԱԳ-ի գործընթացի շուրջը խոհրդակցությունը և շահագրգիռ կողմերի մասնակցությունը ապահովելու նպատակով:</u> ՀԱՊԽ գտնում է, որ իր բազմակի խոհրդակցական գործողություններով ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ, որպեսզի երաշխավորի շահագրգիռ կողմերի արտահայտած մտահոգությունների ընդգրկումը ԲՍԱԳ գործընթացի մեջ և դրանց ներառումը վերջնական ԲՍԱԳ-ում, մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է, որ խոհրդակցության գործընթացում բարձրացված բնապահպանական մտահոգությունները, նկատվել և հասցեագրվել են ԲՍԱԳ-ի մեջ, ինչպես ներկայացվեց VII.A.1. հատվածում: